ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

09 հոկտեմբերի 2023 թ.

**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

**ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Սիմոնյան,

Ղեկավարվելով ՀՀ սահմանադրության 109-րդ և «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 65-րդ և 67-րդ հոդվածներով, օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ եմ ներկայացնում «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, «Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին, «Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին, «Ինկասացիայի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին, «Բնապահպանական վերահսկողության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին, «Քրեակատարողական ծառայության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին, «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին, «Ավիացիայի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին, «Երկաթուղային տրանսպորտի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին, «Դատախազության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին, «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին, «Որսի և որսորդական տնտեսության վարման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին, «Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին, «Լիցենզավորման մասին» օրենքում

փոփոխություն կատարելու մասին, «Ոստիկանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին, «Փոստային կապի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին նախագծերի փաթեթը:

ՀՀ Ազգային ժողովի աշխատակարգի 25-րդ կետի համաձայն գրությանը կցվում են՝

1. օրենքների նախագծերի փաթեթը,

2. օրենքների նախագծերի փաթեթի ընդունման հիմնավորումը:

Խնդրում եմ օրենքների նախագծերի փաթեթը սահմանված կարգով դնել շրջանառության:

Հարգանքով՝ Վիլեն Գաբրիելյան

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԶԵՆՔԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ԻՆԿԱՍԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ԱՎԻԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ՈՐՍԻ ԵՎ ՈՐՍՈՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Օրենսդրական նախաձեռնության խնդիրները և նպատակները.

2022 թ. հոկտեմբերի 5-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեց, իսկ 2022 թ. հոկտեմբերի 26-ին ՀՀ Նախագահի կողմից ստորագրվեց «Զենքի շրջանառության կարգավորման» մասին օրենքը, որը նախատեսվում է պաշտոնապես ուժի մեջ է մտնել 2023 թ. հունիսի 1-ից և իրենից ներկայացնում է հասարակական հարաբերությունների կարգավորման և անվտանգային համակարգի զարգացման կարևոր ձեռքբերումներից մեկը։

2022 թ. դեկտեմբերի 30-ին ՀՀ վարչապետի N 1562-Ա որոշմամբ հաստատվեց «Զենքի շրջանառության կարգավորման մասին» եվ «լիցենզավորման մասին» օրենքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին» օրենքների կիրառումն ապահովող միջոցառումները, որտեղ Օրենսդիրը աշխատանքային

կարգով աջակցեց այդ միջոցառումներին: Այդ ընթացքում և օրենքն ուժի մեջ մտնելուց հետո, կրկին խորքային ուսումնասիրվեցին նոր օրենսդրության մի շարք դրույթները, որոնք, ըստ էության, կարող են որոշակի խոչընդոտներ ստեղծել նոր օրենքի կիրառման ընթացքում և Օրենսդիրը նախաձեռնեց նոր օրենսդրությունը լավարկելու նպատակով հանդես գալ օրենսդրական նախաձեռնությամբ:

Առաջարկվող օրենսդրական փոփոխությունների հիմնական նպատակը հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում զենքի շրջանառության կապակցությամբ ծագող հարաբերությունները, որոնք ուղղված են քաղաքացու ինքնապաշտպանության իրավունքի օրենսդրական կարգավորմանը՝ պատշաճ պաշտպանական միջոցների հասանելիության միջոցով, սեփականության իրավունքի, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից քաղաքացիական զենքի օգտագործման պայմանների իրավական կարգավորումը:

Օրենդրական փոփոխությունները պետք է կանոնակարգեն նոր ստեղծվող իրավահարաբերությունները քաղաքացիական զենքի շրջանառության ոլորտում, կարգավորեն և ներդնեն նոր իրավահարաբերություններ, որոնք ուղղված են տնտեսության, սպորտի և հրաձգության զարգացման, հնարավոր կոռուպցիոն ռիսկերի հաղթահարման, ինքնապաշտպանության և անօրինական զենքի քանակի նվազեցման և ստվերային շրջանառությունից աստիճանաբար դուրս բերմանը:

## 2. Օրենքի ընդհանուր նկարագիրը և առանցքային դրույթները

Նախագծում առաջին փոփոխությունը վերաբերում է «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքի (այսուհետ՝ օրենք) 2-րդ հոդվածին, որտեղ կարգավորվել են որոշ հիմնական հասկացությունների բացատրությունները և լրացվել են նորերը, մասնավորապես՝ ռազմական նշանակության արտադրանք, ողորկափող հրազեն, ակոսափող հրազեն:

Օրենքի 5-րդ հոդվածը ներկայացնում է «ծառայողական զենքի»-ի հետ կապված իրավահարաբերությունները: Հաշվի առնելով, որ ծառայողական զենքը տարբերվում է մարտական և քաղաքացիական զենքից ընդամենը փամփուշտների տարբերությամբ, նպատակահարմար է զտնվել ծառայողական զենք հանդիսացող կարճ-ակոսափող հրազենը, որը զուրկ է կրակահերթով կրակելու հնարավորությունից դարձնել քաղաքացիական նշանակության զենք, սակայն այն նույն սահմանափակումներով, որը որ նախատեսված էր ծառայողական զենքի համար: Դրանով է նաև պայմանավորված օրենքի 3-րդ հոդվածի փոփոխությունը, որով առաջարկվում է զենքը բաժանել 2 տեսակի՝ քաղաքացիական և մարտական:

Գործող օրենքով ծառայողական զենք (նոր կարգավորմամբ՝ քաղաքացիական կարճ ակոսափող հրազեն) ձեռք բերելու իրավունք ունի 20 տարվա զինվորական ստաժ ունեցող և առնվազն «գնդապետ» զինվորական կոչում ունեցող գործող կամ պահեստազորի սպան: Նոր կարգավորմամբ առաջարկվում է «գնդապետ»

զինվորական կոչումը մեկ աստիճանով իջեցնել և հնարավորություն ընձեռել նաև «փոխգնդապետ» զինվորական կոչում ունեցողներին՝ հաշվի առնելով նրանց երկարամյա ծառայության փորձը և զենքի հետ վարվելու ունակությունները և պատասխանատվությունը:

Օրենքի 6-րդ մասի 1-ին մասը սահմանում է մարտական զենքի հասկացությունը, «Մարտական զենք է համարվում ռազմական նշանակության այն արտադրանքը, որը, օրենսդրությանը համապատասխան, ընդունված է օգտագործել պետական ռազմականացված կազմակերպությունների սպառազինության մեջ և նախատեսված է մարտական ու օպերատիվ-ծառայողական խնդիրների լուծման համար: Մարտական զենքը կարող է ունենալ կրակահերթով կրակելու հնարավորություն:», այս սահմանումը բավականին տարընթերցումների տեղիք է տալիս է, քանի որ ենթադրվում է, որ մարտական է այն զենքը, որը գտնվում է պետական ռազմականացված կազմակերպությունների սպառազինության մեջ: Այդ պատճառով առաջարկվում է հստակ ֆիքսել, որ պետական ռազմականացված կազմակերպություններում օգտագործվող այն զենքերը, որոնք համապատասխանում են օրենքով սահմանված քաղաքացիական զենքի չափանիշներին, ապա դրանք քաղաքացիական զենքեր են:

Օրենքի 7-րդ հոդվածում առաջարկվում են հետևյալ փոփոխությունները՝ 1-ին մասի 2-րդ կետում կա «ինքնաշեն հրազեն» ձևակերպումը, որի համար սահմանված է արգելք, նախագծով առաջարկվում է այն փոխարինել «ինքնաշեն զենք» ձևակերպմամբ, որպեսզի այն վերաբերի զենքի բոլոր տեսակներին: Առաջարկվում է ուժը կորցրած ճանաչել 2-րդ մասի 10-րդ կետը, քանի որ այն տեսականորեն կա նաև 2-րդ մասի 5-րդ կետում: 2-րդ մասի 11-րդ կետը սահմանում է «ողորկափող հրազեն օգտագործելը բնակավայրերում, բնակավայրերից, մայրուղիներից, միջպետական և միջհամայնքային նշանակության ճանապարհներից 500 մետր, իսկ ակոսափող հրազեն՝ 5000 մետր հեռավորությունից մոտ տարածքում, բացառությամբ հրաձգարանների»: Նախագծով առաջարկվում է ակոսափող հրազենի համար նախատեսված 5000 մետր հեռավորությունը փոխարինել 3000 մետրով, քանի որ կարծում ենք, որ անվտանգության պահպանման համար այս թիվը բավարար է՝ հաշվի առնելով, որ նախկին «Զենքի մասին» օրենքով նմանատիպ սահմանափակում անգամ չկար: Այս կետում առաջարկվում է նաև ավելացնել ծայրահեղ անհրաժեշտության կամ ինքնապաշտպանության դեպքերը, քանի որ հաշվի չէր առնվել, որ քաղաքացին կարող է դիմել ինքնապաշտպանության դիցուք՝ բնակավայրում կամ ճանապարհին մոտ հատվածում:

Օրենքի 17-րդ հոդվածի 6-րդ մասով առաջարկվում է զենքի հետ կապված և անվտանգության կանոնների իմացության տեսական և գործնական քննության գործնական բաժնից ազատել նաև պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցածներին, քանի որ նրանք արդեն իսկ ծանոթ են զենքի հետ

վարվելու անվտանգության կանոններին, այդ պատճառով էլ նրանց անհրաժեշտ է հանձնել միայն տեսական քննությունը:

Օրենքի 20-րդ հոդվածում առաջարկվում է լրացնել 3-րդ մաս, որով հնարավորություն է տրվում գիտական կազմակերպություններին զենքի, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերի և ռազմամթերքի հետազոտություն, մշակում, փորձարկում իրականացնելու համար զենքի արտադրության լիցենզիա ձեռք չբերել:

Օրենքում կատարվել են նաև մի շարք տեխնիկական փոփոխություններ:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները.

Նախագծի մշակման աշխատանքներին ներգրավվել են ՀՀ Ազգային ժողովի պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի պատգամավորներ և փորձագետներ, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, ՀՀ Ներքին գործերի նախարարությունը, ոլորտը ուսումնասիրող մի շարք հասարակական կազմակերպություններ:

4. Նախագծի ընդունման ակնկալվող արդյունքը.

Ակնկալվում է Հայաստանի Հանրապետությունում կարգավորել զենքի և ռազմամթերքի շրջանառությունը, նպաստել որսորդության, սիրողական և սպորտային հրաձգության, ինչպես նաև ռազմամարզության զարգացմանը: Ներդնել զենքի հետ վարվելու մշակույթ, որն ուղղված կլինի քաղաքացիների ինքնապաշտպանության և մարտունակության բարձրացմանը:

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «ԶԵՆՔԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Զենքի շրջանառության կարգավորման մասին» 2022 թվականի հոկտեմբերի 5-ի ՀՕ-368-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածը «ծառայողական» բառը հանել:

Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝

**«Հոդված 2. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները**

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **ռազմական նշանակության արտադրանք**՝ զենք, ռազմամթերք, ռազմական տեխնիկա, ռազմական նշանակության գույք, ռազմական աշխատանքներ և ծառայություններ, ռազմական, կրթական, ռազմատեխնիկական կամ ռազմակիրառական գիտական կամ ռազմական նշանակության համար կիրառվող տեղեկատվություն, մտավոր գործունեության արդյունքներ, ներառյալ դրանց նկատմամբ բացառիկ իրավունքները (մտավոր սեփականություն).

2) **զենք՝** սարք կամ առարկա, որը նախատեսված է կենդանի կամ այլ նշանակետ խոցելու, վնասազերծելու կամ ազդանշան արձակելու համար: Զենք չեն համարվում արտաքին տեսքով կամ կառուցվածքով զենքին նմանվող առարկաները, սարքերը կամ գործիքները, որոնք ունեն արտադրական, կենցաղային, տնտեսական, ուսումնական, մշակութային և դեկորատիվ նշանակություն.

3) **ձեռքի հրաձգային զենք՝** (այսուհետ՝ հրազեն)՝ վառոդի կամ այլ լիցքի էներգիայի հաշվին (ուղղորդված շարժում ստացած նետվող առարկայի միջոցով) տարածության վրա գտնվող կենդանի կամ այլ նշանակետի մեխանիկական խոցման համար նախատեսված զենք, որի հիմնական բաղկացուցիչ մասերն են փողը, հրանը, փողատուփը, թմբուկը, փականակը, հարվածային մեխանիզմը:

4) **կարճ ակոսափող հրազեն**՝ 300 մմ-ից պակաս երկարություն ունեցող ակոսափող և 800 մմ-ից պակաս ընդհանուր երկարություն ունեցող հրազեն.

5) **ողորկափող հրազեն**՝ հրազեն, որն ունի միայն ողորկ անցուղով փող կամ փողեր.

6) **ակոսափող հրազեն**՝ հրազեն, որն ունի միայն ակոսավոր անցուղով փող կամ փողեր.

7) **սառը զենք**՝ կտրող, ծակող, ջարդող սարք, որը նախատեսված է մարդու մկանային ուժի օգնությամբ անմիջական շփման դեպքում կենդանի կամ այլ նշանակետ խոցելու և վնասազերծելու համար.

8) **նետողական զենք**՝ սարք, որը նախատեսված է մարդու մկանային ուժի կամ մեխանիկական սարքի օգնությամբ նպատակաուղղված շարժում ստացող՝ նետման համար հարմարեցված առարկաների (այսուհետ՝ նետվող հարմարանք) միջոցով հեռավորության վրա գտնվող մարդուն կամ այլ կենդանի կամ այլ նշանակետ խոցելու և վնասազերծելու համար.

9) **օդաճնշիչ զենք**՝ սարք, որը նախատեսված է սեղմված օդի կամ գազային նյութի էներգիայի հաշվին նետվող հարմարանքին 7,5 ջոուլ և դրանից ավել փողային էներգիա ու նպատակաուղղված շարժում հաղորդելու միջոցով կենդանի կամ այլ նշանակետ խոցելու և վնասազերծելու համար.

10) **Օդաճնշիչ սարք**՝ սարք, որը նախատեսված է սեղմված օդի կամ գազային նյութի էներգիայի հաշվին նետվող հարմարանքին մինչև 7,5 ջոուլ փողային էներգիա ու նպատակաուղղված շարժում հաղորդելու միջոցով նշանակետ խոցելու համար.

11) **ռազմամթերք**՝ նշանակետը խոցելու համար նախատեսված առարկաներ, սարքեր և նետվող հարմարանքներ, որոնք պարունակում են պայթուցիկ, նետողական, հրատեխնիկական, արտամղիչ լիցքեր, կամ դրանց համակցություն:

12) **փամփուշտ**՝ զենքից կրակելու համար նախատեսված համասարք, որը պարկուճի միջոցով մեկ ամբողջության մեջ ներառում է բռնկվող միջոց (հրապատիճ), նետողական լիցք (վառոդ) և նետվող հարմարանք (գնդակ, կոտորակ և այլն).

13) **զենքի շրջանառություն**՝ զենքի արտադրություն, առևտուր, վաճառք, հարդարում, նորոգում, փոխանցում, ձեռքբերում, հավաքածուների կազմում և դրանց ցուցադրում, հաշվառում, պահպանում, պահում, կրում, տեղափոխում (փոխադրում), օգտագործում, նվիրատվություն, ժառանգում, ոչնչացում, ներկրում Հայաստանի Հանրապետության տարածք և արտահանում Հայաստանի Հանրապետությունից (այսուհետ համապատասխանաբար՝ ներկրում և արտահանում), տարանցիկ փոխադրում և առևտրի միջնորդական գործունեություն.

14) **զենքի արտադրություն**՝ լիցենզիայի հիմքով՝ արտադրական գործընթացում զենքի, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերի, փամփուշտների և ռազմամթերքի հետազոտություն, մշակում, նորոգում, փորձարկում, պատրաստում, հավաքում, ռազմամթերքի, փամփուշտների, պարկուճների, դրանց բաղադրիչ մասերի պատրաստում.

15) **զենքով պարգևատրում**՝ սույն օրենքով սահմանված անձանց կողմից օրենքով վերապահված իրենց լիազորությունների շրջանակում սահմանված կարգով տրվող խրախուսանքի տեսակ.

16) **զենքի պարագաներ՝** զենքի կոթը, նշանոցը, պահեստատուփը, մաքրման հարմարանքները, բոցամարիչի և փողաբերանի արգելակի փողիատուցիչի տեսակները կամ այն լրասարքը, որը նախագծված կամ հարմարեցված է զենքը տեղադրելու, փոխադրելու կամ զենքին կցելու, ամրացնելու միջոցով օպտիկական, գիշերային կամ ջերմատեսիլ սարքի միջոցով զենքի նշանառության հնարավորությունները բարելավելու համար: Զենքի պարագա է համարվում նաև զենքի ցանկացած այլ լրասարք, որը չի համարվում զենքի հիմնական բաղկացուցիչ մաս կամ չի փոխարինում դրան.

17) **զենք պահել՝** զենքին տիրապետում՝ զենք պահելու և կրելու թույլտվություն ունեցող ֆիզիկական անձի մշտական կամ ժամանակավոր բնակության վայրում, զենք պահելու և օգտագործելու թույլտվություն ունեցող իրավաբանական անձի գտնվելու վայրում՝ զենքի հետ վարվելու անվտանգության կանոնների պահպանմամբ.

18) **զենք կրել՝** պահելու համար նախատեսված տարածքից դուրս, առանց տեղափոխելու կանոնների կիրառմամբ, զենքի տեղաշարժն անձի վրա ամրացված, կախված, պայուսակում կամ գրպանում դրված կամ ձեռքում բռնած վիճակում, իսկ նետողական զենքի դեպքում՝ նետման համար նախատեսված և դրա վրա տեղադրված նետվող հարմարանքով.

19) **զենք տեղափոխել (փոխադրել)՝** պահելու համար նախատեսված տարածքից դուրս զենքի տեղաշարժը լիցքաթափված վիճակում, ապահովիչ դետալը փակ, առանձնացված կամ դատարկ (առանց փամփուշտ) պահեստատուփով, ծածկաշապիկով կամ պատյանով կամ տեղափոխման համար նախատեսված գործարանային այլ տարայով, նետողական զենքի դեպքում՝ փաթեթավորված և անձի վրա չամրացված վիճակում, իսկ նետվող հարմարանքը պետք է լինի առանձնացված.

20) **ուսումնական զենք՝** ուսումնական նպատակների համար օգտագործվող սարք կամ առարկա, որը հնարավոր չէ վերանորոգելով դարձնել կրակելու համար պիտանի, ուսումնական զենքի նմանակ կարող է հանդիսանալ նաև մալած զենքը.

21) **զենքի նորոգում՝** զենքի հիմնական մասերը կամ այլ դետալները փոխելու կամ վերանորոգելու միջոցով զենքն աշխատունակ դարձնելը, որի դեպքում զենքի մարտավարատեխնիկական բնութագրերը չեն փոխվում.

22) **զենքի հարդարում՝** զենքի գեղարվեստական ձևավորում, որի դեպքում զենքի դետալները և մարտավարատեխնիկական բնութագրերը չեն փոխվում.

23) **զենքի հավաքածու՝** ընտրված զենքերի ամբողջություն, որը կարող է ունենա սիրողական, ճանաչողական, պատմական, գիտական, գեղարվեստական, մշակութային և տեղեկատվական նշանակություն.

24) **մալած զենք՝** կրակելու համար ոչ պիտանի դարձրած զենք.

25) **զենքի հաշվառման միասնական էլեկտրոնային շտեմարան՝** Հայաստանի Հանրապետության ներքին գործերի լիազոր մարմնի կողմից վարվող՝ շրջանառվող քաղաքացիական զենքի, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերի և փամփուշտների հաշվառման էլեկտրոնային տեղեկատվական համակարգ.
26) **գազային զենք՝** տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխան՝ արցունքաբեր կամ գրգռիչ նյութերով լիցքավորված փամփուշտներով ատրճանակի կամ ռևոլվերի նմանվող սարք, դրանց փամփուշտները կամ փչող (ցրող) սարք, որը նախատեսված է կենդանի կամ այլ նշանակետ ժամանակավորապես վնասազերծելու համար.
27) **գազային փամփուշտ՝** կրակելու համար նախատեսված համասարք, որը պարկուճի միջոցով մեկ ամբողջության մեջ ներառում է բռնկվող միջոցը (հրապատիճը), նետողական լիցքը, խցանը և Կառավարության սահմանած՝ օգտագործման թույլատրված արցունքաբեր կամ գրգռիչ նյութը, որը նախատեսված չէ մարդուն մահ պատճառելու համար.
28) **լուսաձայնային փամփուշտ՝** կրակելու համար նախատեսված համասարք, որը պարկուճի միջոցով մեկ ամբողջության մեջ ներառում է բռնկվող միջոցը (հրապատիճը) և լուսաձայնային գործողության լիցքը, որը նախատեսված չէ կենդանի կամ այլ նշանակետ խոցելու համար.
29) **ուսումնական փամփուշտ՝** ուսումնական նպատակների համար օգտագործվող համասարք՝ բաղկացած պարկուճից և բռնկվող լիցքից նետվող առարկայից, որը պատրաստված է բնօրինակի չափերին և կառուցվածքին համապատասխան, և որի պարկուճի մեջ բացակայում է նետողական լիցքը, կամ այն փոխարինված է նույն կշռով այլ՝ ոչ այրվող նյութով, իսկ բռնկվող միջոցը (հրապատիճը) վնասված (կրակված) է: Ուսումնական փամփուշտի պարկուճի վրա պետք լինեն տարբերակիչ սեղմվածքներ:
30) **անգնդակ փամփուշտ՝** միայն ուսումնական, վարժանքային կամ ազդանշանային կրակոցներ կատարելու նպատակով օգտագործվող համասարք, որը նախատեսված չէ կենդանի կամ այլ նշանակետի խոցման համար, և որը պարկուճի միջոցով մեկ ամբողջության մեջ ներառում է բռնկվող միջոցը (հրապատիճը), նետողական լիցքը, և որի կազմի մեջ բացակայում է նետվող առարկան, կամ առկա է հեշտ ոչնչացվող նյութից (պոլիմեր, թուղթ) փոխարինողը.
31) **պայթուցիկ նյութ՝** արտաքին ազդեցության պայմաններում պայթելու ունակ քիմիական նյութ կամ նյութերի խառնուրդ.
32) **պայթեցման սարք՝** հատուկ պատրաստված և որոշակի պայմաններում պայթելու ունակ ցանկացած սարք.
33) **ազդանշանային զենք՝** սարք, որը նախատեսված է անգնդակ փամփուշտով լուսային, ծխային կամ ձայնային ազդանշան արձակելու համար.

34) **ազդանշանային փամփուշտ՝** զենքից կրակելու համար նախատեսված համասարք, որը պարկուճի միջոցով մեկ ամբողջության մեջ ներառում է բռնկվող միջոցը (հրապատիճը), նետողական լիցքը և նետվող լիցքը՝ լուսային, ծայնային կամ ծխային ազդանշան տալու համար, որը նախատեսված չէ կենդանի կամ այլ նշանակետի խոցման համար.

35) **վառոդ՝** տարբեր բաղադրամասերից բաղկացած պայթուցիկ խառնուրդ, որը կարող է այրվել ըստ իր շերտերի զուգահեռության՝ առանց արտաքին միջավայրից թթվածնի ներթափանցման: Վառոդի՝ ըստ շերտերի զուգահեռության այրումը, որը չի վերածվում պայթյունի, այլ առաջ է բերում կայուն գազագոյացություն, հնարավորություն է տալիս կանոնավորելու գազագոյացման արագությունը.

36) **էլեկտրահարող սարք՝** տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխան՝ ատրճանակի նմանվող սարք, կայծային պարպիչ և այլ կրովի էլեկտրահարող սարք, որոնք նախատեսված են կենդանի նշանակետը ժամանակավորապես վնասազերծելու համար.

37) **սահմանափակ խոցելիությամբ (վնասվածքային) հրազեն՝** կարճափող զենք և անփող զենք՝ նախատեսված վնասվածքային գործողության փամփուշտի, վառոդի կամ այլ լիցքի էներգիայի հաշվին ուղղորդված շարժում ստացած արկի միջոցով տարածության վրա գտնվող կենդանի նշանակետի մեխանիկական խոցման՝ վնասազերծման համար, որը նախատեսված չէ մահ պատճառելու համար.

38) **վնասվածքային գործողության փամփուշտ՝** ողորկափող հրազենից կամ սահմանափակ խոցելիությամբ (վնասվածքային) հրազենից կրակելու համար նախատեսված համասարք, որը պարկուճի միջոցով մեկ ամբողջության մեջ ներառում է բռնկվող միջոցը (հրապատիճը), նետողական լիցքը և վնասվածքային գործողության նետվող առարկան, որը նախատեսված չէ մարդուն մահ պատճառելու համար.

39) **հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձինք՝** կազմակերպություններ, որոնք օրենսդրությամբ սահմանված կարգով կատարում են այնպիսի գործառույթներ, որոնք կապված են զենք օգտագործելու կամ գործադրելու հետ.

40) **պետական ռազմականացված կազմակերպություններ՝** Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն, Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայություն, Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմիններ, Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտե, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտե,

Հայաստանի Հանրապետության դատախազություն, Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայություն, պետական սուրհանդակային ծառայություն.

41) **հրաձգարան**՝ իրավաբանական անձանց պատկանող շինություն, տարածք կամ հողատարածք (այսուհետ՝ տարածք), որը հարմարեցված է հրաձգության համար: Հրաձգարանները կարող են լինել բաց, կիսափակ և փակ.

42) **հանրապետական գնդակապարկուճային հաշվառման քարտադարան**՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի լիազոր մարմնի կողմից վարվող՝ Հայաստանի Հանրապետության տարածքում կատարված չբացահայտված հանցագործությունների դեպքի վայրերից վերցված (հայտնաբերված) ակոսափող հրազեններից կրակված պարկուճների, գնդակների և զենքի հետքեր ունեցող փամփուշտների, Հայաստանի Հանրապետության տարածքում շրջանառվող ակոսափող զենքի (մինչև 12,7 մմ տրամաչափի), ինչպես նաև առգրավված, հայտնաբերված, կամավոր հանձնված, կորած (հափշտակված) զենքերի ձգաբանական հետազոտման ենթարկված և նմուշառված՝ գնդակների, պարկուճների հավաքածու, որտեղ հաշվառումն իրականացվում է բնօրինակներով և էլեկտրոնային եղանակով.

43) **համապատասխանության գնահատում**՝ սույն օրենքի իմաստով՝ հավատարմագրված և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նշանակված համապատասխանության գնահատման մարմնի կողմից համապատասխանության հավաստման գործունեության իրականացում, որի արդյունքով տեխնիկական կանոնակարգման օբյեկտ հանդիսացող քաղաքացիական զենքի փամփուշտների և հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերի համապատասխանության գնահատման փաստաթղթի տրամադրմամբ հավաստվում է համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ (տեխնիկական կանոնակարգով) և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վավերացված Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան ընդունված փաստաթղթերով սահմանված պահանջներին.

44) **համապատասխանության սերտիֆիկատ՝** սույն օրենքի իմաստով՝ հավատարմագրված և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նշանակված համապատասխանության գնահատման մարմնի տված փաստաթուղթ, որը հավաստում է արտադրանքի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ (տեխնիկական կանոնակարգով) և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վավերացված Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան ընդունված փաստաթղթերով սահմանված պահանջներին:»:

**Հոդված 3**. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:
**Հոդված 4**. Օրենքի 4-րդ հոդվածում՝
1) 1-ին մասը «զենք համարվող հրազենը» բառերը փոխարինել «զենքն իր կառուցվածքով» բառերով.
2) 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.
«2. Քաղաքացիական զենքի տեսակներն են՝
1) ողորկափող հրազեն, այդ թվում՝ 140 մմ-ից ոչ ավելի երկարության ակոսավոր մասով.
2) համակցված հրազեն, այդ թվում՝ փոփոխվող, ներդրվող ակոսավոր փողով.
3) ակոսափող հրազեն՝ 1500 մմ-ից ոչ ավել երկարություն և 12.7 մմ-ից ոչ ավել տրամաչափ ունեցող փողով.
4) կարճ ակոսափող հրազեն.
5) օդաճնշիչ զենք՝ ոչ ավելի, քան 25 ջոուլ փողային էներգիայով.
6) գազային զենք.
7) ազդանշանային զենք.
8) սառը զենք.
9) նետողական զենք»:
**Հոդված 5**. Օրենքի 5-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.
«**Հոդված 5. Քաղաքացիական կարճ ակոսափող հրազենը**

1. Քաղաքացիական կարճ ակոսափող հրազենը (այսուհետ՝ Կարճ ակոսափող հրազեն) նախատեսված է պետական մարմինների և կազմակերպությունների պաշտոնատար անձանց, պետական ռազմականացված կազմակերպություններում ծառայողների (ծառայածների) կամ հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձանց աշխատողների համար, որոնց օրենսդրությամբ թույլատրվում է պահել և կրել, պահել և օգտագործել այդ զենքը օրենքով նրանց վրա դրված՝ ինքնապաշտպանության, քաղաքացիների կյանքի, առողջության, սեփականության պաշտպանության, շրջակա միջավայրի, բնական պաշարների, արժեքավոր և վտանգավոր բեռների, հատուկ թղթակցության պահպանության պարտականությունների կատարման համար:
2. Անձնական օգտագործման համար ընդամենը մեկ միավոր կարճ ակոսափող հրազեն ձեռք բերելու իրավունք ունի պետական ռազմականացված կազմակերպություններում առնվազն 20 տարի զինվորական ծառայության ստաժ ունեցող և առնվազն «փոխգնդապետ» զինվորական կոչում ունեցող գործող կամ պահեստազորի սպան.
3. Կարճ ակոսափող հրազենի փամփուշտի գնդակը չի կարող ունենալ կարծր նյութերից բաղկացած միջնաձող:

4. Օրենսդրության համաձայն՝ հատուկ պետական պաշտպանության ենթակա անձինք իրավունք ունեն ժամանակավոր օգտագործման համար ստանալու կարճ ակոսափող հրազեն՝ Կառավարության սահմանած կարգով:
5. Հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձանց Կարճ ակոսափող հրազենը տրվում է պահելու և օգտագործելու, իսկ հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձանց աշխատողներին՝ ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ պահելու և կրելու իրավունքով:
6 Հրաձգարան գործարկելու լիցենզիա ունեցող իրավաբանական անձանց Կարճ ակոսափող հրազեն տրվում է պահելու և օգտագործելու իրավունքով:
7. Օրենքով նախատեսված դեպքերում այլ մարմինների ղեկավար աշխատողների և պետական հատուկ ծառայություն իրականացնող անձանց կողմից Կարճ ակոսափող հրազեն օգտագործելու դեպքում այն տրվում է պահելու և կրելու իրավունքով:

**Հոդված 6.** Օրենքի 6-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1. Մարտական է համարվում այն զենքը, որը նախատեսված է մարտական ու օպերատիվ-ծառայողական խնդիրների լուծման համար և օրենսդրությանը համապատասխան ընդունված է օգտագործել պետական ռազմականացված կազմակերպությունների սպառազինության մեջ, բացառությամբ քաղաքացիական զենքի: Մարտական զենքը քաղաքացիական զենքից տարբերվում է քաղաքացիական զենքի տեսակների՝ սույն օրենքով սահմանված չափանիշներից և կրակահերթով կրակելու հնարավորությամբ:»:

2) 3-րդ մասում «Պետական ռազմականացված կազմակերպություններում» բառերը հանել:

**Հոդված 7.** Օրենքի 7-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «և ծառայողական» շաղկապն ու բառը հանել.

2) 1-ին մասի 1-ին կետը «ունակության կորստի» բառերից հետո լրացնել «բացառությամբ կարճ ակոսափող հրազենի» բառերը.

3) 1-ին մասի 2-րդ կետի «ինքնաշեն հրազեն» բառերը փոխարինել «ինքնաշեն զենք» բառերով, «նմանեցված հրազեն» բառերը «նմանեցված զենք» բառերով.

4) 1-ին մասի 5-րդ կետում «սարք» բառը փոխարինել «զենք» բառով.

5) 1-ին մասի 8-րդ կետում «երեք» բառը փոխարինել «մեկ» բառով.

6) 1-ին մասի 12-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«90 մմ-ից ավել երկարության շեղբով կամ սայրով սառը զենք, դանակ կամ դաշույն, որի շեղբը կամ սայրը դուրս է գալիս բռնակից հատուկ կոճակը կամ լծակը սեղմելու միջոցով կամ ծանրության ուժի կամ արագացված շարժման ազդեցությամբ և ինքնաբերաբար ամրակցվում, բացառությամբ մշակութային արժեք ունեցող, այդ

թվում՝ պատմական նշանակություն ունեցող սառը զենքի, դանակի կամ դաշույնի, դրանց պատճենների և կրկնօրինակների.»:
7) 2-րդ մասի 1-ին կետը «էներգիայով և» բառն ու շաղկապը փոխարինել «էներգիայով կամ» բառով և շաղկապով.
8) 2-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«2) քաղաքացիական զենքի վրա անաղմուկ հրաձգության նպատակով կառուցված կամ արտադրված հարմարանքներ տեղադրելը.».
9) 2-րդ մասի 10-րդ կետը ճանաչել ուժը կորցրած.
9) 2-րդ մասի 11-րդ կետում «5000» թիվը փոխարինել «3000» թվով, «հրաձգարանների» բառից հետո լրացնել «և ծայրահեղ անհրաժեշտության դեպքերի» բառերը:
**Հոդված 8.** Օրենքի 8-րդ հոդվածի վերնագրում, 1-ին, 2-րդ մասերում, 3-րդ մասի 2-րդ կետում «և ծառայողական» շաղկապը և բառը հանել».
**Հոդված 9**. Օրենքի 10-րդ հոդվածում՝
1) 1-ին մասում «Քաղաքացիական և ծառայողական» բառերը փոխարինել «Ռազմական նշանակության արտադրանքի արտադրությունը, Ռազմական նշանակության արտադրանքի տարանցիկ փոխադրումը և առևտրի միջնորդական գործունեությունը» բառերով.
2) 2-րդ, մասում «Քաղաքացիական և ծառայողական» բառերը հանել.
3) 3-րդ մասում «և ծառայողական» շաղկապը և բառը հանել:
**Հոդված 10.** Օրենքի 11-րդ հոդվածում՝
1) 1-ին մասի, 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերի, 3-րդ մասի 1-ին, 3-րդ կետերի «քաղաքացիական և ծառայողական» բառերը հանել.
2) 2-րդ մասի «փամփուշտներ» բառը հանել.
3) 3-րդ մասի 8-րդ կետը «մարտական կամ ծառայողական» բառերը հանել.
4) 4-րդ մասի 1-ին կետը «թույլտվություն» բառը փոխարինել «թույլտվություններ» բառով.
5) 5-րդ մասը «քաղաքացիական հրազեն» բառերը փոխարինել «զենք» բառով.
6) 9-րդ մասը «օրվա ընթացքում» բառերից հետո լրացնել «որի ժամանակ ստուգվում է նաև քաղաքացու մշտական բնակության վայրում զենքի պահպանման պայմանների առկայությունը» նախադասությունը.
7) 11-րդ մասի 2-րդ կետը ճանաչել ուժը կորցրած.
8) 11-րդ մասի 5-րդ կետը «եզրակացությունը» բառից հետո լրացնել «եթե տվյալ պահին իր անունով հաշվառված զենք չունի» նախադասությունը.
9) 11-րդ մասի 7-րդ կետը «զենքի» բառից առաջ լրացնել «առաջին անգամ զենք ձեռք բերելիս» բառերը:
10) 13-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«13. Թույլտվությունների ժամկետները երկարաձգելիս կամ զենք պահելու և կրելու թույլտվություն ունենալու դեպքում նոր զենք ձեռք բերելիս Հայաստանի Հանրապետության քաղաքացին ներքին գործերի բնագավառի պետական կառավարման լիազոր մարմին է ներկայացնում միայն սույն հոդվածի 11-րդ մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 6-րդ կետերով սահմանված փաստաթղթերը»:

**Հոդված 11**. Օրենքի 12-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 4-րդ կետում «մյուս» բառը հանել.

2) 1-ին մասի 5-10-րդ կետերը հանել.

3) լրացնել նոր՝ 1.1. մասով հետևյալ խմբագրությամբ.

«1.1. Թույլտվություններն ուժը կորցրած են ճանաչվում նաև հետևյալ դեպքերում՝

1) ֆիզիկական անձը հաշվառվել է Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում՝ կենցաղային ոլորտում պարբերաբար իրավախախտումներ թույլ տալու կամ ընտանիքի անդամների նկատմամբ բռնություն գործադրելու համար.

2) ֆիզիկական անձը հաշվառվել է հոգեբուժական կամ նարկոլոգիական հաստատություններում կամ ձեռք է բերել զենքի տիրապետումը խոչընդոտող հիվանդություններ և վիճակներ.

3) ֆիզիկական անձը չի անցել սույն օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված բժշկական հետազոտությունը.

4) ֆիզիկական անձը մեկ տարվա ընթացքում երկու անգամ թույլ է տվել հասարակական կամ կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող վարչական իրավախախտում.

5) ֆիզիկական անձը դատապարտվել է դիտավորյալ հանցագործություն կատարելու համար, և դատավճիռը մտել է օրինական ուժի մեջ, կամ անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ ռեաբիլիտացնող հիմքով:».

4) 2-րդ մասի «համապատասխան լիցենզիայից» բառերից հետո լրացնել «և թույլտվությունից» շաղկապով և բառով .

5) 4-րդ մասը «դադարեցման» բառից հետո լրացնել «կասեցման» բառով.

**Հոդված 12.** Օրենքի 13-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 1-ին կետը «գործողությունները» բառից հետո լրացնել «կասեցվել կամ» բառը և շաղկապը.

2) 1-ին մասի 3-րդ կետը «կամ փաշփուշտներ» բառից առաջ լրացնել «հրազենի հիմնական բաղկացուցիչ մասեր» բառերը.

3) 1-ին մասի 5-րդ կետը «քաղաքացիական կամ ծառայողական զենքի կամ որպես պարգև տրված» բառերը հանել.

4) 3-րդ մասը «և ծառայողական» շաղկապը և բառը հանել.

5) 9-րդ մասը «զենքի» բառից հետո լրացնել «հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերի» բառերը:

**Հոդված 13.** Օրենքի 14-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 4-րդ կետում «քաղաքացիական և ծառայողական» բառերը հանել,

2) 1-ին մասի 5-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:
3) 2-րդ մասը «զենք» բառից հետո լրացնել «և փամփուշտներ» շաղկապը և բառը:
**Հոդված 14.** Օրենքի 16-րդ հոդվածում՝
1) 1-ին և 2-րդ մասերը «և ծառայողական» շաղկապը և բառը հանել.
2) 6-րդ մասը «ոստիկանությունից ստացել զենք» բառերից հետո լրացնել «պահելու և» բառը և շաղկապը, «երեք» բառը փոխարինել «հինգ» բառով:
**Հոդված 15.** Օրենքի 17-րդ հոդվածում՝
1) 2-րդ մասը «զենքի այլ» բառերը փոխարինել «մարտական զենքի» բառերով:
2) 6-րդ մասը «Քննությունից ազատվում է այն քաղաքացին, որը ծառայում է Հայաստանի Հանրապետության պետական ռազմականացված կազմակերպություններում և ունի զենք պահելու և կրելու իրավունք:» նախադասությունը փոխարինել «Գործնական քննությունից ազատվում են այն քաղաքացիները, որոնք ծառայում են կամ ծառայել են Հայաստանի Հանրապետության պետական ռազմականացված կազմակերպություններում, այդ թվում՝ պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցածները, որոնք ունեն կամ ունեցել են զենք կրելու իրավունք:».
2) 7-րդ մասի 5-րդ կետը «քրեական հետապնդում» բառերից հետո լրացնել «զենքի օգտագործմամբ», իսկ «զենքի օգտագործմամբ» բառերը հանել.
**Հոդված 16.** Օրենքի 19-րդ հոդվածում՝
1) վերնագրում և 1-ին մասում «քաղաքացիական և ծառայողական» բառերը հանել.
2) 2-րդ մասը «և ծառայողական» շաղկապը և բառը հանել:
**Հոդված 17.** Օրենքի 20-րդ հոդվածում՝
1) Վերնագրում, 1-ին և 2-րդ մասերում «քաղաքացիական և ծառայողական» բառերը հանել.
2) լրացնել նոր՝ 3-րդ մասով հետևյալ խմբագրությամբ.
«3. Գիտական կազմակերպությունները զենքի, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերի, փամփուշտների և ռազմամթերքի հետազոտություն, մշակում, փորձարկում իրականացնում են Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության սահմանած կարգով՝ առանց զենքի արտադրության լիցենզիայի:»:
**Հոդված 18**. Օրենքի 21-րդ հոդվածում՝
1) վերնագրում, 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 6-րդ, 11-րդ մասերում «և ծառայողական» շաղկապը և բառը հանել.
2) 4-րդ մասում «մեկ միավոր զենք» բառերից հետո լրացնել «մեկ միավոր հրազենի հիմնական բաղկացուցիչ մաս» բառերը:
2) 8-րդ, մասում «քաղաքացիական և ծառայողական» բառերը հանել.
**Հոդված 19.** Օրենքի 22-րդ հոդվածում՝

1) վերնագրում, 1-ին մասում, 1-ին մասի 1-ին, 9-րդ կետերում, 2-րդ մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ կետերում, 3-րդ, 4-րդ, 5-րդ մասերում «և ծառայողական» բառը և շաղկապը հանել.

2) 1-ին մասում «իրավունք ունեն» բառերից հետո «քաղաքացիական» բառը հանել.

3) 1-ին մասի 1-ին կետը «սերտիֆիկատ» բառից հետո լրացնել «ակոսափող զենքի դեպքում՝ նաև գնդակապարկուճային հաշվառման մասին տեղեկանք» բառերը.

4) 1-ին մասի 2-րդ կետը «զենք ձեռք բերելու թույլտվություն» բառերը փոխարինել «թույլտվությունը» բառով.

5) 1-ին մասի 4-րդ կետում «,ծառայողական» կետադրական նշանը և բառը հանել.

6) 1-ին մասի 5-րդ կետում «տվյալները» բառից հետո լրացնել «ակոսափող զենքի դեպքում՝ նաև գնդակապարկուճային հաշվառման մասին տեղեկանքի պատճենը» բառերը, «ուտիկանությունից» բառից հետո լրացնել «զենք պահելու և կրելու կամ պահելու և օգտագործելու» բառերը.

7) 1-ին մասի 6-րդ կետում «տրամադրել» բառից հետո լրացնել «կամ վաճառել փամփուշտներ» բառերը», «տրամադրած՝» բառից հետո լրացնել «համապատասխան» բառը, լրացնել նոր նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ. «հրազենի հիմնական բաղկացուցիչ մասեր վաճառել հրազենի հիմնական բաղկացուցիչ մասեր ձեռք բերելու թույլտվության առկայության դեպքում.».

8) 2-րդ մասի 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«քաղաքացիական զենք վաճառելը տվյալ տեսակի զենք ձեռք բերելու թույլտվություն չներկայացրած, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասեր վաճառելը՝ հրազենի հիմնական բաղկացուցիչ մասեր ձեռք բերելու թույլտվություն չներկայացրած, փամփուշտներ վաճառելը՝ տվյալ տեսակի զենք պահելու և կրելու կամ պահելու և օգտագործելու թույլտվություն չներկայացրած իրավաբանական կամ ֆիզիկական անձանց.».

**Հոդված 20.** Օրենքի 23-րդ հոդվածում՝

1) վերնագրում, 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ մասերում «և ծառայողական» բառը և շաղկապը հանել.

2) 1-ին մասում «նորոգելու իրավունք ունեն» բառերից հետո «քաղաքացիական» բառը հանել.

3) 2-րդ, 3-րդ մասերում «քաղաքացիական» բառը հանել.

**Հոդված 21.** Օրենքի 24-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը «իսկ քաղաքացիական» բառից հետո «և ծառայողական» շաղկապը և բառը հանել, «զենքը վաճառելու» բառերից հետո «քաղաքացիական և ծառայողական» բառերը հանել, «առևտրի» բառից առաջ լրացնել «քաղաքացիական զենքի» բառերը.

2) 2-րդ մասը «մարտական և ծառայողական» բառերը հանել:

**Հոդված 22.** Օրենքի 25-րդ հոդվածում՝

1) Վերնագրում, 1-ին մասում «և ծառայողական» շաղկապը և բառը հանել, «դրանց» բառը հանել:

2) 9-րդ մասում «փամփուշտների» բառից հետո լրացնել «վերալիցքավորումը և» բառը և շաղկապը.

3) 10-րդ մասում «Քաղաքացիական և ծառայողական» բառերը հանել, «փամփուշտների» բառից հետո լրացնել «վերալիցքավորում և» բառը և շաղկապը:

**Հոդված 23.** Օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 24.** Օրենքի 28-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասը «21» թիվը փոխարինել «18» թվով.

1) 5-րդ մասը «համապատասխան պետական մարմինների» բառերը փոխարինել «պետական ռազմականացված կազմակերպությունների» բառերով:

2) 16-րդ մասի 2-րդ կետը, 21-րդ մասը «և ծառայողական» շաղկապը և բառը հանել:

**Հոդված 25.** Օրենքի 29-րդ հոդվածի վերնագրում, 1-ին, 3-րդ մասերում «և ծառայողական» շաղկապը և բառը հանել:

**Հոդված 26.** Օրենքի 31-րդ հոդվածում՝

1) 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ մասերը «և ծառայողական» շաղկապը և բառը հանել:

2) 3-րդ մասը «համաձայն» բառից հետո լրացնել «, որից հետո ֆիզիկական կամ իրավաբանական անձին տրվում է համապատասխան տեղեկանք՝ զենքի հաշվառման վերաբերյալ» նախադասությունը.

3) 8-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«8. Չհաշվառված քաղաքացիական զենքերը քաղաքացու կողմից Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմիններին կամովին ներկայացվելու դեպքում, համապատասխան քրեադատավարական ընթացակարգով անցնելուց և վարույթ իրականացնող մարմնի կողմից քրեական վարույթը կարճելու վերաբերյալ որոշում կայացվելուց և օրենքով սահմանված կարգով զենք ձեռք բերելու թույլտվություն ստանալուց հետո Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը զենքը հաշվառում և տրամադրում է քաղաքացուն՝ զենք պահելու և կրելու իրավունքով:»:

4) 12-րդ մասը «և քաղաքացին դրանք առանց թույլտվության կարող է ձեռք բերել միայն քաղաքացիական և ծառայողական զենքի առևտրի լիցենզիա ունեցող իրավաբանական անձանցից:» նախադասությունը փոխարինել «և դրանք վաճառելու իրավունք ունեն միայն քաղաքացիական զենքի առևտրի լիցենզիա ունեցող իրավաբանական անձինք:» նախադասությամբ:

**Հոդված 27.** Օրենքի 32-րդ հոդվածում՝

1) 1-ին և 3-րդ մասերը «և ծառայողական» շաղկապը և բառը հանել.

2) 3-րդ մասի 2-րդ կետը «մեկ» բառից հետո լրացնել «անգամ» բառով.

3) 3-րդ մասի 3-րդ կետը «մեկ» բառից հետո լրացնել «անգամ» բառով:

**Հոդված 28.** Օրենքի 33-րդ հոդվածում՝

1) 5-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«5. Ակոսափող հրազենի համար նախատեսված բաց, կիսափակ և փակ հրաձգարանները պետք է սարքավորվեն անվտանգության կանոններին համապատասխան: Բաց հրաձգարանը պետք է ունենա նաև գնդակի արգելակման խոչընդոտներ: Բաց հրաձգարանի կրակագծից՝ կրակ բացելու ուղղությամբ մինչև բնակելի, պետական, հասարակական և արտադրական շինություններ պետք է լինի առնվազն 3000 մետր, իսկ կիսաբաց հրաձգարանների դեպքում հատակագծային սահմանից մինչև բնակավայր, բնակելի, պետական, հասարակական և արտադրական շինություններ՝ առնվազն 300 մետր հեռավորություն:»:

2) 10-րդ մասի «ուսումնական, սիրողական, սպորտային վարժանքների, հրաձգության և տակտիկական պարապմունքների, մրցումների անցկացման պահանջները» բառերը հանել:

3) լրացնել նոր՝ 11-րդ մաս հետևյալ խմբագրությամբ.

«11. Արգելվում է կառուցել, նախագծել բաց հրաձգարանի կրակագծից՝ կրակ բացելու ուղղությամբ մինչև բնակավայր, բնակելի, պետական, հասարակական և արտադրական շինություններ առնվազն 3000 մետր, իսկ կիսաբաց հրաձգարանների դեպքում հատակագծային սահմանից մինչև բնակավայր, բնակելի, պետական, հասարակական և արտադրական շինություններ՝ առնվազն 300 մետր հեռավորությամբ: Հրաձգարանների վրայով քաղաքացիական ավիացիայի անվտանգ թռիչքների նորմերը սահմանում է քաղաքացիական ավիացիայի ոլորտում պետական կառավարման լիազոր մարմինը:»:

**Հոդված 29. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերում փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:

**ՏԵՂԵԿԱՆՔ**
**ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ԵՎ ԼՐԱՑՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ԶԵՆՔԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ»**

**Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան**

1. Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական, ~~ծառայողական~~ և ծեռքի մարտական հրաձգային զենքի շրջանառությունը և դրա հետ կապված հարաբերությունները:

2. Սույն օրենքի դրույթները տարածվում են նաև զենքի փամփուշտների և հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերի շրջանառության վրա:

***(1-ին հոդվածը լրաց. 13.07.23 ՀՕ-268-Ն)***

***(13.07.23 ՀՕ-268-Ն օրենքն ունի եզրափակիչ մաս և անցումային դրույթներ)***

~~**Հոդված 2. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները**~~

~~1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.~~

~~1) **զենք**՝ սարք կամ առարկա, որը նախատեսված է կենդանի կամ այլ նշանակետ խոցելու և վնասազերծելու համար: Զենք չեն համարվում արտաքին տեսքով կամ կառուցվածքով զենքին նմանվող առարկաները, ազդանշանային սարքերը, սարքերը կամ գործիքները, որոնք ունեն արտադրական, կենցաղային, տնտեսական, ուսումնական, մշակութային և դեկորատիվ նշանակություն.~~

~~2) **հրազեն**՝ վառոդի կամ այլ լիցքի էներգիայի հաշվին (ուղղորդված շարժում ստացած նետվող առարկայի միջոցով) տարածության վրա գտնվող կենդանի կամ այլ նշանակետի մեխանիկական խոցման համար նախատեսված զենք, որի հիմնական բաղկացուցիչ մասերն են փողը, հրանը, փողատուփը, թմբուկը, փականակը, ծգանահարվածային մեխանիզմը.~~

~~3) **սառը զենք**՝ մարդու մկանային ուժի օգնությամբ անմիջական շփման դեպքում կենդանի կամ այլ նշանակետ խոցելու համար նախատեսված առարկա.~~

~~4) **նետողական զենք**՝ մարդու մկանային ուժի կամ մեխանիկական սարքի օգնությամբ նպատակաուղղված շարժում ստացող՝ նետման համար հարմարեցված առարկաների (այսուհետ՝ նետվող հարմարանք) միջոցով հեռավորության վրա գտնվող կենդանի կամ այլ նշանակետ խոցելու համար նախատեսված սարք.~~

~~5) **օդաճնշիչ զենք**՝ սեղմված օդի կամ գազային նյութի էներգիայի հաշվին շարժում ստացող՝ նետվող հարմարանքի միջոցով նշանակետ խոցելու համար նախատեսված սարք.~~

~~6) **ռազմամթերք**՝ նշանակետը խոցելու համար նախատեսված առարկաներ, սարքեր և նետվող հարմարանքներ, որոնք պարունակում են պայթուցիկ, նետողական, հրատեխնիկական, արտամղիչ լիցքեր, կամ դրանց համակցություն:~~

Ռազմամթերքը կարող է լինել քաղաքացիական, ծառայողական կամ ռազմական նշանակության: Քաղաքացիական և ծառայողական զենքի հետ օգտագործվում է քաղաքացիական և ծառայողական նշանակության, իսկ մարտական զենքի հետ՝ ռազմական նշանակության ռազմամթերք.

7) **փամփուշտ**՝ զենքից կրակելու համար նախատեսված համասարք, որը պարկուճի միջոցով մեկ ամբողջության մեջ ներառում է բռնկվող միջոց (հրապատիճ), նետողական լիցք (վառոդ) և նետվող հարվածային մասով հարմարանք (գնդակ, կոտորակ և այլն).

8) **զենքի շրջանառություն**՝ զենքի արտադրություն, առևտուր, վաճառք, հարդարում, նորոգում, փոխանցում, ձեռքբերում, հավաքածուների կազմում և դրանց ցուցադրում, հաշվառում, պահպանում, կրում, տեղափոխում (փոխադրում), օգտագործում, նվիրատվություն, ժառանգում, ոչնչացում, ներկրում Հայաստանի Հանրապետության տարածք և արտահանում Հայաստանի Հանրապետությունից (այսուհետ համապատասխանաբար՝ ներկրում և արտահանում).

9) **զենքի արտադրություն**՝ լիցենզիայի հիմքով՝ արտադրական գործընթացում զենքի, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերի, փամփուշտների և ռազմամթերքի հետազոտություն, մշակում, նորոգում, փորձարկում, պատրաստում, հավաքում, ռազմամթերքի, փամփուշտների, պարկուճների, դրանց բաղադրիչ մասերի պատրաստում.

10) **զենքով պարգևատրում**՝ սույն օրենքով սահմանված անձանց կողմից օրենքով վերապահված իրենց լիազորությունների շրջանակում սահմանված կարգով տրվող խրախուսանքի տեսակ.

11) **զենքի պարագաներ**՝ զենքի կոթը, նշանոցը, պահեստատուփը, մաքրման հարմարանքները, կրակմարիչի կամ զենքի փողի արգելակի փոխհատուցիչի տեսակները կամ այն լրասարքը, որը նախագծված կամ հարմարեցված է հրազենը պահելու, տեղադրելու, փոխադրելու կամ հրազենին կցելու, ամրացնելու միջոցով օպտիկական գիշերային կամ ջերմային պատկերիչի միջոցով զենքի նշանառության հնարավորությունները բարելավելու համար: Սույն օրենքի իմաստով՝ զենքի պարագա է համարվում նաև զենքի ցանկացած այլ լրասարք, որը չի համարվում զենքի հիմնական բաղկացուցիչ մաս կամ չի փոխարինում դրան.

12) **զենք պահել**՝ զենքին տիրապետում՝ զենք պահելու և կրելու կամ զենք պահելու և օգտագործելու թույլտվություն ունեցող ֆիզիկական անձի բնակության, իսկ իրավաբանական անձի գտնվելու վայրում՝ զենքի հետ վարվելու անվտանգության կանոնների պահպանմամբ.

13) **զենք կրել**՝ պահելու համար նախատեսված տարածքից դուրս զենքի տեղաշարժն անձի վրա ամրացված, կախված, պայուսակում դրված կամ ձեռքում բռնած վիճակում, իսկ նետողական զենքի դեպքում՝ նետման համար նախատեսված և դրա վրա տեղադրված նետվող հարմարանքով.

14) **զենք տեղափոխել (փոխադրել)**՝ պահելու համար նախատեսված տարածքից դուրս հրազենի տեղաշարժը լիցքաթափված վիճակում, առանձնացված պահեստատուփով, դրված պահպանակի վրա՝ ծածկաշապիկով կամ պատյանով կամ

տեղափոխման համար նախատեսված գործարանային այլ տարայով, նետողական զենքի դեպքում՝ փաթեթավորված և անձի վրա չամրացված վիճակում, իսկ նետվող հարմարանքը պետք է լինի առանձնացված.

15) **ուսումնական զենք**՝ միայն ուսումնական նպատակների համար օգտագործվող սարք կամ առարկա, որը հնարավոր չէ վերանորոգելով դարձնել աշխատունակ և կրակելու համար պիտանի.

16) **համապատասխանության գնահատում**՝ սույն օրենքի իմաստով՝ հավատարմագրված և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նշանակված համապատասխանության գնահատման մարմնի կողմից համապատասխանության հավաստման գործունեության իրականացում, որի արդյունքով տեխնիկական կանոնակարգման օբյեկտ հանդիսացող քաղաքացիական և ծառայողական զենքի, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերի և փամփուշտների համապատասխանության գնահատման փաստաթղթի տրամադրմամբ հավաստվում է համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ (տեխնիկական կանոնակարգով) և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վավերացված Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան ընդունված փաստաթղթերով սահմանված պահանջներին.

17) **համապատասխանության սերտիֆիկատ՝** սույն օրենքի իմաստով՝ հավատարմագրված և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նշանակված համապատասխանության գնահատման մարմնի տված փաստաթուղթ, որը հավաստում է արտադրանքի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ (տեխնիկական կանոնակարգով) և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վավերացված Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան ընդունված փաստաթղթերով սահմանված պահանջներին.

18) **զենքի նորոգում**՝ զենքի հիմնական մասերը փոխելու կամ վերանորոգելու միջոցով զենքն աշխատունակ դարձնելը, զենքի ոչ հիմնական մասերի կոնստրուկտիվ փոփոխությունը, որի դեպքում զենքի մարտավարատեխնիկական բնութագրերը չեն փոխվում.

19) **զենքի հարդարում՝** զենքի գեղարվեստական ձևավորում, որի դեպքում զենքի մարտավարատեխնիկական բնութագրերը չեն փոխվում.

20) **զենքի հավաքածու**՝ ընտրված զենքերի ամբողջություն, որը կարող է ունենալ ճանաչողական, պատմական, գիտական, գեղարվեստական, մշակութային և տեղեկատվական նշանակություն.

21) **զենքի վերաբերյալ տեղեկությունների պետական կադաստր**՝ Հայաստանի Հանրապետությունում շրջանառվող քաղաքացիական և ծառայողական զենքի, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերի և փամփուշտների հաշվառման էլեկտրոնային տեղեկատվական համակարգ.

~~22) **հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձինք**՝ կազմակերպություններ, որոնք օրենսդրությամբ սահմանված կարգով կատարում են այնպիսի գործառույթներ, որոնք կապված են ծառայողական զենք օգտագործելու կամ գործադրելու հետ.~~

~~23) **գազային զենք**՝ տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխան՝ արցունքաբեր կամ գրգռիչ նյութերով լիցքավորված փամփուշտներով, ատրճանակի կամ ռևոլվերի նմանվող սարք, դրանց փամփուշտները կամ փչող (ցրող) սարք՝ նախատեսված կենդանի նշանակետին ժամանակավորապես վնասազերծելու համար.~~

~~24) **մալած զենք**՝ կրակելու համար ոչ պիտանի դարձրած զենք.~~

~~25) **գազային փամփուշտ**՝ գազային զենքից կրակելու համար նախատեսված համասարք, որը պարկուճի միջոցով մեկ ամբողջության մեջ ներառում է բռնկվող միջոցը (հրապատիճը), նետողական լիցքը, խցանը և Կառավարության սահմանած՝ օգտագործման թույլատրված արցունքաբեր կամ գրգռիչ նյութը, որը նախատեսված չէ մարդուն մահ պատճառելու համար.~~

~~26) **լուսաձայնային փամփուշտ**՝ հրազենից, գազային զենքից կրակելու համար նախատեսված համասարք, որը պարկուճի միջոցով մեկ ամբողջության մեջ ներառում է բռնկվող միջոցը (հրապատիճը) և լուսաձայնային գործողության լիցքը, որը նախատեսված չէ կենդանի կամ այլ նշանակետ խոցելու համար.~~

~~27) **ուսումնական փամփուշտ**՝ միայն ուսումնական նպատակների համար օգտագործվող համասարք՝ բաղկացած պարկուճից և բռնկվող լիցքից նետվող առարկայից, որը պատրաստված է բնօրինակի չափերին և կառուցվածքին համապատասխան, և որի պարկուճի մեջ բացակայում է նետողական լիցքը, կամ այն փոխարինված է նույն կշռով այլ՝ ոչ այրվող նյութով, իսկ բռնկվող միջոցը (հրապատիճը) վնասված (կրակված) է: Ուսումնական փամփուշտի պարկուճի վրա պետք է լինի տարբերակիչ գծատիպ օղակաձև սեղմվածք.~~

~~28) **անգնդակ փամփուշտ**՝ միայն ուսումնական, վարժանքային կրակոցներ կատարելու նպատակով օգտագործվող համասարք, որը նախատեսված չէ կենդանի կամ այլ նշանակետի խոցման համար, և որը պարկուճի միջոցով մեկ ամբողջության մեջ ներառում է բռնկվող միջոցը (հրապատիճը), նետողական լիցքը, և որի կազմի մեջ բացակայում է նետվող առարկան, կամ առկա է հեշտ ոչնչացվող նյութից (պոլիմեր, թուղթ) փոխարինողը.~~

~~29) **պայթուցիկ նյութ**՝ արտաքին ազդեցության պայմաններում պայթելու ունակ քիմիական նյութ կամ նյութերի խառնուրդ.~~

~~30) **պայթեցման սարք**՝ հատուկ պատրաստված և որոշակի պայմաններում պայթելու ունակ ցանկացած սարք.~~

~~31) **ազդանշանային սարք**՝ համասարք, որը նախատեսված է անգնդակ փամփուշտով լուսային, ծխային կամ ձայնային ազդանշան արձակելու համար.~~

~~32) **ազդանշանային փամփուշտ**՝ հրազենից կամ ազդանշանային սարքից կրակելու համար նախատեսված համասարք, որը պարկուճի միջոցով մեկ~~

~~ամբողջության մեջ ներառում է բռնկվող միջոցը (հրապատիճը), նետողական լիցքը և նետվող լիցքը՝ լուսային, ձայնային կամ ծխային ազդանշան տալու համար, որը նախատեսված չէ կենդանի կամ այլ նշանակետի խոցման համար.~~

~~33) **վառոդ՝** տարբեր բաղադրամասերից բաղկացած պայթուցիկ խառնուրդ, որը կարող է այրվել ըստ իր շերտերի զուգահեռության՝ առանց արտաքին միջավայրից թթվածնի ներթափանցման: Վառոդի՝ ըստ շերտերի զուգահեռության այրումը, որը չի վերածվում պայթյունի, այլ առաջ է բերում կայուն գազագոյացություն, հնարավորություն է տալիս կանոնավորելու գազագոյացման արագությունը.~~

~~34) **էլեկտրահարող սարք**՝ տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխան՝ ատրճանակի նմանվող սարք, կայծային պարպիչ և այլ կրովի էլեկտրահարող սարք, որոնք նախատեսված են կենդանի նշանակետը ժամանակավորապես վնասազերծելու համար.~~

~~35) **սահմանափակ խոցելիությամբ (վնասվածքային) հրազեն՝** կարճափող զենք և անփող զենք՝ նախատեսված վնասվածքային գործողության փամփուշտի, վառոդի կամ այլ լիցքի էներգիայի հաշվին ուղղորդված շարժում ստացած արկի միջոցով տարածության վրա գտնվող կենդանի նշանակետի մեխանիկական խոցման՝ վնասազերծման համար, որը նախատեսված չէ մահ պատճառելու համար.~~

~~36) **վնասվածքային գործողության փամփուշտ՝** ողորկափող հրազենից կամ սահմանափակ խոցելիությամբ (վնասվածքային) հրազենից կրակելու համար նախատեսված համասարք, որը պարկուճի միջոցով մեկ ամբողջության մեջ ներառում է բռնկվող միջոցը (հրապատիճը), նետողական լիցքը և վնասվածքային գործողության նետվող առարկան, որը նախատեսված չէ մարդուն մահ պատճառելու համար.~~

~~37) **պետական ռազմականացված կազմակերպություններ՝** Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն, Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայություն, Հայաստանի Հանրապետության արտաքին հետախուզության ծառայություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայություն, Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմիններ, Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտե, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտե, Հայաստանի Հանրապետության դատախազություն, Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայություն, պետական սուրհանդակային ծառայություն.~~

~~38) ***(կետն ուժը կորցրել է 13.07.23 ՀՕ-268-Ն)***~~

~~39) **հրաձգարան**՝ հրավաքանական անձանց պատկանող շինություն, տարածք կամ հողատարածք (այսուհետ՝ տարածք), որը հարմարեցված է հրաձգության համար: Հրաձգարանները կարող են լինել բաց, կիսափակ և փակ:~~

*(2-րդ հոդվածը լրաց. 23.12.22 ՀՕ-606-Ն, փոփ. 16.12.22 ՀՕ-475-Ն, 13.07.23 ՀՕ-268-Ն)*
*(13.07.23 ՀՕ-268-Ն օրենքն ունի եզրափակիչ մաս և անցումային դրույթներ)*

**Հոդված 2. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները**

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **ռազմական նշանակության արտադրանք**՝ զենք, ռազմամթերք, ռազմական տեխնիկա, ռազմական նշանակության գույք, ռազմական աշխատանքներ և ծառայություններ, ռազմական, կրթական, ռազմատեխնիկական կամ ռազմակիրառական գիտական կամ ռազմական նշանակության համար կիրառվող տեղեկատվություն, մտավոր գործունեության արդյունքներ, ներառյալ դրանց նկատմամբ բացառիկ իրավունքները (մտավոր սեփականություն).

2) **զենք**՝ սարք կամ առարկա, որը նախատեսված է կենդանի կամ այլ նշանակետ խոցելու, վնասազերծելու կամ ազդանշան արձակելու համար: Զենք չեն համարվում արտաքին տեսքով կամ կառուցվածքով զենքին նմանվող առարկաները, սարքերը կամ գործիքները, որոնք ունեն արտադրական, կենցաղային, տնտեսական, ուսումնական, մշակութային և դեկորատիվ նշանակություն.

3) **ձեռքի հրաձգային զենք**՝ (այսուհետ՝ հրազեն)՝ վառոդի կամ այլ լիցքի էներգիայի հաշվին (ուղղորդված շարժում ստացած նետվող առարկայի միջոցով) տարածության վրա գտնվող կենդանի կամ այլ նշանակետի մեխանիկական խոցման համար նախատեսված զենք, որի հիմնական բաղկացուցիչ մասերն են փողը, իրանը, փողատուփը, թմբուկը, փականակը, հարվածային մեխանիզմը.

4) **կարճ ակոսափող հրազեն**՝ 300 մմ-ից պակաս երկարություն ունեցող ակոսափող և 800 մմ-ից պակաս ընդհանուր երկարություն ունեցող հրազեն.

5) **ողորկափող հրազեն**՝ հրազեն, որն ունի միայն ողորկ անցուղով փող կամ փողեր.

6) **ակոսափող հրազեն**՝ հրազեն, որն ունի միայն ակոսավոր անցուղով փող կամ փողեր.

7) **սառը զենք**՝ կտրող, ծակող, ջարդող սարք, որը նախատեսված է մարդու մկանային ուժի օգնությամբ անմիջական շփման դեպքում կենդանի կամ այլ նշանակետ խոցելու և վնասազերծելու համար.

8) **նետողական զենք**՝ սարք, որը նախատեսված է մարդու մկանային ուժի կամ մեխանիկական սարքի օգնությամբ նպատակաուղղված շարժում ստացող՝ նետման համար հարմարեցված առարկաների (այսուհետ՝ նետվող հարմարանք) միջոցով հեռավորության վրա գտնվող մարդուն կամ այլ կենդանի կամ այլ նշանակետ խոցելու և վնասազերծելու համար.

9) **օդաճնշիչ զենք**՝ սարք, որը նախատեսված է սեղմված օդի կամ գազային նյութի էներգիայի հաշվին նետվող հարմարանքին 7,5 ջոուլ և դրանից ավել փողային

էներգիա ու նպատակաուղղված շարժում հաղորդելու միջոցով կենդանի կամ այլ նշանակետ խոցելու և վնասազերծելու համար.

10) **Օդաճնշիչ սարք՝** սարք, որը նախատեսված է սեղմված օդի կամ գազային նյութի էներգիայի հաշվին նետվող հարմարանքին մինչև 7,5 ջոուլ փողային էներգիա ու նպատակաուղղված շարժում հաղորդելու միջոցով նշանակետ խոցելու համար.

11) **ռազմամթերք**՝ նշանակետը խոցելու համար նախատեսված առարկաներ, սարքեր և նետվող հարմարանքներ, որոնք պարունակում են պայթուցիկ, նետողական, հրատեխնիկական, արտամղիչ լիցքեր, կամ դրանց համակցություն:

12) **փամփուշտ**՝ զենքից կրակելու համար նախատեսված համասարք, որը պարկուճի միջոցով մեկ ամբողջության մեջ ներառում է բռնկվող միջոց (հրապատիճ), նետողական լիցք (վառոդ) և նետվող հարմարանք (գնդակ, կոտորակ և այլն).

13) **զենքի շրջանառություն**՝ զենքի արտադրություն, առևտուր, վաճառք, հարդարում, նորոգում, փոխանցում, ձեռքբերում, հավաքածուների կազմում և դրանց ցուցադրում, հաշվառում, պահպանում, պահում, կրում, տեղափոխում (փոխադրում), օգտագործում, նվիրատվություն, ժառանգում, ոչնչացում, ներկրում Հայաստանի Հանրապետության տարածք և արտահանում Հայաստանի Հանրապետությունից (այսուհետ համապատասխանաբար՝ ներկրում և արտահանում), տարանցիկ փոխադրում և առևտրի միջնորդական գործունեություն.

14) **զենքի արտադրություն**՝ լիցենզիայի հիմքով՝ արտադրական գործընթացում զենքի, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերի, փամփուշտների և ռազմամթերքի հետազոտություն, մշակում, նորոգում, փորձարկում, պատրաստում, հավաքում, ռազմամթերքի, փամփուշտների, պարկուճների, դրանց բաղադրիչ մասերի պատրաստում.

15) **զենքով պարգևատրում**՝ սույն օրենքով սահմանված անձանց կողմից օրենքով վերապահված իրենց լիազորությունների շրջանակում սահմանված կարգով տրվող խրախուսանքի տեսակ.

16) **զենքի պարագաներ՝** զենքի կոթը, նշանոցը, պահեստատուփը, մարման հարմարանքները, բոցամարիչի և փողաբերանի արգելակի փողհատուցիչի տեսակները կամ այն լրասարքը, որը նախագծված կամ հարմարեցված է զենքը տեղադրելու, փոխադրելու կամ զենքին կցելու, ամրացնելու միջոցով օպտիկական, գիշերային կամ ջերմատեսիլ սարքի միջոցով զենքի նշանառության հնարավորությունները բարելավելու համար: Զենքի պարագա է համարվում նաև զենքի ցանկացած այլ լրասարք, որը չի համարվում զենքի հիմնական բաղկացուցիչ մաս կամ չի փոխարինում դրան.

17) **զենք պահել**՝ զենքին տիրապետում՝ զենք պահելու և կրելու թույլտվություն ունեցող ֆիզիկական անձի մշտական կամ ժամանակավոր բնակության վայրում, զենք

պահելու և օգտագործելու թույլտվություն ունեցող իրավաբանական անձի գտնվելու վայրում՝ զենքի հետ վարվելու անվտանգության կանոնների պահպանմամբ.

18) **զենք կրել՝** պահելու համար նախատեսված տարածքից դուրս, առանց տեղափոխելու կանոնների կիրառմամբ, զենքի տեղաշարժն անձի վրա ամրացված, կախված, պայուսակում կամ գրպանում դրված կամ ձեռքում բռնած վիճակում, իսկ նետողական զենքի դեպքում՝ նետման համար նախատեսված և դրա վրա տեղադրված նետվող հարմարանքով.

19) **զենք տեղափոխել (փոխադրել)՝** պահելու համար նախատեսված տարածքից դուրս զենքի տեղաշարժը լիցքաթափված վիճակում, ապահովիչ դետալը փակ, առանձնացված կամ դատարկ (առանց փամփուշտ) պահեստատուփով, ծածկաշապիկով կամ պատյանով կամ տեղափոխման համար նախատեսված գործարանային այլ տարայով, նետողական զենքի դեպքում՝ փաթեթավորված և անձի վրա չամրացված վիճակում, իսկ նետվող հարմարանքը պետք է լինի առանձնացված.

20) **ուսումնական զենք՝** ուսումնական նպատակների համար օգտագործվող սարք կամ առարկա, որը հնարավոր չէ վերանորոգելով դարձնել կրակելու համար պիտանի, ուսումնական զենքի նմանակ կարող է հանդիսանալ նաև մալած զենքը.

21) **զենքի նորոգում՝** զենքի հիմնական մասերը կամ այլ դետալները փոխելու կամ վերանորոգելու միջոցով զենքն աշխատունակ դարձնելը, որի դեպքում զենքի մարտավարատեխնիկական բնութագրերը չեն փոխվում.

22) **զենքի հարդարում՝** զենքի գեղարվեստական ձևավորում, որի դեպքում զենքի դետալները և մարտավարատեխնիկական բնութագրերը չեն փոխվում.

23) **զենքի հավաքածու՝** ընտրված զենքերի ամբողջություն, որը կարող է ունենա սիրողական, ճանաչողական, պատմական, գիտական, գեղարվեստական, մշակութային և տեղեկատվական նշանակություն.

24) **մալած զենք՝** կրակելու համար ոչ պիտանի դարձրած զենք.

25) **զենքի հաշվառման միասնական էլեկտրոնային շտեմարան՝** Հայաստանի Հանրապետության ներքին գործերի լիազոր մարմնի կողմից վարվող՝ շրջանառվող քաղաքացիական զենքի, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերի և փամփուշտների հաշվառման էլեկտրոնային տեղեկատվական համակարգ.

26) **գազային զենք՝** տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխան՝ արցունքաբեր կամ գրգռիչ նյութերով լիցքավորված փամփուշտներով ատրճանակի կամ ռևոլվերի նմանվող սարք, դրանց փամփուշտները կամ փչող (ցրող) սարք, որը նախատեսված է կենդանի կամ այլ նշանակետ ժամանակավորապես վնասազերծելու համար.

27) **գազային փամփուշտ՝** կրակելու համար նախատեսված համասարք, որը պարկուճի միջոցով մեկ ամբողջության մեջ ներառում է բռնկվող միջոցը (հրապատիճը), նետողական լիցքը, խցանը և Կառավարության սահմանած՝

օգտագործման թույլատրված արցունքաբեր կամ գրգռիչ նյութը, որը նախատեսված չէ մարդուն մահ պատճառելու համար.

28) **լուսաձայնային փամփուշտ**՝ կրակելու համար նախատեսված համասարք, որը պարկուճի միջոցով մեկ ամբողջության մեջ ներառում է բռնկվող միջոցը (հրապատիճը) և լուսաձայնային գործողության լիցքը, որը նախատեսված չէ կենդանի կամ այլ նշանակետ խոցելու համար.

29) **ուսումնական փամփուշտ**՝ ուսումնական նպատակների համար օգտագործվող համասարք՝ բաղկացած պարկուճից և բռնկվող լիցքից նետվող առարկայից, որը պատրաստված է բնօրինակի չափերին և կառուցվածքին համապատասխան, և որի պարկուճի մեջ բացակայում է նետողական լիցքը, կամ այն փոխարինված է նույն կշռով այլ՝ ոչ այրվող նյութով, իսկ բռնկվող միջոցը (հրապատիճը) վնասված (կրակված) է: Ուսումնական փամփուշտի պարկուճի վրա պետք լինեն տարբերակիչ սեղմվածքներ:

30) **անգնդակ փամփուշտ**՝ միայն ուսումնական, վարժանքային կամ ազդանշանային կրակոցներ կատարելու նպատակով օգտագործվող համասարք, որը նախատեսված չէ կենդանի կամ այլ նշանակետի խոցման համար, և որը պարկուճի միջոցով մեկ ամբողջության մեջ ներառում է բռնկվող միջոցը (հրապատիճը), նետողական լիցքը, և որի կազմի մեջ բացակայում է նետվող առարկան, կամ առկա է հեշտ ոչնչացվող նյութից (պոլիմեր, թուղթ) փոխարինողը.

31) **պայթուցիկ նյութ**՝ արտաքին ազդեցության պայմաններում պայթելու ունակ քիմիական նյութ կամ նյութերի խառնուրդ.

32) **պայթեցման սարք**՝ հատուկ պատրաստված և որոշակի պայմաններում պայթելու ունակ ցանկացած սարք.

33) **ազդանշանային զենք**՝ սարք, որը նախատեսված է անգնդակ փամփուշտով լուսային, ծխային կամ ձայնային ազդանշան արձակելու համար.

34) **ազդանշանային փամփուշտ**՝ զենքից կրակելու համար նախատեսված համասարք, որը պարկուճի միջոցով մեկ ամբողջության մեջ ներառում է բռնկվող միջոցը (հրապատիճը), նետողական լիցքը և նետվող լիցքը՝ լուսային, ձայնային կամ ծխային ազդանշան տալու համար, որը նախատեսված չէ կենդանի կամ այլ նշանակետի խոցման համար.

35) **վառոդ**՝ տարբեր բաղադրամասերից բաղկացած պայթուցիկ խառնուրդ, որը կարող է այրվել ըստ իր շերտերի զուգահեռության՝ առանց արտաքին միջավայրից թթվածնի ներթափանցման: Վառոդի՝ ըստ շերտերի զուգահեռության այրումը, որը չի վերածվում պայթյունի, այլ առաջ է բերում կայուն գազագոյացություն, հնարավորություն է տալիս կանոնավորելու գազագոյացման արագությունը.

36) **էլեկտրահարող սարք**՝ տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխան՝ ատրճանակի նմանվող սարք, կայծային պարպիչ և այլ կրովի

էլեկտրահարող սարք, որոնք նախատեսված են կենդանի նշանակետը ժամանակավորապես վնասազերծելու համար.

37) **սահմանափակ խոցելիությամբ (վնասվածքային) հրազեն**՝ կարճափող զենք և անփող զենք՝ նախատեսված վնասվածքային գործողության փամփուշտի, վառոդի կամ այլ լիցքի էներգիայի հաշվին ուղղորդված շարժում ստացած արկի միջոցով տարածության վրա գտնվող կենդանի նշանակետի մեխանիկական խոցման՝ վնասազերծման համար, որը նախատեսված չէ մահ պատճառելու համար.

38) **վնասվածքային գործողության փամփուշտ**՝ ողորկափող հրազենից կամ սահմանափակ խոցելիությամբ (վնասվածքային) հրազենից կրակելու համար նախատեսված համասարք, որը պարկուճի միջոցով մեկ ամբողջության մեջ ներառում է բռնկվող միջոցը (հրապատիճը), նետողական լիցքը և վնասվածքային գործողության նետվող առարկան, որը նախատեսված չէ մարդուն մահ պատճառելու համար.

39) **հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձինք**՝ կազմակերպություններ, որոնք օրենսդրությամբ սահմանված կարգով կատարում են այնպիսի գործառույթներ, որոնք կապված են զենք օգտագործելու կամ գործադրելու հետ.

40) **պետական ռազմականացված կազմակերպություններ**՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն, Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայություն, Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմիններ, Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտե, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտե, Հայաստանի Հանրապետության դատախազություն, Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայություն, պետական սուրհանդակային ծառայություն.

41) **հրաձգարան**՝ իրավաբանական անձանց պատկանող շինություն, տարածք կամ հողատարածք (այսուհետ՝ տարածք), որը հարմարեցված է հրաձգության համար: Հրաձգարանները կարող են լինել բաց, կիսափակ և փակ.

42) **հանրապետական գնդակապարկուճային հաշվառման քարտադարան**՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի լիազոր մարմնի կողմից վարվող՝ Հայաստանի Հանրապետության տարածքում կատարված չբացահայտված հանցագործությունների դեպքի վայրերից վերցված (հայտնաբերված) ակոսափող հրազեններից կրակված պարկուճների, գնդակների և զենքի հետքեր ունեցող փամփուշտների, Հայաստանի Հանրապետության տարածքում շրջանառվող

ակոսափող զենքի (մինչև 12,7 մմ տրամաչափի), ինչպես նաև առգրավված, հայտնաբերված, կամավոր հանձնված, կորած (հափշտակված) զենքերի ձգաքանական հետազոտման ենթարկված և նմուշառված՝ գնդակների, պարկուճների հավաքածու, որտեղ հաշվառումն իրականացվում է բնօրինակներով և էլեկտրոնային եղանակով.

43) **համապատասխանության գնահատում՝** սույն օրենքի իմաստով՝ հավատարմագրված և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նշանակված համապատասխանության գնահատման մարմնի կողմից համապատասխանության հավաստման գործունեության իրականացում, որի արդյունքով տեխնիկական կանոնակարգման օբյեկտ հանդիսացող քաղաքացիական զենքի փամփուշտների և հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերի համապատասխանության գնահատման փաստաթղթի տրամադրմամբ հավաստվում է համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ (տեխնիկական կանոնակարգով) և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վավերացված Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան ընդունված փաստաթղթերով սահմանված պահանջներին.

44) **համապատասխանության սերտիֆիկատ՝** սույն օրենքի իմաստով՝ հավատարմագրված և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նշանակված համապատասխանության գնահատման մարմնի տված փաստաթուղթ, որը հավաստում է արտադրանքի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ (տեխնիկական կանոնակարգով) և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վավերացված Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան ընդունված փաստաթղթերով սահմանված պահանջներին:»:

**Հոդված 3. Զենքի տեսակները**

1. Զենքը, ըստ համապատասխան սուբյեկտների կողմից օգտագործման նպատակայնության, հիմնական չափանիշների և բնութագրող հատկանիշների, լինում է՝

1) քաղաքացիական զենք.

~~2) ծառայողական զենք.~~

3) ծեռքի մարտական հրաձգային զենք (այսուհետ՝ մարտական զենք):

2. Հայաստանի Հանրապետությունում շրջանառության մեջ գտնվող զենքը և ռազմամթերքը պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վավերացված Հայաստանի Հանրապետության միջազգային

պայմանագրերին համապատասխան ընդունված փաստաթղթերով սահմանված պահանջներին:

**Հոդված 4. Քաղաքացիական զենքը**

1. Քաղաքացիական է համարվում այն զենքը, որը նախատեսված է քաղաքացիների ինքնապաշտպանության, սիրողական և սպորտային հրաձգության, որսորդության, սպորտային ու մշակութային միջոցառումների ընթացքում, ինչպես նաև օրենքով սահմանված այլ դեպքերում օգտագործելու համար: Քաղաքացիական ~~զենք համարվող հրազենը~~ զենքն իր կառուցվածքով պետք է բացառի կրակահերթով կրակելու հնարավորությունը:

~~2. Քաղաքացիական զենքի տեսակներն են՝~~

~~1) գազային զենք.~~

~~2) օդաճնշիչ զենք.~~

~~3) ողորկ-երկարափող հրազեն (այսուհետ՝ ողորկափող հրազեն).~~

~~4) համակցված հրազեն (ողորկափող և ակոսափող), այդ թվում՝ փոփոխվող, ներդրվող ակոսավոր փողով.~~

~~5) ակոսափող՝ 1500 մմ-ից ոչ ավել երկարություն և 12.7 մմ-ից ոչ ավել տրամաչափ ունեցող փողով հրազեն.~~

~~6) սառը զենք.~~

~~7) նետողական զենք:~~

2. Քաղաքացիական զենքի տեսակներն են՝

1) ողորկափող հրազեն, այդ թվում՝ 140 մմ-ից ոչ ավելի երկարության ակոսավոր մասով.

2) համակցված հրազեն, այդ թվում՝ փոփոխվող, ներդրվող ակոսավոր փողով.

3) ակոսափող հրազեն՝ 1500 մմ-ից ոչ ավել երկարություն և 12.7 մմ-ից ոչ ավել տրամաչափ ունեցող փողով.

4) կարճ ակոսափող հրազեն.

5) օդաճնշիչ զենք՝ ոչ ավելի, քան 25 ջոուլ փողային էներգիայով.

6) գազային զենք.

7) ազդանշանային զենք.

8) սառը զենք.

9) նետողական զենք:

***(4-րդ հոդվածը փոփ. 13.07.23 ՀՕ-268-Ն)***

***(13.07.23 ՀՕ-268-Ն օրենքն ունի եզրափակիչ մաս և անցումային դրույթներ)***

~~**Հոդված 5. Ծառայողական զենքը**~~

~~1. Ծառայողական է համարվում այն զենքը, որը նախատեսված է պետական մարմինների և կազմակերպությունների պաշտոնատար անձանց, պետական~~

~~ռազմականացված կազմակերպություններում ծառայողների (ծառայածների) կամ հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձանց աշխատողների համար, որոնց օրենսդրությամբ թույլատրվում է կրել, պահել և օգտագործել այդ զենքը ինքնապաշտպանության կամ օրենքով նրանց վրա դրված՝ քաղաքացիների կյանքի, առողջության, սեփականության պաշտպանության, շրջակա միջավայրի, բնական պաշարների, արժեքավոր և վտանգավոր բեռների, հատուկ թղթակցության պահպանության պարտականությունների կատարման համար:~~

~~2. Ծառայողական զենք է մինչև 800 ջոուլ փողային էներգիայով կարճ ակոսափող հրազենը, որի փամփուշտները տարբերվում են մարտական զենքի փամփուշտներից, և իր կառուցվածքով զուրկ է կրակահերթով կրակելու հնարավորությունից:~~

~~3. Ծառայողական զենքի փամփուշտի գնդակը չի կարող ունենալ կարծր նյութերից բաղկացած միջուկ:~~

~~4. Օրենսդրության համաձայն՝ հատուկ պետական պաշտպանության ենթակա անձինք իրավունք ունեն ժամանակավոր օգտագործման համար ստանալու ծառայողական զենք՝ Կառավարության սահմանած կարգով:~~

~~5. Պետական ռազմականացված կազմակերպություններում 20 և ավել տարի զինվորական ծառայության ստաժ և առնվազն «գնդապետ» զինվորական կոչումով գործող և պահեստազորի սպաներն իրավունք ունեն զենք ձեռք բերելու թույլտվության առկայության դեպքում ձեռք բերելու մեկ միավոր ծառայողական զենք՝ պահելու և կրելու թույլտվությամբ, որն օգտագործելու իրավունք ունեն միայն լիցենզավորված հրաձգարանների տարածքում: Զենքը ձեռք է բերվում սույն օրենքով սահմանված կարգով:~~

~~6. Հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձանց զենքը տրվում է պահելու և օգտագործելու, իսկ հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձանց աշխատողներին՝ ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ կրելու իրավունքով:~~

~~7. Հրաձգարան գործարկելու լիցենզիա ունեցող իրավաբանական անձանց ծառայողական զենքը տրվում է պահելու և օգտագործելու իրավունքով:~~

~~8. Օրենքով նախատեսված դեպքերում այլ մարմինների ղեկավար աշխատողների և պետական հատուկ ծառայություն իրականացնող անձանց կողմից ծառայողական զենք օգտագործելու դեպքում այն տրվում է պահելու և կրելու իրավունքով:~~

~~9. Պետական ռազմականացված կազմակերպություններում ծառայողական զենքի շրջանառության կարգը սահմանում է Կառավարությունը:~~

Հոդված 5. <u>Քաղաքացիական կարճ ակոսափող հրազենը</u>

<u>1. Քաղաքացիական կարճ ակոսափող հրազենը (այսուհետ՝ Կարճ ակոսափող հրազեն) նախատեսված է պետական մարմինների և կազմակերպությունների պաշտոնատար անձանց, պետական ռազմականացված կազմակերպություններում</u>

ծառայողների (ծառայածների) կամ հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձանց աշխատողների համար, որոնց օրենսդրությամբ թույլատրվում է պահել և կրել, պահել և օգտագործել այդ զենքը օրենքով նրանց վրա դրված՝ ինքնապաշտպանության, քաղաքացիների կյանքի, առողջության, սեփականության պաշտպանության, շրջակա միջավայրի, բնական պաշարների, արժեքավոր և վտանգավոր բեռների, հատուկ թղթակցության պահպանության պարտականությունների կատարման համար:

2. Անձնական օգտագործման համար ընդամենը մեկ միավոր կարճ ակոսափող հրազեն ձեռք բերելու իրավունք ունի պետական ռազմականացված կազմակերպություններում առնվազն 20 տարի զինվորական ծառայության ստաժ ունեցող և առնվազն «փոխգնդապետ» զինվորական կոչում ունեցող գործող կամ պահեստազորի սպան.

3. Կարճ ակոսափող հրազենի փամփուշտի գնդակը չի կարող ունենալ կարծր նյութերից բաղկացած միջնաձող:

4. Օրենսդրության համաձայն՝ հատուկ պետական պաշտպանության ենթակա անձինք իրավունք ունեն ժամանակավոր օգտագործման համար ստանալու կարճ ակոսափող հրազեն՝ Կառավարության սահմանած կարգով:

5. Հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձանց Կարճ ակոսափող հրազենը տրվում է պահելու և օգտագործելու, իսկ հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձանց աշխատողներին՝ ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ պահելու և կրելու իրավունքով:

6 Հրաձգարան գործարկելու լիցենզիա ունեցող իրավաբանական անձանց Կարճ ակոսափող հրազեն տրվում է պահելու և օգտագործելու իրավունքով:

7. Օրենքով նախատեսված դեպքերում այլ մարմինների ղեկավար աշխատողների և պետական հատուկ ծառայություն իրականացնող անձանց կողմից Կարճ ակոսափող հրազեն օգտագործելու դեպքում այն տրվում է պահելու և կրելու իրավունքով:

**Հոդված 6. Մարտական զենքը**

~~1. Մարտական զենք է համարվում ռազմական նշանակության այն արտադրանքը, որը, օրենսդրությանը համապատասխան, ընդունված է օգտագործել պետական ռազմականացված կազմակերպությունների սպառազինության մեջ և նախատեսված է մարտական ու օպերատիվ ծառայողական խնդիրների լուծման համար: Մարտական զենքը կարող է ունենալ կրակահերթով կրակելու հնարավորություն:~~

1.Մարտական է համարվում այն զենքը, որը նախատեսված է մարտական ու օպերատիվ-ծառայողական խնդիրների լուծման համար և օրենսդրությանը համապատասխան ընդունված է օգտագործել պետական ռազմականացված կազմակերպությունների սպառազինության մեջ, բացառությամբ քաղաքացիական զենքի: Մարտական զենքը քաղաքացիական զենքից տարբերվում է քաղաքացիական զենքի տեսակների՝ սույն օրենքով սահմանված չափանիշներից և կրակահերթով կրակելու հնարավորությամբ:

2. Մարտական զենքի և դրա փամփուշտների նոր տեսակները (նմուշները), որոնց կառուցվածքային չափանիշներն արդեն իսկ սպառազինության մեջ գտնվող նույնանման զինատեսակների համեմատությամբ չեն ավելացնում դրանց խոցելիության ուժը, պետական ռազմականացված կազմակերպությունների ղեկավարներն ընդունում են սպառազինման՝ Կառավարության սահմանած կարգով:

3. ~~Պետական ռազմականացված կազմակերպություններում~~ Մարտական զենքի շրջանառության կարգը սահմանում է Կառավարությունը:

## Հոդված 7. Զենքի շրջանառության վրա տարածվող սահմանափակումները

1. Արգելվում է, որպես քաղաքացիական ~~և ծառայողական~~ զենք, շրջանառության մեջ մտցնել՝

1) 300 մմ-ից պակաս երկարություն ունեցող ակոսափող, 400 մմ-ից պակաս երկարություն ունեցող ողորկափող՝ փողով կամ փողային տուփով և փողով, և 800 մմ-ից պակաս ընդհանուր երկարություն ունեցող հրազեն, ինչպես նաև այնպիսի կառուցվածքով երկարափող հրազեն, որը թույլ է տալիս դրա երկարությունը կարճացնել 800 մմ-ից՝ առանց կրակ արձակելու ունակության կորստի, բացառությամբ կարճ ակոսափող հրազենի.

2) ~~ինքնաշեն հրազեն~~ ինքնաշեն զենք, իր ձևով և տեսքով այլ առարկաների ~~նմանեցված հրազեն~~ նմանեցված զենք, կառուցվածքային փոփոխության ենթարկված ակոսափող և ողորկափող հրազեն՝ առանց կրակելու ունակության կորստի.

3) ակոսափող հրազենի փամփուշտներով կրակելու համար հարմարեցված ողորկափող հրազեն.

4) ակոսափող հրազենի փամփուշտների չափերին համապատասխան պատրաստված ողորկափող հրազեն.

5) գազային զենք կամ ազդանշանային ~~սարք~~ զենք, որի կառուցվածքը հնարավորություն է տալիս կրակելու հրազենի փամփուշտներ.

6) լախտեր, կռփազենք (կաստետներ), բումերանգներ և որպես զենք կիրառելու համար հարմարեցված հարվածող, ջարդող, մանրացնող և նետողական հատկություններով օժտված այլ առարկաներ, բացառությամբ սպորտային գործիքների.

7) զրահահար, հրկիզող, պայթուցիկ կամ լուսածիր գործողության գնդակով փամփուշտներ.

8) տեխնիկական կանոնակարգով օգտագործման համար չթույլատրված նյարդակաթվածահարող, թունավոր և այլ ներգործող նյութերով լիցքավորված փամփուշտներ, մեխանիկական փոշեցրիչներ, աերոզոլային և էլեկտրահարող սարքեր, ~~երեք~~ մեկ մետրից ավել հեռավորության վրա գտնվող անձի առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու ունակությամբ օժտված գազային զենք.

9) Կառավարության հաստատած բռեագիտական պահանջներին չհամապատասխանող տեխնիկական բնութագիր ունեցող զենք և ռազմամթերք.

10) զենք և այլ առարկաներ, որոնց խոցելու ունակությունը պայմանավորված է էլեկտրամագնիսական, լուսային, ջերմային, ենթաձայնային կամ ուլտրաձայնային ճառագայթման օգտագործմամբ.

11) սահմանափակ խոցելիությամբ (վնասվածքային) հրազեն և վնասվածքային գործողության փամփուշտ, բացառությամբ պետական ռազմականացված կազմակերպությունների.

12) ~~90 մմ-ից ավել երկարության շեղբով կամ սայրով սառը զենք, որի հատուկ կոճակը կամ լծակը սեղմելու միջոցով շեղբը կամ սայրը ծանրության ուժի կամ արագացված շարժման ազդեցությամբ դուրս է գալիս բռնակից և ինքնաբերաբար ամրակցվում, բացառությամբ մշակութային արժեք ունեցող, այդ թվում՝ պատմական նշանակություն ունեցող սառը զենքի, դրա պատճենների և կրկնօրինակների:~~

12) 90 մմ-ից ավել երկարության շեղբով կամ սայրով սառը զենք, դանակ կամ դաշույն, որի շեղբը կամ սայրը դուրս է գալիս բռնակից հատուկ կոճակը կամ լծակը սեղմելու միջոցով կամ ծանրության ուժի կամ արագացված շարժման ազդեցությամբ և ինքնաբերաբար ամրակցվում, բացառությամբ մշակութային արժեք ունեցող, այդ թվում՝ պատմական նշանակություն ունեցող սառը զենքի, դանակի կամ դաշույնի, դրանց պատճենների և կրկնօրինակների:

2. Արգելվում է՝

1) 7.5 ջոուլ փողային էներգիայից ավել էներգիայով ~~և~~ կամ 4.5 մմ տրամաչափը գերազանցող օդաճնշիչ զենք, սառը և նետողական զենք օգտագործելն սպորտային օբյեկտներից և հրաձգարաններից դուրս, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք կարող են օգտագործվել նաև գիտահետազոտական կամ կանխարգելիչ աշխատանքներ կատարելու նպատակով կենդանիներին ներարկելու համար.

2) ~~քաղաքացիական և ծառայողական զենքի վրա անաղմուկ հրաձգության կամ գիշերային նշանառության հարմարանքներ տեղադրելը, բացառությամբ որսորդության և սպորտային հրաձգության համար նախատեսված նշանոցների, գիշերային նշանոցների և նշանառության հարմարանքների, կոթերի և այլ պարագաների, որոնք չեն հանգեցնում զենքի հիմնական մասերի փոփոխության.~~

2) քաղաքացիական զենքի վրա անաղմուկ հրաձգության նպատակով կառուցված կամ արտադրված հարմարանքներ տեղադրելը.

3) զենք ուղարկել կամ առաքել փոստով կամ ուղեբեռով.

4) հավաքների կամ հանրային միջոցառումների մասնակցելիս քաղաքացիների կողմից զենք կրելը կամ տեղափոխելը (փոխադրելը).

5) քաղաքացիական զենք (բացառությամբ գազային զենքի) կրելը, բացառությամբ սիրողական և սպորտային հրաձգությամբ, որսորդությամբ զբաղվելու և մշակութային միջոցառումներին մասնակցելու ընթացքում.

6) տեխնիկական կանոնակարգով օգտագործման համար արգելված՝ թունավոր նյութերով լիցքավորված ատրճանակների (ռևոլվերների) նմանվող սարքերի և դրանց փամփուշտների, ատրճանակների նմանվող սարքերի, կայծային պարպիչների և այլ կրովի էլեկտրահարող սարքերի շրջանառությունը.

7) էլեկտրահարող սարք հանդիսացող ատրճանակի նմանվող՝ հեռահար կամ լարի միջոցով էներգիա փոխանցող տայզերի ձեռքբերումը, բացառությամբ պետական ռազմականացված կառույցների.

8) Հայաստանի Հանրապետության տարածքում շրջանառության համար ներկայացված՝ տեխնիկական կանոնակարգին չհամապատասխանող զենք, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասեր և փամփուշտներ վաճառելը, փոխանցելը և ձեռք բերելը.

9) շրջանառության մեջ դնել զենք, որի խոցելու ունակությունը պայմանավորված է ռադիոակտիվ ճառագայթների, քիմիական և կենսաբանական գործոնների օգտագործմամբ.

~~10) ինքնապաշտպանության նպատակով քաղաքացիների կողմից սառը զենք կրելը.~~

11) ողորկափող հրազեն օգտագործելը բնակավայրերում, բնակավայրերից, մայրուղիներից, միջպետական և միջհամայնքային նշանակության ճանապարհներից 500 մետր, իսկ ակոսափող հրազեն՝ ~~5000~~ 3000 մետր հեռավորությունից մոտ տարածքում, բացառությամբ հրաձգարանների և ծայրահեղ անհրաժեշտության դեպքերի:

***(7-րդ հոդվածը փոփ. 13.07.23 ՀՕ-268-Ն)***

***(13.07.23 ՀՕ-268-Ն օրենքն ունի եզրափակիչ մաս և անցումային դրույթներ)***

**Հոդված 8. Քաղաքացիական ~~և ծառայողական~~ զենքի, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերի և փամփուշտների համապատասխանության գնահատումը**

1. Հայաստանի Հանրապետության տարածքում արտադրվող և ներկրվող քաղաքացիական ~~և ծառայողական~~ զենքի, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերի և փամփուշտների բոլոր մոդելները ենթակա են պարտադիր համապատասխանության գնահատման՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. Ներկրված քաղաքացիական ~~և ծառայողական~~ զենքը, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերը և փամփուշտները ներկրվելուց հետո ենթակա են պահեստավորման և համապատասխանության գնահատման:

3. Համապատասխանության գնահատում չի պահանջվում ներկրվող հետևյալ զենքերի դեպքում.

1) ցուցահանդեսների ժամանակ օտարերկրյա մասնակցի կողմից ցուցադրման նպատակով ներկրվելու ժամանակ, եթե առկա է ցուցահանդեսի անցկացման պատասխանատու իրավաբանական անձի հրավերը կամ նրա հետ կնքված պայմանագիրը, ինչպես նաև սպորտային միջոցառման կամ որսի մասնակցելու նպատակով օտարերկրյա քաղաքացիների կողմից ներկրվող զենքերի համար, եթե առկա է հրավերը կամ պայմանագիրը.

2) քաղաքացիական ~~և ծառայողական~~ զենքի արտադրության լիցենզիա ունեցող իրավաբանական անձանց կողմից արտադրական նպատակների համար ներկրվող քաղաքացիական ~~և ծառայողական~~ զենքի եզակի նմուշների, ձևերի և մոդելների դեպքում.

3) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի համաձայն ներկրվող կամ տարանցիկ փոխադրվող զենքերի դեպքում:

4. Համապատասխանության սերտիֆիկատ չունեցող զենքը, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերը և փամփուշտները ենթակա են առգրավվելու, վերցվելու և ոչնչացվելու՝ Կառավարության սահմանած կարգով:

**Հոդված 10. Լիցենզավորմանը ներկայացվող հիմնական պահանջները**

1. ~~Քաղաքացիական և ծառայողական~~ Ռազմական նշանակության արտադրանքի արտադրությունը, Ռազմական նշանակության արտադրանքի տարանցիկ փոխադրումը և առևտրի միջնորդական գործունեությունը, զենքի արտադրությունը, առևտուրը, հարդարումը, հրաձգարանի գործարկումը Հայաստանի Հանրապետության տարածքում ենթակա են լիցենզավորման:

2. ~~Քաղաքացիական և ծառայողական~~ զենքի արտադրության և ռազմական նշանակության արտադրանքի արտադրության լիցենզիաները տալիս է Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը:

3. Քաղաքացիական ~~և ծառայողական~~ զենքի առևտրի, հարդարման, հրաձգարանի գործարկման լիցենզիաները տալիս է ներքին գործերի բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինը:

4. Լիցենզիաները տրվում են անժամկետ:

5. Լիցենզավորվող կազմակերպություններում զենքի հետ առնչվող աշխատողների նկատմամբ կիրառվում են սույն օրենքով նախատեսված սահմանափակումները:

6. Լիցենզավորվող կազմակերպությունները պարտավոր են ապահովել օրենքով և համապատասխան լիցենզավորման կարգերով սահմանված՝ զենքի զետեղարաններին, պահոցներին, պահեստներին և առևտրի սրահներին ներկայացվող պահանջները:

7. Լիցենզիայի տրամադրման համար գանձվում է պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված կարգով և չափով:

8. Լիցենզիա ստանալու դիմումը համապատասխան մարմինը քննարկում է դիմումն ստանալու օրվանից հաշված՝ 23 աշխատանքային օրվա ընթացքում: Անհրաժեշտության դեպքում նշված ժամկետը կարող է երկարաձգվել օրենքով սահմանված կարգով: Դիմումում նշվում են տեղեկություններ արտադրության, առևտրի, հարդարման ենթակա զենքի տեսակի, դրա արտադրության լիակատար անվտանգության, հաշվառման և պահպանության ապահովման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների մասին: Դիմողը պարտավոր է ներկայացնել նաև իրավաբանական անձի հիմնադրմանը և գրանցմանը վերաբերող, քաղաքացու անձը հաստատող և օրենքով նախատեսված այլ փաստաթղթեր:

9. Լիցենզիան մերժելու հիմքերն են՝

1) դիմողի կողմից անհրաժեշտ տեղեկություններ չներկայացնելը կամ ոչ ճիշտ տեղեկություններ ներկայացնելը, եթե հինգ աշխատանքային օրվա ընթացքում այդ թերությունները չեն վերացվել.

2) զենքի արտադրության անվտանգության, հաշվառման և պահպանության ապահովման անհնարինությունը կամ այդ պայմանները չապահովելը.

3) օրենքով նախատեսված այլ հիմքեր:

10. Լիցենզիա ստանալու դիմումը մերժելու դեպքում համապատասխան մարմինը պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել դիմողին՝ նշելով մերժման հիմքը: Լիցենզիա ստանալու դիմումը մերժելու որոշումը, ինչպես նաև դիմումի քննարկման ժամկետների խախտումները դիմումատուն կարող է բողոքարկել օրենքով սահմանված կարգով:

***(10-րդ հոդվածը փոփ. 16.12.22 ՀՕ-475-Ն)***

**Հոդված 11. Թույլտվություններին ներկայացվող հիմնական պահանջները**

1. Ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ ~~քաղաքացիական և ծառայողական~~ զենքի համապատասխան թույլտվությունները տալիս է Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը:

2. Իրավաբանական անձանց տրվող թույլտվություններն են՝

1) ~~քաղաքացիական և ծառայողական~~ զենք, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասեր, ~~փամփուշտներ~~ ձեռք բերելու թույլտվություններ՝ վեց ամիս գործողության ժամկետով.

2) ~~քաղաքացիական և ծառայ -ողական~~ զենք, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասեր, փամփուշտներ ներկրելու, արտահանելու, տարանցիկ փոխադրելու թույլտվություն՝ վեց ամիս գործողության ժամկետով.

3) զենք պահելու և օգտագործելու թույլտվություն՝ 10 տարի գործողության ժամկետով՝ յուրաքանչյուր անգամ 10 տարով երկարաձգելու իրավունքով.

4) զենքի հավաքածու կազմելու թույլտվություն՝ 10 տարի գործողության ժամկետով՝ յուրաքանչյուր անգամ 10 տարով երկարաձգելու իրավունքով.

5) զենքի հավաքածու ցուցադրելու թույլտվություն՝ վեց ամիս գործողության ժամկետով.

6) հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձանց աշխատողների՝ զենք կրելու թույլտվություն՝ հինգ տարի գործողության ժամկետով՝ յուրաքանչյուր անգամ հինգ տարով երկարաձգելու իրավունքով:

3. Ֆիզիկական անձանց տրվող թույլտվություններն են՝

1) ~~քաղաքացիական և ծառայողական~~ զենք և հրազենի հիմնական բաղկացուցիչ մասեր ձեռք բերելու թույլտվություններ՝ վեց ամիս գործողության ժամկետով.

2) գազային զենք պահելու և կրելու թույլտվություն՝ անժամկետ.

3) ~~քաղաքացիական և ծառայողական~~ զենք (բացառությամբ սառը և գազային զենքերի) պահելու և կրելու թույլտվություն՝ 10 տարի գործողության ժամկետով՝ յուրաքանչյուր անգամ 10 տարով երկարաձգելու իրավունքով.

4) զենքի հավաքածու կազմելու թույլտվություն՝ 10 տարի գործողության ժամկետով՝ յուրաքանչյուր անգամ 10 տարով երկարաձգելու իրավունքով.

5) զենքի հավաքածու ցուցադրելու թույլտվություն՝ վեց ամիս գործողության ժամկետով.

6) որպես պարգև ստացած զենքը պահելու և կրելու թույլտվություն՝ անժամկետ.

7) զենք, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասեր, փամփուշտներ ներկրելու կամ արտահանելու թույլտվություն՝ վեց ամիս գործողության ժամկետով.

8) որպես պարգև ստացած և կրակոց արձակելու համար ոչ պիտանի դարձրած (մալած) ~~մարտական կամ ծառայողական~~ զենքը ժառանգելու դեպքում պահելու թույլտվություն՝ անժամկետ:

4. Օտարերկրյա քաղաքացիներին տրվող թույլտվություններն են՝

1) քաղաքացիական զենք, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասեր և փամփուշտներ ձեռք բերելու ~~թույլտվություն~~ թույլտվություններ՝ հնգօրյա գործողության ժամկետով.

2) Հայաստանի Հանրապետությունից որպես պարգև տրված զենք արտահանելու թույլտվություն՝ երկու ամիս գործողության ժամկետով:

5. Սառը զենք ձեռք բերելու իրավունք ունի որսորդությամբ զբաղվող և ~~քաղաքացիական հրազեն~~ զենք պահելու և կրելու կամ հավաքածու կազմելու

թույլտվություն ունեցող քաղաքացին: Սառը զենք վաճառելու ժամանակ կազմակերպությունը զենքի անհատական տվյալները, գնման ամսաթիվը գրանցում է քաղաքացու՝ որսորդությամբ զբաղվելու իրավունքը հավաստող փաստաթղթում և հաստատում կազմակերպության կնիքով:

6. Զենք պահելու և կրելու կամ զենքի հավաքածու կազմելու թույլտվություն ունեցող քաղաքացին յուրաքանչյուր հինգ տարին մեկ պարտավոր է անցնել համապատասխան բժշկական հետազոտություն՝ զենքի տիրապետումը խոչընդոտող հիվանդությունների և վիճակների առկայության կամ բացակայության վերաբերյալ, որի արդյունքները տվյալ բժշկական կազմակերպության կողմից էլեկտրոնային եղանակով ինքնաշխատ փոխանցվում են Հայաստանի Հանրապետության ոստիկանություն: Ընթացիկ հետազոտությունների ընթացքում զենքի տիրապետումը խոչընդոտող հիվանդությունների և վիճակների առկայության վերաբերյալ տեղեկությունը բժշկական կազմակերպության կողմից էլեկտրոնային եղանակով ինքնաշխատ փոխանցվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանություն:

7. Թույլտվություն տրամադրելու կարգը և թույլտվության ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը:

8. Թույլտվություն տրամադրելու իրավունք ունեն նաև Հայաստանի Հանրապետության ոստիկանության տարածքային ստորաբաժանումները:

9. Թույլտվություն ստանալու համար իրավաբանական կամ ֆիզիկական անձը դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության ոստիկանություն: Զենք ձեռք բերելու թույլտվություն ստանալու դիմումը Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում քննարկվում է օրենքով նախատեսված փաստաթղթերը ներկայացվելուց հետո՝ 23 աշխատանքային օրվա ընթացքում, որի ժամանակ ստուգվում է նաև քաղաքացու մշտական բնակության վայրում զենքի պահպանման պայմանների առկայությունը, իսկ զենք կրելու, պահելու և կրելու, պահելու և օգտագործելու, զենքի հավաքածու կազմելու, զենքի հավաքածու ցուցադրելու թույլտվությունները տրվում են հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

10. Թույլտվություն ստանալու դիմումում կամ կից փաստաթղթերում ոչ էական թերությունների (վրիպակների, ոչ իրավաբանական անճշտությունների, թվաբանական սխալների և նման այլ բացթողումների) առկայության, ինչպես նաև փաստաթղթերը թերի լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը դրանք հայտնաբերելու պահից երկու աշխատանքային օրվա ընթացքում առաջարկում է դիմումատուին հինգ աշխատանքային օրվա ընթացքում վերացնել թերությունները:

11. Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ զենք ձեռք բերելու թույլտվություն ստանալու համար անհրաժեշտ են հետևյալ փաստաթղթերը.

1) սահմանված ձևի դիմում.

~~2) զենքի պահպանման պայմանների առկայության վերաբերյալ հաշվառման կամ բնակության վայրի (կախված զենքը պահելու վայրից) ոստիկանության տարածքային ստորաբաժանման ղեկավարի կողմից հաստատված տեղեկանք.~~

3) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կամ անձը հաստատող փաստաթղթի պատճենը.

4) 3x4 սմ չափի երկու լուսանկար.

5) զենքի տիրապետումը խոչընդոտող հիվանդությունների և վիճակների բացակայության մասին դիմողին տրվող բժշկական եզրակացությունը, եթե տվյալ պահին իր անունով հաշվառված զենք չունի.

6) պետական տուրքի վճարման անդորրագիր (անդորրագրեր)՝ «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված կարգով.

7) առաջին անգամ զենք ձեռք բերելիս զենքի հետ կապված և անվտանգության կանոնների իմացության տեսական և գործնական քննությունները հանձնելու համապատասխան փաստաթուղթ:

12. Սույն հոդվածով նախատեսված թույլտվությունների ժամկետները երկարաձգելու համար դիմումը ներկայացվում է դրանց գործողության ժամկետը լրանալուց մեկ ամիս առաջ:

13. ~~Սույն հոդվածի 11-րդ մասում նշված փաստաթղթերը Հայաստանի Հանրապետության ոստիկանություն են ներկայացվում նաև թույլտվությունների ժամկետները երկարաձգելու համար, բացառությամբ 2-րդ և 7-րդ կետերով նախատեսված փաստաթղթերի: Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից քաղաքացիական կամ ծառայողական զենք պահելու և կրելու գործող թույլտվություն ունենալու պայմաններում նոր զենք ձեռք բերելու, պահելու և կրելու թույլտվություն ստանալու համար Հայաստանի Հանրապետության ոստիկանություն չեն ներկայացվում սույն հոդվածի 11-րդ մասի 2-րդ, 5-րդ և 7-րդ կետերով նշված փաստաթղթերը:~~

13. Թույլտվությունների ժամկետները երկարաձգելիս կամ զենք պահելու և կրելու թույլտվություն ունենալու դեպքում նոր զենք ձեռք բերելիս Հայաստանի Հանրապետության քաղաքացին ներքին գործերի բնագավառի պետական կառավարման լիազոր մարմին է ներկայացնում միայն սույն հոդվածի 11-րդ մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 6-րդ կետերով սահմանված փաստաթղթերը:

14. Թույլտվություն ստանալու դիմումը Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը մերժում է, եթե՝

1) դիմողը ներկայացրել է ոչ ճիշտ տեղեկատվություն, կամ ներկայացված փաստաթղթերը ամբողջական չեն կամ ներկայացվել են անճշտություններով, և սահմանված ժամկետում դիմումատուն չի վերացրել նշված թերությունները.

2) դիմողը չի ապահովել զենք պահելու անհրաժեշտ պայմանները.

3) առկա է սույն օրենքի 17-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված հիմքերից որևէ մեկը:

15. Թույլտվություն ստանալու կամ դրա գործողության ժամկետը երկարաձգելու դիմումը մերժելու դեպքում Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել դիմողին՝ նշելով մերժման հիմքը:

Թույլտվություն ստանալու կամ դրա գործողության ժամկետը երկարաձգելու դիմումը մերժելու որոշումը կարող է բողոքարկվել օրենքով սահմանված կարգով:

16. Թույլտվություն ստացած անձի կողմից տվյալ թույլտվությունն ստանալու համար ներկայացված տեղեկությունների փոփոխության դեպքում թույլտվությունը վերաձևակերպվում, իսկ ոչ պիտանի դարձած կամ կորցրած թույլտվությունը վերականգնվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը դիմումը և թույլտվությունը վերաձևակերպելու կամ վերականգնելու համար հիմք հանդիսացող հանգամանքները հավաստող փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում: Թույլտվության վերաձևակերպումը կամ վերականգնումը կատարվում է առանց թույլտվության գործողության ժամկետի փոփոխության:

17. Թույլտվությունը հետագա օգտագործման համար ոչ պիտանի է համարվում, եթե թույլտվության վրա առկա գրառումներից որևէ մեկն անընթեռնելի է, թույլտվությունն ունի մեխանիկական կամ քիմիական վնասվածքներ, գունազրկվել է, վնասվել է լուսանկարը, կամ թույլտվությունը տրամադրած մարմնի կնիքի դրոշմվածքն աղավաղված է:

18. Իրավաբանական անձանց տրված՝ զենք պահելու և օգտագործելու թույլտվությունը ենթադրում է տվյալ իրավաբանական անձի կողմից ձեռք բերված զենքը պահելը, իր գործունեության նպատակների համար՝ այն բաշխելը, հաշվառելը: Զենք պահելու և օգտագործելու թույլտվություն ստացած իրավաբանական անձը պատասխանատու է իր ձեռք բերած զենքի ամբողջականության և անվտանգության ապահովման համար:

19. Սույն հոդվածով նախատեսված թույլտվություններն ստանալու, դրանք երկարաձգելու, վերաձևակերպելու կամ վերականգնելու համար գանձվում է պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված կարգով և չափով:

20. Սույն հոդվածի գործողությունը չի տարածվում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով սպայական կազմի զինծառայողներին որպես պարգևատրում, ինչպես նաև զինվորական հանդերձանքի պարտադիր մաս կազմելու դեպքերում այլ զինծառայողների ժամանակավորապես դաշույնների (սպայական կազմի զինծառայողների մասով (այսուհետ՝ սպայական դաշույն)) տրման վրա:

***(11-րդ հոդվածը լրաց., փոփ., խմբ. 13.07.23 ՀՕ-268-Ն)***
***(13.07.23 ՀՕ-268-Ն օրենքն ունի եզրափակիչ մաս և անցումային դրույթներ)***

**Հոդված 12.** **Լիցենզիաների գործողության դադարեցումը, կասեցումը և թույլտվություններն ուժը կորցրած ճանաչելը, զենքի նկատմամբ սեփականության իրավունքի դադարեցումը**

1. Լիցենզիաների գործողությունը դադարեցվում, կասեցվում և թույլտվություններն ուժը կորցրած են ճանաչվում օրենքով սահմանված կարգով, եթե՝

1) ֆիզիկական կամ իրավաբանական անձն իր ներկայացրած դիմումով կամովին հրաժարվել է լիցենզիայից կամ թույլտվությունից, կամ տվյալ իրավաբանական անձը լուծարվել է, կամ տվյալ զենքի սեփականատերը մահացել է.

2) ֆիզիկական կամ իրավաբանական անձը մեկ տարվա ընթացքում ոչ պակաս, քան երկու անգամ խախտել է կամ չի կատարել սույն օրենքի կամ զենքի շրջանառությունը կանոնակարգող այլ իրավական ակտերի պահանջները կամ նախատեսված ժամկետում չի վերացրել համապատասխան խախտումները.

3) առաջացել են սույն օրենքով նախատեսված՝ լիցենզիաներ կամ թույլտվություններ ստանալու իրավունքը բացառող հանգամանքներ.

4) ֆիզիկական կամ իրավաբանական անձը կատարել է իր տնօրինության տակ գտնվող զենքի և դրա փամփուշտների այնպիսի կառուցվածքային փոփոխություններ, որոնց հետևանքով փոխվել են դրանց ձգաբանական կամ ~~մյուս~~ տեխնիկական բնութագրերը.

~~5) զենքով պարգևատրումը կատարվել է օրենքով նախատեսված պարգևատրման պայմանների խախտումով.~~

~~6) ֆիզիկական անձը հաշվառվել է Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում՝ կենցաղային ոլորտում պարբերաբար իրավախախտումներ թույլ տալու կամ ընտանիքի անդամների նկատմամբ բռնություն գործադրելու համար.~~

~~7) ֆիզիկական անձը հաշվառվել է հոգեբուժական կամ նարկոլոգիական հաստատություններում կամ ձեռք է բերել զենքի տիրապետումը խոչընդոտող հիվանդություններ և վիճակներ.~~

~~8) ֆիզիկական անձը չի անցել սույն օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված բժշկական հետազոտությունը.~~

~~9) ֆիզիկական անձը մեկ տարվա ընթացքում երկու անգամ թույլ է տվել հասարակական կամ կառավարման սահմանված կարգի դեմ ուղղված վարչական իրավախախտում.~~

~~10) ֆիզիկական անձը դատապարտվել է դիտավորյալ հանցագործություն կատարելու համար, և դատավճիռը մտել է օրինական ուժի մեջ, կամ անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ ռեաբիլիտացնող հիմքով:~~

1.1. Թույլտվություններն ուժը կորցրած են ճանաչվում նաև հետևյալ դեպքերում՝

1) ֆիզիկական անձը հաշվառվել է Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում՝ կենցաղային ոլորտում պարբերաբար իրավախախտումներ թույլ տալու կամ ընտանիքի անդամների նկատմամբ բռնություն գործադրելու համար.

2) ֆիզիկական անձը հաշվառվել է հոգեբուժական կամ նարկոլոգիական հաստատություններում կամ ձեռք է բերել զենքի տիրապետումը խոչընդոտող հիվանդություններ և վիճակներ.

3) ֆիզիկական անձը չի անցել սույն օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված բժշկական հետազոտությունը.

4) ֆիզիկական անձը մեկ տարվա ընթացքում երկու անգամ թույլ է տվել հասարակական կամ կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող վարչական իրավախախտում.

5) ֆիզիկական անձը դատապարտվել է դիտավորյալ հանցագործություն կատարելու համար, և դատավճիռը մտել է օրինական ուժի մեջ, կամ անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ ռեաբիլիտացնող հիմքով:

2. Ֆիզիկական անձը զրկվում է զենքի համապատասխան թույլտվությունից՝ երկու տարի ժամկետով, իսկ իրավաբանական անձը զրկվում է համապատասխան լիցենզիայից և թույլտվությունից՝ երեք տարի ժամկետով, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

3. Եթե ֆիզիկական անձը զենք ձեռք բերելու թույլտվություն ստանալուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, զենք ձեռք չի բերում, ապա թույլտվությունը համարվում է ուժը կորցրած, և անձն իրավունք ունի օրենքով սահմանված ընթացակարգերով կրկին դիմելու Հայաստանի Հանրապետության ոստիկանություն՝ զենք ձեռք բերելու թույլտվություն ստանալու համար:

4. Լիցենզիայի գործողության դադարեցման, կասեցման կամ թույլտվությունն ուժը կորցրած ճանաչելու մասին որոշմանը պետք է նախորդի տվյալ ֆիզիկական կամ իրավաբանական անձին լիցենզիա կամ թույլտվություն տված մարմնի կողմից արված նախնական գրավոր նախազգուշացումը, որում պարտադիր նշվում են, թե հատկապես ինչ իրավական նորմեր և կանոններ են խախտվել կամ չեն կատարվել, և խախտումների վերացման ժամկետը:

5. Լիցենզիայից կամ թույլտվությունից կամովին հրաժարվելու դեպքում այն կրկին ստանալու համար ժամկետներ չեն սահմանվում:

6. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված դեպքերում զենքի նկատմամբ քաղաքացու սեփականության իրավունքը դադարեցվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 282-րդ հոդվածով նախատեսված հիմքերով:

**Հոդված 13. Զենք և ռազմամթերք առգրավելը, վերցնելը, ոչնչացնելը**

1. Հայաստանի Հանրապետության ոստիկանությունն առգրավում, վերցնում է իրավաբանական և ֆիզիկական անձանց տնօրինության տակ գտնվող զենքը հետևյալ դեպքերում՝

1) սույն օրենքով նախատեսված լիցենզիաների գործողությունը կասեցվել կամ դադարեցվել է, թույլտվությունները ճանաչվել են ուժը կորցրած, կամ վերոնշյալ լիցենզիաները կամ թույլտվությունները բացակայում են.

2) իրավաբանական կամ ֆիզիկական անձինք խախտել են զենքի շրջանառության՝ սույն օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված պահանջները՝ մինչև օրենսդրությամբ սահմանված կարգով վերջնական որոշում ընդունելը.

3) զենք տնօրինողների մոտ հայտնաբերվել են ինքնաշեն կամ ձևափոխված, ձգաբանական կամ տեխնիկական բնութագրերի խախտումներով զենք, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասեր կամ փամփուշտներ.

4) «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքով սահմանված դեպքերում.

5) մահացել է ~~քաղաքացիական կամ ծառայողական զենքի կամ որպես պարգև տրված~~ զենքի սեփականատերը՝ մինչև ժառանգության կամ զենքը տնօրինելու հարցը լուծելը.

6) լուծարվել է իրավաբանական անձը.

7) օրենքով սահմանված այլ դեպքերում:

2. Զենքի մահացած սեփականատիրոջ կամ որպես պարգև տրված զենքը տնօրինող մահացած քաղաքացու զենքը Հայաստանի Հանրապետության ոստիկանությունն առգրավում, վերցնում է՝ մինչև ժառանգության կամ զենքը տնօրինելու հարցը լուծելը:

3. Շահագործման համար տեխնիկապես պիտանի, առգրավված, վերցված քաղաքացիական ~~և ծառայողական~~ զենքերը, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերը, փամփուշտները կարող են իրացվել քաղաքացիական ~~և ծառայողական~~ զենքի առևտրի լիցենզիա ունեցող իրավաբանական անձանց միջոցով:

4 Որսի, ձկնորսության, շրջակա միջավայրի ու բնական պաշարների պահպանության նկատմամբ պետական հսկողություն իրականացնող մարմիններն առգրավված, վերցված զենքը փոխանցում են Հայաստանի Հանրապետության ոստիկանություն:

5. Առգրավված, վերցված, կամավոր հանձնված կամ գտնված զենքը կամ ռազմամթերքը Հայաստանի Հանրապետության ոստիկանություն է փոխանցվում Կառավարության սահմանած կարգով:

6. Քրեական վարույթով իրեղեն ապացույց ճանաչված զենքը դատաքննության ավարտից հետո փոխանցվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանություն՝ մինչև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վերջնական որոշում ընդունելը:

7. Եթե պետական ռազմականացված կազմակերպությունը տեխնիկապես ոչ պիտանի, ինքնաշեն կամ ձևափոխված, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում շրջանառությունն արգելված զենքը չի ներառում զենքի հավաքածուում, ապա այն ենթակա է ոչնչացման:

8. Տեխնիկապես անսարք փամփուշտները, արցունքաբեր կամ գրգռիչ նյութերով լիցքավորված մեխանիկական փոշեցրիչները, աերոզոլային և այլ սարքերը սեփականատերը անհատույց փոխանցում է Հայաստանի Հանրապետության ոստիկանություն՝ սահմանված կարգով ոչնչացնելու համար:

9. Զենքի, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերի, փամփուշտների և ռազմամթերքի ոչնչացման կարգը սահմանում է Կառավարությունը:

**Հոդված 14. Զենք ձեռք բերելու իրավունք ունեցող սուբյեկտները**

1. Հայաստանի Հանրապետության տարածքում զենք ձեռք բերելու իրավունք ունեն՝

1) պետական ռազմականացված կազմակերպությունները.

2) պետական մարմինները և կազմակերպությունները՝ օրենքով սահմանված դեպքերում.

3) հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձինք.

4) ~~քաղաքացիական և ծառայողական~~ զենքի արտադրությամբ, առևտրով զբաղվող իրավաբանական անձինք.

~~5) զենքի հավաքածու կազմելու և զենքի հավաքածու ցուցադրելու թույլտվություններ ունեցող ֆիզիկական և իրավաբանական անձինք.~~

6) սպորտային հրաձգությամբ զբաղվող և հրաձգարան գործարկող կազմակերպությունները.

7) Հայաստանի Հանրապետության քաղաքացիները.

8) օտարերկրյա քաղաքացիները:

2. Ուսումնական հաստատություններին նախնական զինվորական պատրաստության նպատակով ուսումնական զենք և փամփուշտներ հատկացվում է Կառավարության սահմանած կարգով:

***(14-րդ հոդվածը փոփ. 13.07.23 ՀՕ-268-Ն)***

***(13.07.23 ՀՕ-268-Ն օրենքն ունի եզրափակիչ մաս և անցումային դրույթներ)***

**Հոդված 16. Հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձանց՝ զենք ձեռք բերելու իրավունքը**

1. Հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձինք իրավունք ունեն ձեռք բերելու քաղաքացիական ~~և ծառայողական~~ զենք Հայաստանի Հանրապետության ոստիկանությունից թույլտվություն ստանալուց հետո:

2. Հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձանց կողմից օգտագործվող քաղաքացիական ~~և ծառայողական~~ զենքի տեսակը, ձևը, մոդելը և քանակը սահմանում է Կառավարությունը:

3. Զենք ձեռք բերելու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում զենքը պետք է գրանցվի և հաշվառվի Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում: Գրանցման և հաշվառման ժամանակ զենքի ձեռքբերման օրինականությունը հաստատող փաստաթղթերի հիման վրա հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձանց տրվում է զենք պահելու և օգտագործելու թույլտվություն:

4. Կառավարության սահմանած կարգով՝ հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձինք իրավունք ունեն ժամանակավոր օգտագործման համար Հայաստանի Հանրապետության ոստիկանությունից ստանալու մարտական զենքի առանձին տեսակներ, օրենքով իրենց վրա դրված՝ զենքի, ռազմամթերքի, մարտական տեխնիկայի արտադրության և պահման, հատկապես վտանգավոր էկոլոգիական արտադրությունների օբյեկտների, շրջակա միջավայրի և բնական պաշարների, դրամական միջոցների և արժեքների պատրաստման և պահման, թանկարժեք մետաղների ու քարերի արդյունահանման, վերամշակման և պահման վայրերի, օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների և հատկապես կարևոր այլ օբյեկտների պահպանության, հատկապես վտանգավոր բեռների, զենքի, ռազմամթերքի, մարտական տեխնիկայի, դրամական միջոցների ու արժեքների, պետական գաղտնիք պարունակող դիվանագիտական փոստի ու թղթակցության, պետական գաղտնիք հանդիսացող տեղեկություններ պարունակող բեռների տեղափոխման պարտականությունների կատարման նպատակով:

5. Կազմակերպություններին, որոնք, համաձայն գործող օրենսդրության, պարտավոր են պահպանել Հայաստանի Հանրապետության որսի և ձկան պաշարները, թույլատրվում է ձեռք բերել քաղաքացիական զենք:

6. Հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձանց աշխատողներին զենքը տրվում է իրավաբանական անձի ղեկավարի գրավոր հրամանով, եթե այդ աշխատողներն անցել են հատուկ պատրաստություն (բացառությամբ պետական ռազմականացված կազմակերպություններում ծառայած և զենք պահելու և կրելու իրավունք ունեցած անձանց, որոնց ծառայությունը չի ավարտվել վաղաժամկետ, և ծառայությունից ազատվելուց հետո չի անցել ~~երեք~~ հինգ տարի) և Հայաստանի Հանրապետության ոստիկանությունից ստացել զենք պահելու և կրելու թույլտվություն: Նշված աշխատողների հատուկ պատրաստությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը՝ պայմանագրային հիմունքներով: Հատուկ պատրաստության ծրագիրը և ստուգարքներ անցկացնելու կարգը սահմանում է ներքին գործերի բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը:

***(16-րդ հոդվածը փոփ. 01.03.23 ՀՕ-100-Ն, 16.12.22 ՀՕ-475-Ն, փոփ., լրաց. 13.07.23 ՀՕ-268-Ն)***

***(13.07.23 ՀՕ-268-Ն օրենքն ունի եզրափակիչ մաս և անցումային դրույթներ)***

**Հոդված 17. Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ զենք ձեռք բերելու իրավունքը**

1. Հայաստանի Հանրապետության ոստիկանությունից զենք ձեռք բերելու թույլտվություն ստանալուց հետո քաղաքացիական համակցված կամ ակոսափող հրազեն ձեռք բերելու իրավունք ունի Հայաստանի Հանրապետության 21 տարին

լրացած քաղաքացին, իսկ քաղաքացիական այլ տեսակի զենք՝ 18 տարին լրացած քաղաքացին:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացին (այսուհետ սույն հոդվածում՝ քաղաքացի) զենք ձեռք բերելու թույլտվության հիման վրա իրավունք ունի ձեռք բերելու քաղաքացիական զենք, իսկ զենքի հավաքածու կազմելու կամ ցուցադրելու համար նաև ~~զենքի այլ տեսակներ~~ մարտական զենք՝ մալած վիճակում:

3. Քաղաքացուն թույլատրվում է ձեռք բերել 10 միավոր քաղաքացիական զենք՝ պահելու և կրելու թույլտվությամբ, իսկ գազային զենք ձեռք բերելու, զենքի հավաքածու կազմելու համար առավելագույն քանակ նախատեսված չէ:

4. Քաղաքացու ձեռք բերած զենքը ձեռքբերման օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում ենթակա է հաշվառման Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում:

5. Քաղաքացին զենք ձեռք բերելու թույլտվություն ստանալու համար պարտավոր է Հայաստանի Հանրապետության ոստիկանություն ներկայացնել սույն օրենքի 11-րդ հոդվածի 11-րդ մասով սահմանված փաստաթղթերը:

6. Բացառությամբ սառը և նետողական զենքերի, առաջին անգամ զենք, այդ թվում՝ առաջին անգամ ակոսափող հրազեն ձեռք բերող քաղաքացին պարտավոր է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի բնագավառում պետական լիազոր մարմնի սահմանած կարգով հանձնել զենքի հետ կապված և անվտանգության կանոնների իմացության տեսական և գործնական քննություն: ~~Քննությունից ազատվում է այն քաղաքացին, որը ծառայում է Հայաստանի Հանրապետության պետական ռազմականացված կազմակերպություններում և ունի զենք պահելու և կրելու իրավունք:~~ Գործնական քննությունից ազատվում են այն քաղաքացիները, որոնք ծառայում են կամ ծառայել են Հայաստանի Հանրապետության պետական ռազմականացված կազմակերպություններում, այդ թվում՝ պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցածները, որոնք ունեն կամ ունեցել են զենք կրելու իրավունք: Պետական մարմինների կողմից քննություն անցկացվելու դեպքում սահմանվում է պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված չափով:

7. Զենք ձեռք բերելու թույլտվություն չի տրվում՝

1) զենքի տիրապետումը խոչընդոտող հիվանդություններ և վիճակներ ունեցող անձանց (հիվանդությունների և վիճակների ցանկը սահմանում է Կառավարությունը).

2) դիտավորյալ հանցագործություն կատարելու համար դատապարտված անձանց, որոնց դատվածությունն օրենքով սահմանված կարգով վերացված կամ մարված չէ.

3) Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 152-րդ, 308-313-րդ և 315-321-րդ հոդվածներով նախատեսված կամ հրազենի գործադրմամբ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար դատապարտված անձանց՝ անկախ դատվածությունը օրենքով սահմանված կարգով վերացված կամ մարված լինելու հանգամանքից.

4) հանցագործություն կատարելու համար պատիժ կրող անձանց, բացառությամբ անզգուշությամբ կատարված հանցագործության համար ազատությունից զրկելու հետ չկապված պատիժ կրող անձանց, եթե անձը չի դատապարտվել զենքի օգտագործմամբ անզգուշությամբ կատարված հանցագործության համար.

5) այն անձանց, որոնց նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում զենքի օգտագործմամբ դիտավորյալ կամ ~~զենքի օգտագործմամբ~~ անզգուշությամբ կատարված հանցագործություն կատարելու համար (մինչև ռեաբիլիտացնող հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելը կամ արդարացման դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելը).

6) դատարանի վճռով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձանց.

7) զենքի շրջանառության կանոնները մեկ տարվա ընթացքում կրկնակի խախտած անձանց.

8) դիմելու պահին մեկ տարվա ընթացքում կրկնակի հասարակական կամ կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող վարչական իրավախախտում կատարած անձանց.

9) Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում չհաշվառված անձանց.

10) ընտանիքի անդամների նկատմամբ բռնություն գործադրելու հիմքերով հաշվառման մեջ գտնվող անձանց.

11) սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված հավաստագիր չունեցող անձանց.

12) այն անձանց, որոնց վերաբերյալ առկա է Հայաստանի Հանրապետության անվտանգությանն սպառնալիք ներկայացնելու մասին հիմնավոր կասկած:

8. Տեխնիկական կանոնակարգին համապատասխան՝ մինչև 7.5 ջոուլ փողային էներգիայով օդաճնշիչ սարքը (այդ թվում՝ ռևոլվերները), դրանց փամփուշտները, մեխանիկական փոշեցրիչները, աերոզոլային և այլ սարքեր, որոնք լիցքավորված են արցունքաբեր կամ գրգռիչ նյութերով, էլեկտրահարող սարքերը ու կայծային պարպիչները, ինչպես նաև կառուցվածքով զենքի նմանվող իրերը և զենքի պարագաները գրանցման և հաշվառման ենթակա չեն, և քաղաքացիներն իրավունք ունեն դրանք ձեռք բերելու առանց թույլտվության:

***(17-րդ հոդվածը խմբ., լրաց., փոփ. 13.07.23 ՀՕ-268-Ն)***

***(13.07.23 ՀՕ-268-Ն օրենքն ունի եզրափակիչ մաս և անցումային դրույթներ)***

**Հոդված 19. ~~Քաղաքացիական և ծառայողական~~ Զենքի արտադրությամբ, առևտրով զբաղվող իրավաբանական անձանց, լիցենզավորված հրաձգարանների, սպորտային կազմակերպությունների՝ զենք ձեռք բերելու իրավունքը**

***(վերնագիրը փոփ. 13.07.23 ՀՕ-268-Ն)***

1. ~~Քաղաքացիական և ծառայողական~~ Զենքի արտադրության կամ առևտրի լիցենզիա ունեցող իրավաբանական անձինք իրենց կանոնադրական խնդիրների իրականացման նպատակով իրավունք ունեն ձեռք բերելու քաղաքացիական և ծառայողական զենք՝ օրենքով սահմանված կարգով: Ձեռք բերված զենքը ենթակա է գրանցման և հաշվառման՝ օրենքով սահմանված կարգով:

2. Լիցենզավորված հրաձգարանները, սպորտային կազմակերպությունները կարող են ձեռք բերել քաղաքացիական ~~և ծառայողական~~ զենքեր, որոնք պետք է պահվեն նույն կազմակերպություններում և օգտագործվեն այդ կազմակերպությունների տարածքում:

3. ***(մասն ուժը կորցրել է 13.07.23 ՀՕ-268-Ն)***

***(19-րդ հոդվածը փոփ. 13.07.23 ՀՕ-268-Ն)***

***(13.07.23 ՀՕ-268-Ն օրենքն ունի եզրափակիչ մաս և անցումային դրույթներ)***

**Հոդված 20. ~~Քաղաքացիական և ծառայողական~~ զենքի արտադրությունը**

1. ~~Քաղաքացիական և ծառայողական~~ զենքի, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերի և փամփուշտների արտադրությունն իրականացվում է Կառավարության սահմանած կարգով՝ ապահովելով արտադրության անվտանգությունը, արտադրության ընթացքի նկատմամբ հսկողությունը և արտադրանքի համապատասխան որակը:

2. Արտադրված ~~քաղաքացիական և ծառայողական~~ զենքի, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերի յուրաքանչյուր միավոր պետք է ունենա անհատական համար, ներկայացվի համապատասխանության գնահատման և շրջանառվի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերին համապատասխան ընդունված փաստաթղթերով սահմանված պահանջներին համապատասխան և գնահատման մարմնի տված համապատասխանության գնահատման փաստաթղթով, հայերեն մակնշմամբ և համապատասխանության գնահատման նշանով:

3. Գիտական կազմակերպությունները զենքի, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերի, փամփուշտների և ռազմամթերքի հետազոտություն, մշակում, փորձարկում իրականացնում են Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության սահմանած կարգով՝ առանց զենքի արտադրության լիցենզիայի:

**Հոդված 21. Քաղաքացիական ~~և ծառայողական~~ զենքի, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերի և փամփուշտների ներկրումը և արտահանումը**

1. Քաղաքացիական ~~և ծառայողական~~ զենքի, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերի և փամփուշտների ներկրումը և արտահանումն իրականացվում են սույն օրենքով և Կառավարության սահմանած կարգով:

2. Քաղաքացիական ~~և ծառայողական~~ զենքը, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերը և փամփուշտները ներկրվում և արտահանվում են Հայաստանի Հանրապետության ոստիկանության թույլտվությամբ:

3. Ներկրվող քաղաքացիական ~~և ծառայողական~~ զենքը, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերը և փամփուշտները ենթակա են համապատասխանության գնահատման:

4. Մաքսային հսկողության տակ գտնվող, համապատասխանության գնահատման ենթակա զենքի խմբաքանակում ներառված քաղաքացիական ~~և ծառայողական~~ զենքի յուրաքանչյուր տեսակից լիազոր մարմինը տալիս է մեկ միավոր զենք, մեկ միավոր հրազենի հիմնական բաղկացուցիչ մաս և հինգ փամփուշտ ներկրելու թույլտվություն՝ «Համապատասխանության գնահատման համար» նշումով: Համապատասխանության գնահատում անցնելու վերաբերյալ փաստաթուղթը Հայաստանի Հանրապետության ոստիկանություն ներկայացնելուց հետո տրվում է զենքի ամբողջ խմբաքանակը ներկրելու թույլտվություն:

5. Տեխնիկական կանոնակարգին համապատասխան՝ մինչև 7.5 ջոուլ փողային էներգիայով օդաճնշիչ սարքը (այդ թվում՝ ռևոլվերները), դրանց փամփուշտները, մեխանիկական փոշեցրիչները, աերոզոլային և այլ սարքեր, որոնք լիցքավորված են արցունքաբեր կամ գրգռիչ նյութերով, էլեկտրահարող սարքերը ու կայծային պարպիչները, ինչպես նաև կառուցվածքով զենքի նմանվող իրերը և զենքի պարագաները Հայաստանի Հանրապետություն ներկրվում, արտահանվում և շրջանառվում են ազատ:

6. Քաղաքացիական ~~և ծառայողական~~ զենքի, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերի և փամփուշտների ներկրումը և արտահանումը կարող են իրականացնել զենքի առևտրի լիցենզիա ունեցող իրավաբանական անձինք, իսկ զենքի արտադրության լիցենզիա ունեցող իրավաբանական անձինք իրավունք ունեն արտահանելու միայն սեփական արտադրության զենքերն ու փամփուշտները՝ օտարերկրյա պատվիրատուի հետ կնքած պայմանագրի հիման վրա:

7. Սպորտային կազմակերպություններն իրավունք ունեն սպորտային միջոցառումների և մարզումների ժամանակ օգտագործելու նպատակով ներկրելու և արտահանելու քաղաքացիական զենք և փամփուշտներ Հայաստանի Հանրապետության ոստիկանությունից թույլտվություն ստանալուց հետո:

8. ~~Քաղաքացիական և ծառայողական~~ զենքի արտադրության լիցենզիա ունեցող իրավաբանական անձինք իրավունք ունեն արտադրական նպատակների համար ներկրել զենքի եզակի նմուշներ, ձևեր և մոդելներ, որոնց համար համապատասխանության գնահատում պարտադիր չէ:

9. Ֆիզիկական անձինք իրավունք ունեն ներկրելու տարեկան երեք միավոր քաղաքացիական զենք:

10. Մշակութային արժեք ներկայացնող քաղաքացիական զենքի եզակի նմուշների ներկրումը և արտահանումն իրականացվում են Հայաստանի Հանրապետության ոստիկանության թույլտվությամբ՝ սույն օրենքի պահանջներին համապատասխան:

11. Քաղաքացիական ~~և ծառայողական~~ զենքի առևտրի լիցենզիա ունեցող իրավաբանական անձինք իրավունք ունեն ներկրելու քաղաքացիական զենքի փամփուշտների համար նախատեսված հրապատիճ, վառոդ, գնդակ, պարկուճ և կոտորակ:

12. Որպես պարգև տրված զենքը ներկրվում և արտահանվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության թույլտվությամբ՝ օրենքով սահմանված կարգով:

13. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի համաձայն ներկրվող կամ տարանցիկ փոխադրվող զենքերի համար համապատասխանության գնահատում պարտադիր չէ:

***(21-րդ հոդվածը փոփ. 13.07.23 ՀՕ-268-Ն)***

***(13.07.23 ՀՕ-268-Ն օրենքն ունի եզրափակիչ մաս և անցումային դրույթներ)***

**Հոդված 22. ~~Քաղաքացիական~~ ~~և ծառայողական~~ զենքի, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերի և փամփուշտների առևտուրը**

1. Քաղաքացիական ~~և ծառայողական~~ զենքի, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերի, փամփուշտների և դրա բաղկացուցիչ մասերի առևտուր կատարելու իրավունք ունեն ~~քաղաքացիական և ծառայողական~~ զենքի առևտրի լիցենզիա ունեցող իրավաբանական անձինք, որոնք պարտավոր են՝

1) ունենալ վաճառվող քաղաքացիական ~~և ծառայողական~~ զենքի, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերի և փամփուշտների համապատասխանության սերտիֆիկատ, ակոսափող զենքի դեպքում՝ նաև գնդակապարկուճային հաշվառման մասին տեղեկանք.

2) պահանջել գնորդից ներկայացնել համապատասխան ~~զենք ձեռք բերելու~~ թույլտվությունը.

3) ապահովել ձեռք բերվող և վաճառվող զենքի գրանցումը և հաշվառումը և հաշվառման փաստաթղթերի պահպանությունը 10 տարի ժամկետով.

4) ներքին գործերի բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի սահմանած կարգով ամենամսյա տեղեկություններ ներկայացնել Հայաստանի Հանրապետության ոստիկանություն՝ վաճառված քաղաքացիական~~, ծառայողական~~ զենքի, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերի, փամփուշտների և դրանց բաղկացուցիչ մասերի և դրանք ձեռք բերող անձանց մասին.

5) գնորդին տրամադրել վաճառվող զենքի տվյալները, ակոսափող զենքի դեպքում՝ նաև գնդակապարկուճային հաշվառման մասին տեղեկանքի պատճենը՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանությունից զենք պահելու և կրելու կամ պահելու և օգտագործելու թույլտվություն ստանալու նպատակով.

6) գնորդին վաճառված զենքը տրամադրել կամ վաճառել փամփուշտներ միայն Հայաստանի Հանրապետության ոստիկանության տրամադրած՝ համապատասխան զենք պահելու և կրելու կամ պահելու և օգտագործելու թույլտվության առկայության դեպքում, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասեր վաճառել հրազենի հիմնական բաղկացուցիչ մասեր ձեռք բերելու թույլտվության առկայության դեպքում.

7) ապահովել զենքի և ռազմամթերքի պատշաճ պահպանությունը և այն պահելու անվտանգությունը.

8) կոմիսիոն վաճառքի ընդունված և վերադարձված զենքերի վերաբերյալ երկօրյա ժամկետում գրավոր հայտնել Հայաստանի Հանրապետության ոստիկանություն.

9) կենտրոնացված հաշվառում կատարելու նպատակով հանրապետական գնդակապարկուճային հաշվառման քարտադարան ներկայացնել ակոսափող քաղաքացիական ~~և ծառայողական~~ զենքը՝ ներքին գործերի բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի սահմանած կարգով:

2. Արգելվում են՝

1) ~~քաղաքացիական և ծառայողական զենք վաճառելը տվյալ տեսակի զենք ձեռք բերելու թույլտվություն չներկայացրած իրավաբանական և ֆիզիկական անձանց, իսկ դրանց փամփուշտները՝ տվյալ տեսակի զենք պահելու և կրելու կամ պահելու և օգտագործելու թույլտվություն չներկայացրած իրավաբանական և ֆիզիկական անձանց.~~ քաղաքացիական զենք վաճառելը տվյալ տեսակի զենք ձեռք բերելու թույլտվություն չներկայացրած, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասեր վաճառելը՝ հրազենի հիմնական բաղկացուցիչ մասեր ձեռք բերելու թույլտվություն չներկայացրած, փամփուշտներ վաճառելը՝ տվյալ տեսակի զենք պահելու և կրելու կամ պահելու և օգտագործելու թույլտվություն չներկայացրած իրավաբանական կամ ֆիզիկական անձանց.

2) քաղաքացիական ~~և ծառայողական~~ զենքի առևտրի լիցենզիա ունեցող իրավաբանական անձանց միևնույն վաճառասրահում զենքի հետ կապ չունեցող այլ ապրանքների համատեղ վաճառք կատարելը, բացառությամբ սպորտային, որսորդական կամ ձկնորսական պատկանելության հարմարանքների, զենքի պահեստամասերի և սույն օրենքի 17-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված միջոցների.

3) տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխան համապատասխանության գնահատման փաստաթուղթ, հայերեն մակնշում, անհատական համար չունեցող քաղաքացիական ~~և ծառայողական~~ զենք, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասեր և փամփուշտներ վաճառելը.

4) քաղաքացիական ~~և ծառայողական~~ զենքի վաճառքի կետերում, խանութ-սրահներում զենքի ցուցադրումն առանց ձգանը արգելափակող հատուկ գործարանային արտադրության կողպեքի.

5) մանրածախ առևտրի սրահներում 50 կիլոգրամից ավել վառոդ և 15 հազարից ավել փամփուշտ պահելը.

6) շահագործման համար տեխնիկապես ոչ պիտանի զենքեր վաճառելը:

3. Մինչև 7.5 ջոուլ փողային էներգիան չգերազանցող օդաճնշիչ զենքերը վաճառվում են առանց թույլտվության միայն քաղաքացիական ~~և ծառայողական~~ զենքի առևտրի լիցենզիա ունեցող վաճառքի կետերում:

4. Քաղաքացիական ~~և ծառայողական~~ զենքի առևտրով զբաղվելու լիցենզիա ունեցող իրավաբանական անձանց դուստր կազմակերպությունները պարտավոր են նույն գործունեությամբ զբաղվելու համար սահմանված կարգով ձեռք բերել առանձին լիցենզիա:

5. Զենքի առևտրի լիցենզիա ունեցող իրավաբանական անձինք վաճառքի են ընդունում զենք ձեռք բերելու իրավունք ունեցող սուբյեկտներին պատկանող քաղաքացիական ~~և ծառայողական~~ զենքը, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերը և փամփուշտները:

***(22-րդ հոդվածը խմբ., փոփ. 16.12.22 ՀՕ-475-Ն)***

**Հոդված 23. ~~Քաղաքացիական և ծառայողական~~ զենքի նորոգումը և հարդարումը**

1. Քաղաքացիական ~~և ծառայողական~~ զենք նորոգելու իրավունք ունեն ~~քաղաքացիական և ծառայողական~~ զենքի արտադրության լիցենզիա ունեցող իրավաբանական անձինք, իսկ հարդարելու իրավունք ունեն քաղաքացիական ~~և ծառայողական~~ զենքի հարդարման լիցենզիա ունեցող իրավաբանական անձինք՝ ապահովելով զենքի հետ վարվելու անվտանգությունը, աշխատանքների ընթացքի նկատմամբ հսկողությունը, որակը, նորոգման կամ հարդարման հանձնված զենքի պահպանությունը:

2. ~~Քաղաքացիական և ծառայողական~~ զենքի արտադրության լիցենզիա ունեցող իրավաբանական անձինք կարող են զենքը նորոգել, այդ թվում՝ չաշխատող մասերը փոխելու կամ նորոգելու միջոցով այն դարձնել պիտանի, վերականգնել արտաքին տեսքը:

3. Կենտրոնացված հաշվառում կատարելու և ստուգողական կրակված գնդակներ ու պարկուճներ ստանալու նպատակով ~~քաղաքացիական և ծառայողական~~ զենքի արտադրության լիցենզիա ունեցող իրավաբանական անձը պարտավոր է նորոգումից հետո հանրապետական գնդակապարկուճային հաշվառման քարտադարան ներկայացնել ակոսափող զենքերը:

4. Քաղաքացիական ~~և ծառայողական~~ զենքի հարդարման լիցենզիա ունեցող իրավաբանական անձինք կարող են զենքի տեխնիկական և քրեագիտական բնութագրերի պահպանմամբ կատարել գեղարվեստական ձևավորում՝ օգտագործելով թանկարժեք մետաղներ և քարեր: Անձնական զենքի հարդարման համար լիցենզիա չի պահանջվում:

**Հոդված 24. Զենքի փոխանցումը և վաճառքը պետական ռազմականացված կազմակերպությունների կողմից**

1. Պետական ռազմականացված կազմակերպություններն իրավունք ունեն իրենց սպառազինության մեջ գտնվող մարտական զենքը և դրա փամփուշտները փոխանցելու այլ պետական ռազմականացված կազմակերպությունների, իսկ քաղաքացիական ~~և ծառայողական~~ զենքը վաճառելու ~~քաղաքացիական և ծառայողական~~ զենքի արտադրության կամ քաղաքացիական զենքի առևտրի լիցենզիա ունեցող իրավաբանական անձանց:

2. Պետական ռազմականացված կազմակերպություններն իրենց սպառազինության մեջ գտնվող ~~մարտական և ծառայողական~~ զենքը, Կառավարության սահմանած կարգով, իրավունք ունեն ժամանակավոր պահելու և կրելու նպատակով փոխանցելու պետական մարմինների այն պաշտոնատար անձանց, որոնց օրենքով թույլատրվում է զենք պահել և կրել՝ ձևակերպելով համապատասխան թույլտվություն՝ ներքին գործերի բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի սահմանած կարգով:

***(24-րդ հոդվածը փոփ. 16.12.22 ՀՕ-475-Ն)***

### Հոդված 25. Քաղաքացիական ~~և ծառայողական~~ զենք և դրանց փամփուշտներ պահելը, կրելը և օգտագործելը

1. Քաղաքացիական ~~և ծառայողական~~ զենք և դրանց փամփուշտներ պահել թույլատրվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանությունից զենք պահելու և կրելու կամ պահելու և օգտագործելու թույլտվություն ստացած ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ սույն օրենքով սահմանված կարգով:

2. Ֆիզիկական և իրավաբանական անձանց արգելվում է իրենց գտած կամ այլ անձանցից անօրինական եղանակով իրենց փոխանցված զենքին տիրապետելը կամ տնօրինելը: Նշված զենքն անհապաղ պետք է հանձնվի Հայաստանի Հանրապետության ոստիկանության մոտակա ստորաբաժանում:

3. Ֆիզիկական և իրավաբանական անձինք պարտավոր են իրենց պատկանող զենքը պահել այնպիսի պայմաններում, որ ապահովվեն դրա պահպանությունը, անվտանգությունը, և բացառվի կողմնակի անձանց համար զենքի հասանելիությունը:

4. Զենքը պահելու պայմաններին և կրելու կարգին վերաբերող պահանջները սահմանում է Կառավարությունը:

5. Ֆիզիկական անձինք պարտավոր են իրենց զենքը կրել միայն օրենքով նախատեսված վայրերում և դեպքերում:

6. Արգելվում է քաղաքացիական զենք կրել որսահանդակներից դուրս որսորդությամբ զբաղվելու նպատակով:

7. Իրավաբանական անձինք պարտավոր են իրենց զենքը պահել և օգտագործել միայն օրենքով սահմանված կարգով:

8. Զենքի կորսվելու, հափշտակվելու դեպքերում զենքի սեփականատերը պարտավոր է անհապաղ, բայց ոչ ուշ, քան կորստյան (կորսվելու, հափշտակվելու) փաստի մասին տեղեկանալուց հետո՝ 24 ժամվա ընթացքում, այդ մասին հայտնել Հայաստանի Հանրապետության ոստիկանություն:

9. Քաղաքացիական ողորկափող հրազենի փամփուշտների վերալիցքավորումը և լիցքավորումն անձնական օգտագործման նպատակով կարող է կատարել զենքը տնօրինողը զենք պահելու և կրելու թույլտվության առկայության դեպքում:

10. Քաղաքացիական և ծառայողական զենքի արտադրության, առևտրի, հրաձգարանի գործարկման լիցենզիաներ ունեցող իրավաբանական անձինք և սպորտային հրաձգության կազմակերպությունները Կառավարության սահմանած կարգով կարող են կատարել քաղաքացիական ակոսափող և ողորկափող հրազենի փամփուշտների վերալիցքավորում և լիցքավորում:

***(25-րդ հոդվածը փոփ. 13.07.23 ՀՕ-268-Ն)***

***(13.07.23 ՀՕ-268-Ն օրենքն ունի եզրափակիչ մաս և անցումային դրույթներ)***

## Հոդված 26. Զենքի հավաքածու կազմելը

1. Իրավաբանական և ֆիզիկական անձինք զենքի հավաքածու կարող են կազմել Հայաստանի Հանրապետության ոստիկանության տված՝ զենքի հավաքածու կազմելու թույլտվության հիման վրա: Իրավաբանական և ֆիզիկական անձանց զենքի հավաքածուում կարող են ներառվել ինքնապաշտպանական, սիրողական, որսորդության, սպորտային, ճանաչողական, պատմական, գիտական, գեղարվեստական, մշակութային և տեղեկատվական նշանակության զենքի տեսակները:

2. Պետական ռազմականացված կազմակերպությունները զենքի հավաքածու կազմում են առանց թույլտվության: Պետական ռազմականացված կազմակերպությունները զենքի հավաքածուում կարող են ներառել՝

1) քաղաքացիական զենք.

~~2) ծառայողական զենք.~~

3) մարտական զենք.

4) քրեական վարույթներով իրեղեն ապացույց ճանաչված (այդ թվում՝ ինքնաշեն, ապօրինի ձևափոխված կամ Հայաստանի Հանրապետության տարածքում շրջանառությունն արգելված) զենք՝ վերջնական դատական ակտի առկայության դեպքում.

5) արտադրական, ուսումնական զենք, փորձարկումների համար նախատեսված կամ նշված նպատակներով պատրաստված զենքի եզակի նմուշներ.

6) համապատասխանության գնահատում չանցած զենք.

7) սույն հոդվածի 2-րդ մասի 1-6-րդ կետերով նախատեսված զենքերի փամփուշտներ:

3. Զենքի հավաքածու կազմելու թույլտվություն ունեցող անձը պարտավոր է ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված զենքի պահման անվտանգության պայմանները:

4. Զենքի հավաքածու չեն համարվում և Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից հաշվառման ենթակա չեն՝

1) զենքի և ռազմամթերքի նմանակները (մակետները), որոնցից կենդանի կամ այլ նշանակետ խոցելն անհնար է.

2) կառուցվածքով զենքին նմանվող իրերը:

5. Հավաքածուում ընդգրկված քաղաքացիական զենքը կարող է օգտագործվել նաև ինքնապաշտպանության, սիրողական և սպորտային հրաձգության, որսորդության, մշակութային միջոցառումների ընթացքում՝ այդ մասին նախապես գրավոր տեղեկացնելով Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը:

## Հոդված 28. Զենքով պարգևատրումը

1. Հայաստանի Հանրապետությունում զենքով պարգևատրելու իրավունք ունի Հայաստանի Հանրապետության վարչապետը (այսուհետ՝ վարչապետ):

2. Վարչապետն իրավունք ունի զենքով պարգևատրել Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիներին՝ հիմք ընդունելով՝

1) Հայաստանի Հանրապետության անկախության կայացման ու ամրացման, ինչպես նաև ժողովրդավարության զարգացման գործում ներդրած նշանակալի ավանդը.

2) Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ռազմական շինարարության, ազգային անվտանգության, արտաքին հետախուզության, հասարակական կարգի և օրինականության պահպանության բնագավառներում ակնառու ծառայություններ մատուցած, զինված ուժերի կայացման գործում ներդրած ավանդի, երկարամյա օրինակելի և անբասիր ծառայության, ծառայողական պարտականությունները կամ հատուկ առաջադրանքները գերազանց կատարելու և Հայաստանի Հանրապետությանը մատուցած նշանակալի ու բացառիկ ծառայությունների համար:

3. Վարչապետը զենքով կարող է պարգևատրել ~~21~~ 18 տարին լրացած անձանց:

4. Վարչապետը զենքով չի կարող պարգևատրել սույն օրենքի 17-րդ հոդվածի 7-րդ մասում նշված անձանց:

5. Վարչապետի կողմից զենքով պարգևատրվելու մասին միջնորդագիր ներկայացնում են ~~համապատասխան պետական մարմինների~~ պետական ռազմականացված կազմակերպությունների ղեկավարները:

6. Վարչապետն իրավունք ունի զենքով պարգևատրելու սեփական նախաձեռնությամբ՝ առանց միջնորդագրի:

7. Զենքով պարգևատրելու համար նախատեսված փաստաթղթերը ներկայացվում են Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ (այսուհետ՝ վարչապետի աշխատակազմ): Վարչապետի աշխատակազմ են ներկայացվում՝

1) զենքով պարգևատրելու մասին միջնորդագիրը.

2) զենքով պարգևատրելու հիմնավորումը.

3) անձը հաստատող փաստաթղթի պատճենը.

4) 3x4 սմ չափի երկու լուսանկար.

5) զենքի տիրապետումը խոչընդոտող հիվանդությունների և վիճակների բացակայության մասին պարգևատրվողին տրված բժշկական եզրակացությունը.

6) զենքի հետ կապված և անվտանգության կանոնների իմացության տեսական և գործնական քննությունները հանձնելու համապատասխան փաստաթուղթը.

7) պետական պարգևների առկայության դեպքում՝ դրանց փաստաթղթերի պատճենները:

8. Վարչապետի կողմից զենքով պարգևատրվելու մասին ներկայացված միջնորդագրի վերաբերյալ դրական եզրակացության դեպքում Հայաստանի Հանրապետության ոստիկանություն են ներկայացվում զենք ձեռք բերելու վերաբերյալ հայտը և սույն հոդվածի 7-րդ մասով նախատեսված փաստաթղթերը:

9. Զենքով պարգևատրելու արարողության ընթացքում պարգևատրվողին է հանձնվում նաև վարչապետի որոշումը: Պարգևատրման արարողությունից հետո վարչապետի որոշումն ուղարկվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանություն՝ զենքը պարգևատրվողի անվամբ հաշվառելու համար:

10. Վարչապետի կողմից պարգև տրվող զենքի վրա կարող են փորագրվել «Հայաստանի Հանրապետության վարչապետից» բառերը:

11. Պարգև տրված զենք է համարվում նաև օտարերկրյա պետությունների կամ դրանց կառավարությունների ղեկավարների կողմից պարգևատրման փաստաթղթերի հիման վրա Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին տրված զենքը:

12. Օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության քաղաքացուն զենքով պարգևատրելու դեպքում քաղաքացին պարտավոր է տվյալ զենքը Հայաստանի Հանրապետություն ներկրելուց հետո ներկայացնել Հայաստանի Հանրապետության ոստիկանություն՝ հաշվառման:

13. Քաղաքացին Հայաստանի Հանրապետության ոստիկանություն է ներկայացնում՝

1) պարգևատրման փաստաթղթերը.

2) անձը հաստատող փաստաթղթի պատճենը.

3) 3x4 սմ չափի երկու լուսանկար.

4) զենքի տիրապետումը խոչընդոտող հիվանդությունների և վիճակների բացակայության մասին բժշկական եզրակացությունը.

5) զենքի հետ կապված և անվտանգության կանոնների իմացության տեսական և գործնական քննությունները հանձնելու համապատասխան փաստաթուղթը:

14. Որպես պարգև տրված զենքը պարգևատրվողին է հանձնվում սեփականության իրավունքով՝ զենք պահելու և կրելու թույլտվությամբ՝ անժամկետ:

15. Օտարերկրյա պետությունում որպես պարգևատրում ստացած զենքի համար զենք պահելու և կրելու թույլտվություն չի տրվում՝

1) սույն օրենքի 17-րդ հոդվածի 7-րդ մասում նշված անձանց.

2) սույն հոդվածի 13-րդ մասով նախատեսված փաստաթղթերը չներկայացրած անձանց:

16. Օտարերկրյա պետությունում որպես պարգևատրում ստացած զենքի համար զենք պահելու և կրելու թույլտվություն չստանալու դեպքում քաղաքացին իրավունք ունի՝

1) Հայաստանի Հանրապետության ոստիկանությունից ստանալու որպես պարգևատրում ստացած զենք պահելու թույլտվություն՝ մալած վիճակում.

2) վաճառելու զենքը քաղաքացիական ~~և ծառայողական~~ զենքի առևտրի լիցենզիա ունեցող իրավաբանական անձանց.

3) նվիրելու զենքը պետական ռազմականացված կազմակերպություններին.

4) հանձնելու զենքը Հայաստանի Հանրապետության ոստիկանություն՝ զենքը դիվանագիտական ներկայացուցչության միջոցով վերադարձնելու պարգևատրող պետությանը:

17. Որպես պարգև չի կարող տրվել այն զենքը, որը թույլ է տալիս կրակ արձակել կրակահերթով, ինչպես նաև այն զենքը, որի շրջանառությունն արգելված է Հայաստանի Հանրապետության տարածքում:

18. Վարչապետի կողմից զենքով պարգևատրվելու համար որպես պարգև տրվող զենքը ձեռք բերելու գործընթացը կատարում է ներքին գործերի բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը:

19. Պարգևատրելու նպատակով զենք ձեռք բերելու անհրաժեշտության դեպքում վարչապետի աշխատակազմի կողմից պարգևատրվելուց առնվազն մեկ ամիս առաջ ներքին գործերի բնագավառի պետական կառավարման լիազոր մարմին է ներկայացվում հայտ՝ նշելով որպես պարգև տրվող զենքի տեսակը, մոդելը:

20. Ներքին գործերի բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը որպես պարգև տրվող զենքի մասին հայտն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, ապահովում է զենքի փոխանցումը վարչապետի աշխատակազմ:

21. Որպես պարգև տրված զենքի սեփականատերը կամ ժառանգը զենքը չի կարող հանձնել այլ անձի տիրապետմանը, օգտագործմանը կամ տնօրինմանը, բացառությամբ քաղաքացիական ~~և ծառայողական~~ զենքի առևտրի լիցենզիա ունեցող իրավաբանական անձանց՝ վաճառելու նպատակով կամ պետական ռազմականացված կազմակերպություններին՝ նվիրելու նպատակով:

22. Որպես պարգև տրված զենքի ժառանգման դեպքում այն ժառանգին տրվում է պահելու թույլտվությամբ՝ մալելուց հետո, բացառությամբ եթե ժառանգը սույն օրենքով սահմանված կարգով ստացել է զենք պահելու և կրելու կամ զենքի հավաքածու կազմելու թույլտվություն:

23. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի սպայական կազմի զինծառայողներին սպայական դաշույնով պարգևատրելու իրավունք ունի Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարը՝ «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» օրենքով սահմանված կարգով:

***(28-րդ հոդվածը լրաց. 23.12.22 ՀՕ-606-Ն, փոփ. 16.12.22 ՀՕ-475-Ն, լրաց. 13.07.23 ՀՕ-268-Ն)***

***(13.07.23 ՀՕ-268-Ն օրենքն ունի եզրափակիչ մաս և անցումային դրույթներ)***

**Հոդված 29. Քաղաքացիական ~~և ծառայողական~~ զենքի, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերի, փամփուշտների վաճառքը, նվիրումը, փոխանցումը և ժառանգումը**

1. Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 3-8-րդ կետերում նշված՝ զենք ձեռք բերելու իրավունք ունեցող սուբյեկտները կարող են վաճառել կամ նվիրել օրինական հիմքերով իրենց պատկանող քաղաքացիական ~~և ծառայողական~~ զենքը, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերը և փամփուշտները քաղաքացիական և ծառայողական զենքի առևտրի լիցենզիա ունեցող իրավաբանական անձանց, պետական ռազմականացված կազմակերպություններին՝ այդ մասին նախապես տեղեկացնելով զենքի հաշվառման վայրի Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը:

2. Ֆիզիկական անձինք իրավունք ունեն իրենց զենքը, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերը և փամփուշտները վաճառելու կամ նվիրելու զենքի համապատասխան թույլտվություն ունեցող ֆիզիկական կամ իրավաբանական անձին՝ նախապես այդ մասին տեղեկացնելով Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը: Զենքի վերահաշվառումն ու վերագրանցումը կատարվում են զենքի հաշվառման և գրանցման ընթացակարգով:

3. Իրավաբանական և ֆիզիկական անձանց պատկանող քաղաքացիական ~~և ծառայողական~~ զենքը կարող է փոխանցվել՝

1) Հայաստանի Հանրապետության ոստիկանություն՝ զենքը պահելու կամ փորձաքննության համար կամ ի տնօրինություն.

2) ***(կետն ուժը կորցրել է 13.07.23 ՀՕ-268-Ն)***

3) սերտիֆիկացման մարմիններին՝ համապատասխանության գնահատում անցկացնելու համար.

4) Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության լիազորած մասնագետներին՝ պատմամշակութային և արվեստաբանական փորձաքննության համար.

5) սպորտային հրաձգությամբ զբաղվող կազմակերպություններին՝ հրաձգային պարապմունքների ու մրցումների անցկացման ժամանակ.

6) մաքսային մարմիններին՝ ներկրվող կամ արտահանվող զենքը մաքսազերծելու համար.

7) զենք փոխադրողին՝ փոխադրելու համար:

4. Սույն հոդվածի 3-րդ մասում նշված սուբյեկտներին զենքը փոխանցվում է ներքին գործերի բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի սահմանած կարգով:

5. Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը զենք ձեռք բերելու, պահելու և կրելու, պահելու և օգտագործելու, զենքի հավաքածու կազմելու և զենքի հավաքածու ցուցադրելու թույլտվություն տալու յուրաքանչյուր դեպքի մասին անհապաղ, բայց ոչ ուշ, քան թույլտվությունը տալու օրվանից հաշված՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, համապատասխան տեղեկատվություն է ներկայացնում ֆիզիկական անձանց մահվան փաստը գրանցելու և հաշվառելու իրավասություն ունեցող լիազոր մարմին, իսկ վերջինս նույն անձանց մահվան փաստն արձանագրելու դեպքում այդ մասին անհապաղ, բայց ոչ ուշ, քան երեք աշխատանքային օրվա ընթացքում հայտնում է Հայաստանի Հանրապետության ոստիկանություն, որն անհապաղ, բայց ոչ ուշ, քան այդ մասին տեղեկատվությունն ստանալու օրվանից 10 օրվա ընթացքում համապատասխան միջոցներ է ձեռնարկում զենքը ժամանակավոր առգրավելու, վերցնելու ուղղությամբ:

6. Քաղաքացիական զենքի ժառանգումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1250-րդ հոդվածով սահմանված կարգով:

7. Ժառանգի կողմից զենքից, զենքի հավաքածուից կամովին հրաժարվելու դեպքում կամ անժառանգ զենք լինելու դեպքում զենքն անցնում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության տնօրինմանը:

8. Եթե զենքի, զենքի հավաքածուի ժառանգությունն ստանձնած ժառանգը ձեռք չի բերում զենքի համապատասխան թույլտվություն, ապա պարտավոր է այդ մասին անհապաղ, բայց ոչ ուշ, քան ժառանգությունն ստանալու օրվանից հաշված՝ յոթնօրյա ժամկետում, հայտնել Հայաստանի Հանրապետության ոստիկանություն՝ վերջինիս միջոցով համապատասխան զենքը կամ զենքի հավաքածուն տնօրինելու և ժառանգին փոխհատուցում տրամադրելու համար: Զենքը կամ զենքի հավաքածուն տնօրինելու գործընթացը Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը կատարում է նաև այն դեպքում, երբ ժառանգությունն ստանձնած ժառանգը մերժում է ստանում համապատասխան թույլտվությունը տրամադրելու հարցում:

***(29-րդ հոդվածը փոփ. 16.12.22 ՀՕ-475-Ն, 13.07.23 ՀՕ-268-Ն)***

***(13.07.23 <u>ՀՕ-268-Ն</u> օրենքն ունի եզրափակիչ մաս և անցումային դրույթներ)***

**Հոդված 31. Զենքի հաշվառումը**

1. Հայաստանի Հանրապետության տարածքում օրինական շրջանառության մեջ գտնվող յուրաքանչյուր միավոր ակոսափող հրազենից կատարվում է նախնական ստուգողական կրակոց՝ ծգաբանական արդյունքները հանրապետական գնդակապարկուճային հաշվառման քարտադարան ներկայացնելով, որի գործունեության կարգը սահմանում է Կառավարությունը:

2. ***(մասն ուժը կորցրել է 13.07.23 ՀՕ-268-Ն)***

3. Ակոսափող զենքը վաճառելու, նվիրելու, ժառանգելու դեպքում ստուգման նպատակով կրակելու համար այն ներկայացվում է փորձաքրեագիտական ստորաբաժանում՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության տված ուղեգրի համաձայն, որից հետո ֆիզիկական կամ իրավաբանական անձին տրվում է համապատասխան տեղեկանք՝ զենքի հաշվառման վերաբերյալ:

4. Հայաստանի Հանրապետությունում շրջանառվող քաղաքացիական և ~~ծառայողական~~ բոլոր զենքերը ենթակա են հաշվառման Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում՝ քաղաքացիական և ծառայողական զենքերի հաշվառման միասնական էլեկտրոնային շտեմարանում և թղթային տարբերակով, որոնց կարգը սահմանում է Կառավարությունը:

5. Քաղաքացիական ~~և ծառայողական~~ զենքերի հաշվառման միասնական էլեկտրոնային շտեմարանում հաշվառվող տեղեկությունները անձնական տվյալներ են, որոնք մշակվում են առանց տվյալների սուբյեկտի համաձայնության՝ օրենքով սահմանված կարգով: Որպես սահմանափակ շրջանառության օբյեկտ՝ արգելվում է զենքի հաշվառման վերաբերյալ տեղեկությունների տրամադրումը այլ անձի կամ այլ մարմինների, բացառությամբ՝

1) «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված դեպքերի.

2) քրեական հետապնդում իրականացնող մարմինների՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով.

3) համայնքային ոստիկանության՝ սույն օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված գործառույթներն իրականացնելու նպատակով.

4) անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման գործառույթ իրականացնող ոստիկանության ծառայողների՝ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքով սահմանված համապատասխան միջոցառումներ կատարելու նպատակով.

5) նոտարական մարմինների՝ նոտարական գործարքներ կատարելու նպատակով.

6) դատական մարմինների՝ դատաքննության անհրաժեշտությունից ելնելով.

7) լիազոր մարմնի ֆինանսական ծառայության՝ պետական տուրքերի վճարման մասով.

8) օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով սահմանված կարգով:

6. Քաղաքացիական ~~և ծառայողական~~ զենքերի հաշվառման միասնական էլեկտրոնային շտեմարանը մշտադիտարկման նպատակով այլ մարմինների չի տրամադրվում:

7. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պատասխանատու ծառայողը քաղաքացիական ~~և ծառայողական~~ զենքերի հաշվառման միասնական էլեկտրոնային շտեմարանում տվյալները սխալ, թերի կամ այլ խախտումներով մուտքագրելու համար ենթակա է պատասխանատվության «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» օրենքով սահմանված կարգով:

8. ~~Չհաշվառված քաղաքացիական զենքերը քաղաքացու կողմից կամովին ներկայացվելու, քրեադատավարական ընթացակարգով անցնելուց և վարույթ իրականացնող մարմնի կողմից քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ որոշում կայացվելուց հետո Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը զենքը կարող է հաշվառել և քաղաքացուն տրամադրել օրենքով նախատեսված համապատասխան թույլտվություն:~~ Չհաշվառված քաղաքացիական զենքերը քաղաքացու կողմից Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմիններին կամովին ներկայացվելու դեպքում, համապատասխան քրեադատավարական ընթացակարգով անցնելուց և վարույթ իրականացնող մարմնի կողմից քրեական վարույթը կարճելու վերաբերյալ որոշում կայացվելուց և օրենքով սահմանված կարգով զենք ձեռք բերելու թույլտվություն ստանալուց հետո Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը զենքը հաշվառում և տրամադրում է քաղաքացուն՝ զենք պահելու և կրելու իրավունքով:

9. Անհատական համար և դրոշմ չունեցող, ինչպես նաև ինքնաշեն կամ ապօրինի ձևափոխված քաղաքացիական զենքերը հաշվառման ենթակա չեն և օրենքով սահմանված կարգով ենթակա են առգրավվելու, վերցնելու և ոչնչացնելու:

10. Իրավաբանական անձն իր գործունեության վայրի հասցեն կամ քաղաքացին իր բնակության վայրը (բնակչության պետական ռեգիստրում հաշվառման հասցեն) փոխելիս մեկշաբաթյա ժամկետում տեղեկացնում է լիազոր մարմնին՝ զենքը նոր հասցեում հաշվառելու համար:

11. Իրավաբանական անձինք ապահովում են իրենց զենքի և փամփուշտների հաշվառումը:

12. Տեխնիկական կանոնակարգին համապատասխան՝ մինչև 7.5 ջոուլ փողային էներգիայով օդաճնշիչ սարքը (այդ թվում՝ ռևոլվերները), դրանց փամփուշտները, մեխանիկական փոշեցրիչները, աերոզոլային և այլ սարքեր, որոնք լիցքավորված են արցունքաբեր կամ գրգռիչ նյութերով, էլեկտրահարող սարքերը ու կայծային պարպիչները, ինչպես նաև կառուցվածքով զենքի նմանվող իրերը և զենքի պարագաները հաշվառման ենթակա չեն, ~~և քաղաքացին դրանք առանց~~

~~թույլտվության կարող է ձեռք բերել միայն քաղաքացիական և ծառայողական զենքի առևտրի լիցենզիա ունեցող իրավաբանական անձանցից:~~ և դրանք վաճառելու իրավունք ունեն միայն քաղաքացիական զենքի առևտրի լիցենզիա ունեցող իրավաբանական անձինք:

***(31-րդ հոդվածը փոփ. 13.07.23 ՀՕ-268-Ն)***

***(13.07.23 ՀՕ-268-Ն օրենքն ունի եզրափակիչ մաս և անցումային դրույթներ)***

**Հոդված 32. Վերահսկողությունը զենքի շրջանառության նկատմամբ**

1. Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական ~~և ծառայողական~~ զենքի շրջանառության նկատմամբ իր իրավասության սահմաններում վերահսկողություն է իրականացնում Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը:

2. Պետական ռազմականացված կազմակերպությունների սպառազինության մեջ գտնվող զենքի շրջանառության նկատմամբ վերահսկողությունը կատարվում է Կառավարության սահմանած կարգով:

3. Քաղաքացիական և ծառայողական զենքի շրջանառության վրա վերահսկողության լիազորություն ունեցող Հայաստանի Հանրապետության ոստիկանության համապատասխան ստորաբաժանումներն իրավասու են՝

1) անցկացնելու զենքի զննություն դրա արտադրության, ներկրման, արտահանման, առևտրի, պահման և ոչնչացման վայրերում.

2) կիսամյակը մեկ անգամ ստուգելու զենք և փամփուշտներ պահելու օբյեկտները.

3) տարին մեկ անգամ զենքի սեփականատեր-քաղաքացիների բնակության վայրում և իրավաբանական անձանց հաշվառման վայրում ստուգելու զենքի առկայությունը և այն պահելու պայմանները.

4) սահմանված կարգով անհատույց առգրավելու, վերցնելու և ոչնչացնելու Հայաստանի Հանրապետության տարածքում շրջանառությունն արգելված զենքը, բացառությամբ եթե պետական ռազմականացված կազմակերպությունն այն ցանկանում է ներառել իր հավաքածուում.

5) իրենց վերահսկողական գործառույթների իրականացման նպատակով ֆիզիկական և իրավաբանական անձանցից պահանջելու ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթեր, գրավոր կամ բանավոր տեղեկություններ.

6) սահմանված կանոնների խախտումներ հայտնաբերելու դեպքում ֆիզիկական և իրավաբանական անձանց տալու դրանց վերացման մասին պարտադիր կատարման ենթակա հանձնարարականներ.

7) հարուցելու վարչական վարույթ, կազմելու վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություններ.

8) ձեռնարկելու օրենսդրությամբ նախատեսված այլ միջոցներ:

4. Առգրավված, վերցված, կամավոր հանձնված և գտնված զենքի ու ռազմամթերքի ընդունման կարգը սահմանում է Կառավարությունը:

5. Քաղաքացին Հայաստանի Հանրապետությունից 180 օրից ավել բացակայելու դեպքում զենքն ի պահ է հանձնում Հայաստանի Հանրապետության ոստիկանության տարածքային ստորաբաժանմանը: Եթե Հայաստանի Հանրապետությունից բացակայելու դեպքում քաղաքացին զենքն ի պահ չի հանձնում Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը, կամ Հայաստանի Հանրապետության ոստիկանության համապատասխան պաշտոնատար անձին տևական ժամանակ անհասանելի են դառնում զենքի սեփականատեր-քաղաքացու բնակության վայրում զենքի առկայությունը և այն պահելու պայմաններն ստուգելը, ապա զենքը հաշվառվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնում որպես վերահսկողությունից դուրս մնացած զենք: Վերահսկողությունից դուրս մնացած զենքը հաշվառելու և հաշվառումից հանելու կարգը սահմանում է Կառավարությունը:

6. Զենքն առգրավող, վերցնող մարմինը պարտավոր է այդ մասին տասնօրյա ժամկետում հայտնել Հայաստանի Հանրապետության ոստիկանություն՝ որպես վերահսկողությունից դուրս մնացած զենք հաշվառումից հանելու համար:

### Հոդված 33. Հրաձգարանի գործարկումը

1. Հրաձգարան գործարկելու իրավունք ունեն հրաձգարան գործարկելու լիցենզիա ունեցող իրավաբանական անձինք: Հրաձգարան գործարկելու լիցենզիա ունեցող իրավաբանական անձինք պարտավոր են ապահովել անվտանգության պայմանները, անցագրային և ներօբյեկտային ռեժիմը, ինչպես նաև սույն օրենքով սահմանված այլ պահանջներ:

2. Հրաձգարանի շահագործումը թույլատրվում է սույն օրենքի պահանջներին և ներքին գործերի բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի սահմանած տեխնիկական անվտանգության նորմերին համապատասխան սարքավորելուց հետո:

3. Զենքի արտադրությամբ զբաղվող իրավաբանական անձը արտադրված զենքի փորձարկման հրաձգարանը շահագործում է սույն և այլ օրենքներով սահմանված տեխնիկական անվտանգության պայմաններին համապատասխան՝ զենքի արտադրության լիցենզիայի հիման վրա:

4. Հրաձգարանը պետք է տեղակայվի, կառուցվի և հագեցվի այնպես, որ դրա շահագործման ընթացքում ապահովվի հրաձգարանից օգտվողների և շրջակա միջավայրի անվտանգությունը, բացառվի չարտոնված անձանց և կենդանիների մուտքը կրակային տարածք:

5. ~~Ակոսափող հրազենի համար նախատեսված բաց, կիսափակ և փակ հրաձգարանները պետք է սարքավորվեն գնդակաորսիչներով: Բաց հրաձգարանը պետք է ունենա նաև բնական խոչընդոտներ: Բաց հրաձգարանի կրակագծից մինչև բնակավայր, բնակելի, պետական, հասարակական և արտադրական շինություններ պետք է լինի առնվազն 3000 մետր, իսկ կիսաբաց հրաձգարանների դեպքում~~

~~հատակագծային սահմանից մինչև բնակավայր, բնակելի, պետական, հասարակական և արտադրական շինություններ՝ առնվազն 300 մետր հեռավորություն:~~ Ակոսափող հրազենի համար նախատեսված բաց, կիսափակ և փակ հրաձգարանները պետք է սարքավորվեն անվտանգության կանոններին համապատասխան: Բաց հրաձգարանը պետք է ունենա նաև գնդակի արգելակման խոչընդոտներ: Բաց հրաձգարանի կրակագծից՝ կրակ բացելու ուղղությամբ մինչև բնակելի, պետական, հասարակական և արտադրական շինություններ պետք է լինի առնվազն 3000 մետր, իսկ կիսաբաց հրաձգարանների դեպքում հատակագծային սահմանից մինչև բնակավայր, բնակելի, պետական, հասարակական և արտադրական շինություններ՝ առնվազն 300 մետր հեռավորություն:

6. Ողորկափող հրազենով կրակելու համար նախատեսված հրաձգաստենդային համալիրները պետք է ունենան պարագծով ցանկապատված անվտանգության գոտի և գտնվեն բնակելի, պետական, հասարակական և արտադրական շենքերից առնվազն 500 մետր հեռավորության վրա:

7. Այն հրաձգարանները, որոնք օգտագործում են միայն մինչև 7.5 ջոուլ փողային էներգիա և 4.5 մմ տրամաչափը չգերազանցող օդաճնշիչ սարքեր, գործում են առանց հրաձգարան գործարկելու լիցենզիայի, սակայն իրենց գործունեության մասին պարտավոր են գրավոր տեղեկացնել ներքին գործերի բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնին:

8. Հրաձգարանները, որտեղ անցկացվում են սպորտային միջոցառումներ, պետք է կառուցվեն և սարքավորվեն համապատասխան միջազգային հավատարմագրված մարզական կազմակերպության պահանջներին համապատասխան:

9. Հրաձգարանում տեսանելի տեղում պետք է փակցվեն անվտանգության կանոնները, ներքին կանոնակարգը և հրաձգության համար պատասխանատու անձանց տվյալները:

10. Հրաձգարաններին ներկայացվող շենքային, տեխնիկական, տնտեսական, անվտանգության այլ պահանջները, ~~ուսումնական, սիրողական, սպորտային վարժանքների, հրաձգության և տակտիկական պարապմունքների, մրցումների անցկացման պահանջները~~ սահմանվում են ներքին գործերի բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի սահմանած կարգով:

11. Արգելվում է կառուցել, նախագծել բաց հրաձգարանի կրակագծից՝ կրակ բացելու ուղղությամբ մինչև բնակավայր, բնակելի, պետական, հասարակական և արտադրական շինություններ առնվազն 3000 մետր, իսկ կիսաբաց հրաձգարանների դեպքում հատակագծային սահմանից մինչև բնակավայր, բնակելի, պետական, հասարակական և արտադրական շինություններ՝ առնվազն 300 մետր հեռավորությամբ: Հրաձգարանների վրայով քաղաքացիական ավիացիայի անվտանգ թռիչքների նորմերը սահմանում է քաղաքացիական ավիացիայի ոլորտում պետական կառավարման լիազոր մարմինը:

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1**. «Ազգային անվտանգության մարմինների մասին» 2001 թվականի դեկտեմբերի 28-ի ՀՕ-294 օրենքի (այսուհետ՝ օրենք) 25-րդ հոդվածի 1-ին մասում «մարտական զենք, ինչպես նաև ծառայողական» բառերը հանել:

**Հոդված 2**. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1**. «Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների մասին» 2004 թվականի մարտի 31-ի ՀՕ-60-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 14-րդ հոդվածի 3-րդ մասը «ծառայողական» բառը հանել:

**Հոդված 2**. Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասը «մարտական ու ծառայողական» բառերը հանել:

**Հոդված 3**. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «ԻՆԿԱՍԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1**. «Ինկասացիայի մասին» 2004 թվականի սեպտեմբերի 28-ի ՀՕ-111-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 4-րդ հոդվածի 3-րդ մասը «և ծառայողական» շաղկապը և բառը հանել:

**Հոդված 2**. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1**. «Բնապահպանական վերահսկողության մասին» 2005 թվականի ապրիլի 11-ի ՀՕ-82-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածի 1-ին մասի «ժա» կետը «ծառայողական» բառը փոխարինել «քաղաքացիական» բառով:

**Հոդված 2**. Օրենքի 17-րդ հոդվածում «ծառայողական» բառը փոխարինել «քաղաքացիական» բառով:

**Հոդված 3**. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1**. «Քրեակատարողական ծառայության մասին» 2005 թվականի հուլիսի 8-ի ՀՕ-160-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 50-րդ հոդվածի վերնագրում, 1-ին մասում «մարտական կամ ծառայողական» բառերը հանել:

**Հոդված 2**. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1**. «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» 2006 թվականի նոյեմբերի 27-ի ՀՕ-211-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 8-րդ հոդվածի ժդ կետում, «ծառայողական զենքի ու զինամթերքի» բառերը փոխարինել «քաղաքացիական զենքի ու ռազմամթերքի» բառերով:

**Հոդված 2**. Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի դ կետում «ծառայողական զենք, զինամթերք» բառերը փոխարինել «քաղաքացիական զենք, ռազմամթերք» բառերով:

**Հոդված 3**. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

## «ԱՎԻԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1**. «Ավիացիայի մասին» 2007 թվականի փետրվարի 22-ի ՀՕ-81-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 52-րդ հոդվածի 9-րդ մասի 1-ին կետում, «ծառայողական» բառը փոխարինել «քաղաքացիական» բառով:

**Հոդված 2**. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1**. «Երկաթուղային տրանսպորտի մասին» 2007 թվականի նոյեմբերի 28-ի ՀՕ-293-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 25-րդ հոդվածի 9-րդ մասի «կրել և կիրառել ծառայողական» բառերը փոխարինել «պահել և կրել քաղաքացիական» բառով:

**Հոդված 2**. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1**. «Դատախազության մասին» 2017 թվականի նոյեմբերի 17-ի ՀՕ-198-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 70-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասի «ծառայողական հաշվեցուցակային» բառերը հանել:

**Հոդված 2**. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1**. «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» 2021 թվականի մարտի 24-ի ՀՕ-147-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 45-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասի «ծառայողական հաշվեցուցակային» բառերը հանել:

**Հոդված 2**. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «ՈՐՍԻ ԵՎ ՈՐՍՈՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1**. «Որսի եվ որսորդական տնտեսության վարման մասին» 2007 թվականի ապրիլի 9-ի ՀՕ-176-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 21.1 հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի «օդամղիչ զենքի» բառերը հանել, «ռազմական ակոսավոր» բառերը փոխարինել «մարտական» բառով:

**Հոդված 2**. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ՕՐԵՆՔԸ

# «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1**. «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 19.1-ին հոդվածում՝

1) 1-ին և 2-րդ մասերը «քաղաքացիական և ծառայողական» բառերը հանել.

2) 3-րդ մասը «և ծառայողական» շաղկապը և բառը հանել.

3) 6-րդ մասը ճանաչել ուժը կորցրած.

1) 8-րդ մասը՝

ա. «ա» կետը «անժամկետ» բառը փոխարինել «10 տարի» բառերով.

բ. «բ» կետը «անժամկետ» բառը փոխարինել «10 տարով» բառերով.

2) 10-րդ մասը՝

ա. «ա» կետը «60» թիվը փոխարինել «20» թվով.

բ. «բ» կետը «40» թիվը փոխարինել «10» թվով.

3) 11-րդ մասը «ծառայողական, այդ թվում՝ մարտական զենքի առանձին տեսակներ կրելու,» բառերը և կետադրական նշանը փոխարինել «զենք» բառով.

4) 12-րդ մասը՝

ա. «գազային բառից հետո լրացնել «ազդանշանային, նետողական» բառերը.

բ. «դ» կետը ճանաչել ուժը կորցրած.

5) 15-րդ մասը «գազային» բառից հետո լրացնել «ազդանշանային, նետողական» բառերը.

6) 19-րդ մասը ճանաչել ուժը կորցրած.

7) 20-րդ մասը «Քաղաքացիական, ծառայողական և պարգևատրական» բառերը հանել.

8) 21-րդ մասը «մարտական կամ ծառայողական» բառերը հանել.

9) 22-րդ մասը՝

ա. «ա» կետը «10-ապատիկի» բառը հանել.

բ. «ե» և «զ» կետերում «հնգապատիկի» բառը հանել.

10) լրացնել նոր՝ 26-րդ մասով հետևյալ բովանդակությամբ.

«26. Զենքի տիրապետումը խոչընդոտող հիվանդությունների և վիճակների մասին բժշկական հետազոտություններ և դրանց բացակայության մասին տրվող եզրակացություն:

բազային տուրքի
20-ապատիկի չափով»

**Հոդված 2**. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ՕՐԵՆՔԸ

# «ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1**. «Լիցենզավորման մասին» 2001 թվականի մայիսի 30-ի ՀՕ-193 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի «1. **ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ**» բաժնի՝

1) 4-րդ կետում «քաղաքացիական և ծառայողական» բառերը հանել.

2) 5-րդ կետում «և ծառայողական» շաղկապը և բառը հանել:

**Հոդված 2**. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ՕՐԵՆՔԸ

## «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1**. «Ոստիկանության մասին» 2001 թվականի ապրիլի 16-ի ՀՕ-177 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 14-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 14. **Ոստիկանության պարտականությունները զենքի շրջանառության նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս**

Ոստիկանությունը պարտավոր է պատշաճ իրականացնել «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքով նախատեսված լիազորությունները և պարտականությունները:»:

**Հոդված 2**. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ՕՐԵՆՔԸ

## «ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1**. «Փոստային կապի մասին» 2004 թվականի դեկտեմբերի 14-ի ՀՕ-46-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածի 3-րդ մասը «և ծառայողական» շաղկապը և բառը հանել:

**Հոդված 2**. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ՕՐԵՆՔԸ

# «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1**. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 160-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Քաղաքացիական զենքի առևտրի լիցենզիա ունեցող իրավաբանական անձանց կողմից քաղաքացիական զենք վաճառելը տվյալ տեսակի զենք ձեռք բերելու թույլտվություն չներկայացրած, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասեր վաճառելը՝ հրազենի հիմնական բաղկացուցիչ մասեր ձեռք բերելու թույլտվություն չներկայացրած, փամփուշտներ վաճառելը՝ տվյալ տեսակի զենք պահելու և կրելու կամ պահելու և օգտագործելու թույլտվություն չներկայացրած իրավաբանական կամ ֆիզիկական անձանց՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:»

**Հոդված 2.** Օրենսգրքի 173-րդ հոդվածը «երեսնապատիկի» բառը փոխարինել «հարյուրապատիկի» բառով:

**Հոդված 3.** Օրենսգրքի ամբողջ տեքստում «հրազեն» բառը համապատասխան հոլովաձևերով փոխարինել «զենք» բառով:

**Հոդված 4**. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ՕՐԵՆՔԸ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** 2021 թվականի մայիսի 5-ի Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 334 հոդվածը՝

1) վերնագիրը և 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«**Հոդված 334. Գազային, ազդանշանային, սառը կամ նետողական զենք ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը, առաքելը կամ կրելը**

1. Ապօրինի կերպով գազային, ազդանշանային, սառը կամ նետողական զենք ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը, առաքելը կամ կրելը՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը հարյուրհիսունապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուր հիսունից երկու հարյուր ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:».

2) 2-րդ մասը «տասնապատիկից երեսնապատիկի» բառերը փոխարինել «հարյուրհիսունապատից երեքհարյուրապատիկի» բառերով, «հարյուրից երկու հարյուր» բառերը փոխարինել «երկու հարյուր յոթանասուն» բառերով:

**Հոդված 2.** Օրենսգրքի 335 հոդվածում՝

1) վերնագրում «մասերի» բառից հետո լրացնել «օդաճնշիչ զենքի, սահմանափակ խոցելիությամբ (վնասվածքային) հրազենի» բառերը.

2) 1-ին մասը «(բացառությամբ քաղաքացիական ողորկափող հրազենի, դրա փամփուշտների կամ դրա բաղկացուցիչ մասերի)» բառերը հանել, «մաս» բառից հետո լրացնել «օդաճնշիչ զենք, սահմանափակ խոցելիությամբ (վնասվածքային) հրազեն և դրա փամփուշտներ» բառերը.

**Հոդված 3.** Օրենսգրքի 336 հոդվածի վերնագրում, 1-ին մասում «հրազեն, դրա » բառերը փոխարինել «զենք, հրազենի» բառերով.

**Հոդված 4.** Օրենսգրքի 337 հոդվածում՝

1) վերնագրում հանել «հրազենի» բառը.

2) 1-ին մասը «հրազենի» բառը փոխարինել «զենքի» բառով:

**Հոդված 5.** Օրենսգրքի 338 հոդվածի վերնագրում, 1-ին մասում «հրազեն, դրա» բառերը փոխարինել «զենք, հրազենի» բառերով:

**Հոդված 6.** Օրենսգրքի 339 հոդվածի վերնագրում, 1-ին մասում «հրազեն, դրա» բառերը փոխարինել «զենք, հրազենի» բառերով:

**Հոդված 7.** Օրենսգրքի 340 հոդվածում՝

1) վերնագրում «հրազենի» բառը փոխարինել «զենքի» բառով.

2) 1-ին մասը «հրազենի կամ դրա բաղկացուցիչ մասի» բառերը փոխարինել «զենքի, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերի» բառերով:

**Հոդված 8.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՏԵՂԵԿԱՆՔ**
**ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ»**

Հոդված 25. **Ազգային անվտանգության մարմինների սպառազինության և հանդերձավորման միջոցները**

Ազգային անվտանգության մարմինները մշակում, ստեղծում, ձեռք են բերում և օգտագործում են սպառազինության և հանդերձավորման միջոցներ (ներառյալ՝ տեխնիկական և այլ հատուկ միջոցներ), ձեռք են բերում և օգտագործում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ազգային անվտանգության մարմինների համար նախատեսված և սպառազինության համար ընդունված ~~մարտական զենք, ինչպես նաև ծառայողական~~ զենք ու ռազմամթերք:

Ազգային անվտանգության մարմինների կողմից օգտագործվող սպառազինության և հանդերձավորման միջոցների (ներառյալ՝ հատուկ տեխնիկական և այլ միջոցներ) փոխանցումը, Հայաստանի Հանրապետությունից արտահանումը և Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծումն ազգային անվտանգության մարմիններն իրագործում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

## ՏԵՂԵԿԱՆՔ
## ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ»

**Հոդված 14. Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների մարտական կիրառումը քաղաքացիական պաշտպանության միջոցառումներին և փրկարարական աշխատանքներին մասնակցությունը**

*(վերնագիրը փոփ. 26.05.05 ՀՕ-124-Ն, լրաց. 07.04.16 ՀՕ-39-Ն)*

Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների մարտական կիրառման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի, փրկարարական ծառայության կանոնագրքերով և կանոնադրություններով:

Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների պահակային ծառայությունը կազմակերպվում և իրականացվում է Հայաստանի Հանրապետության զինված ուժերում պահակային ծառայությունը սահմանող իրավական ակտերին համապատասխան:

Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումներում պահակային ծառայությունը կարող է կազմակերպվել նաև ռազմականացված կամ ոչ ռազմականացված պահակային ստորաբաժանումների՝ փրկարարական ծառայության մեջ չգտնվող անձանց միջոցով: Ռազմականացված պահակային ստորաբաժանումներում պահպանությունն իրականացվում է ~~ծառայողական~~ զենքով՝ քաղաքացիական պաշտպանության բնագավառի լիազորված մարմնի ղեկավարի հրամանով սահմանված կարգով:

***(14-րդ հոդվածը փոփ., խմբ. 26.05.05 ՀՕ-124-Ն, լրաց. 07.04.16 ՀՕ-39-Ն)***

***(հոդվածը 16.12.22 ՀՕ-482-Ն օրենքի փոփոխությամբ ուժի մեջ կմտնի Փրկարար ծառայության կանոնադրությունն ուժի մեջ մտնելու օրվանից)***

**Հոդված 15. Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների անձնակազմը**

*(վերնագիրը փոփ. 26.05.05 ՀՕ-124-Ն)*

Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների անձնակազմը բաղկացած է փրկարարական ծառայողներից և քաղաքացիական անձնակազմից:

Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների փրկարարական ծառայողներին շնորհվում են փրկարարական կոչումներ՝ «Փրկարար ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների փրկարարական ծառայողները կրում են փրկարարական ծառայության համազգեստ, փրկարարական կոչումներ և քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների տարբերանշաններ, ինչպես նաև միջազգային տարբերանշաններ և կրում են ~~մարտական ու ծառայողական~~ զենք:

Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումներում փրկարարական ծառայությունն ու քաղաքացիական անձնակազմի գործունեությունը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների փրկարարական և քաղաքացիական ծառայողներին տրվում է անձն ու կարգավիճակը հաստատող վկայական:

Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների տարբերանշանների, ծառայողների անձն ու կարգավիճակը հաստատող վկայականների ձևերը հաստատում է լիազորված մարմնի ղեկավարը:

***(15-րդ հոդվածը փոփ. 26.05.05 ՀՕ-124-Ն, 07.04.16 ՀՕ-39-Ն)***

***(հոդվածը 16.12.22 ՀՕ-482-Ն օրենքի փոփոխությամբ ուժի մեջ կմտնի Փրկարար ծառայության կանոնադրությունն ուժի մեջ մտնելու օրվանից)***

ՏԵՂԵԿԱՆՔ
ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ԻՆԿԱՍԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ»

**Հոդված 4. Ինկասացիոն գործունեությունը**

1. Հայաստանի Հանրապետության տարածքում ինկասացիոն գործունեություն է համարվում որպես ձեռնարկատիրական գործունեություն իրականացվող կանխիկ դրամի ընդունումը, փոխադրումը (տեղափոխումը) և հանձնումը (ինկասացիա):

Ինկասացիոն կազմակերպությունները կարող են իրականացնել նաև կանխիկ դրամի ժամանակավոր պահպանություն:

2. Ինկասացիոն գործունեություն կարող են իրականացնել միայն «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ինկասացիոն ծառայությունների մատուցման գործունեության լիցենզիա ունեցող առևտրային իրավաբանական անձինք, որոնց կանոնադրական կապիտալը կազմում է առնվազն 20 միլիոն դրամ:

3. Ինկասացիոն կազմակերպությունները և նրանց մասնագիտացված աշխատակիցներն իրենց գործառնական պարտականությունները կատարելու համար իրավունք ունեն օգտագործելու քաղաքացիական ~~և ծառայողական~~ զենք, իսկ առանձին դեպքերում՝ ոստիկանության կողմից ժամանակավոր օգտագործման համար հատկացված մարտական զենքի առանձին տեսակներ: Ինկասացիոն գործունեություն իրականացնող կազմակերպությունների աշխատակիցների կողմից օգտագործվող քաղաքացիական ~~և ծառայողական~~ զենքի տեսակը, ձևը, մոդելը և քանակը սահմանում է կառավարությունը:

4. Ինկասացիոն կազմակերպությունը պետք է ունենա առնվազն մեկ միավոր զրահապատ ավտոտրանսպորտային միջոց: Այն պետք է ունենա գունային տարբերակում, սարքավորված լինի ռադիոկապով, ինչպես նաև հատուկ ձայնային և լուսանապիտակ առկայծող փարոսիկների տեսքով լուսային ազդանշաններով:

5. Ինկասացիոն կազմակերպությունն իրավունք չունի իրականացնելու այլ գործունեություն, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:

6. Ինկասացիոն կազմակերպություններին, նրանց կողմից օգտագործվող ավտոտրանսպորտային, տեխնիկական անվտանգության և այլ միջոցներին ներկայացվող պարտադիր պահանջները, դրանց իրականացման կարգն ու պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

***(4-րդ հոդվածը խմբ., փոփ., լրաց. 31.05.06 ՀՕ-101-Ն)***

ՏԵՂԵԿԱՆՔ
ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»

**Հոդված 12. Բնապահպանական պետական տեսուչի իրավասությունները**

1. Բնապահպանական պետական տեսուչը իրավունք ունի՝
ա) բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ ստուգվող սուբյեկտներում իրականացնելու ստուգումներ.
ա. բնապահպանական օրենսդրության պահանջների խախտման կանխարգելման, բացահայտման և նախազգուշացման նպատակով իրականացնելու դիտարկումներ.
բ) օրենքներով և իրավական այլ ակտերով սահմանված իրավասությունների սահմաններում ստուգվող կամ դիտարկվող սուբյեկտներից պահանջելու փաստաթղթեր, տվյալներ, բացատրություններ, տեղեկանքներ և իր պարտականությունների կատարման համար անհրաժեշտ այլ փաստաթղթեր, ինչպես նաև վերցնելու փորձանմուշներ և կատարելու կապարակնքում.
գ) օրենքներով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով վերցնելու փաստաթղթեր, իրեր, փորձանմուշներ և կատարելու չափագրումներ, որոնք անմիջականորեն առնչվում են ստուգումների կամ դիտարկումների նպատակներին.
դ) օրենքներով և իրավական այլ ակտերով սահմանված իրավասությունների շրջանակներում պատժամիջոցներ կիրառելու վերաբերյալ ընդունելու որոշումներ.
ե) բնապահպանական օրենսդրության խախտման դեպքում արձանագրելու խախտումները, օրենսդրությամբ սահմանված կարգով ստուգվող կամ դիտարկվող սուբյեկտներին հանձնարարականներ տալու, կասեցնելու, դադարեցնելու, արգելելու նրանց գործողությունները.
զ) բնապահպանական օրենսդրության կիրարկումն ապահովելու նպատակով սույն օրենքով սահմանված կարգով և դեպքերում կանգնեցնելու տրանսպորտային միջոցները.
է) օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով և դեպքերում առգրավելու ապօրինի ձեռք բերված բնական ռեսուրսները և բնապահպանական օրենսդրության պահանջների խախտմամբ ձեռք բերված որսը, որսագործիքները, որսի գործիք համարվող այլ միջոցներ.
ը) օրենքով նախատեսված դեպքերում ստուգվող սուբյեկտի ներկայացուցչի մասնակցությամբ անարգել մուտք գործելու ստուգվող կամ դիտարկվող սուբյեկտի գրասենյակային, արտադրական, պահեստային, լաբորատոր և այլ ստորաբաժանումներ ու տարածքներ.
թ) ստուգումների կամ դիտարկումների ընթացքում օրենսդրությամբ սահմանված կարգով ներգրավելու մասնագետների և փորձագետների.
ժ) օրենքով սահմանված կարգով կիրառելու հարկադրանքի միջոցներ.
ժա) օրենքով սահմանված կարգով պահելու և օգտագործելու ~~ծառայողական~~ քաղաքացիական զենք, ռազմամթերք, ձեռնաշղթա և կրելու համազգեստ.
ժբ) վարչական իրավախախտում արձանագրելու դեպքում իրականացնելու գործերի վարույթ և գործերի քննությամբ կայացնելու համապատասխան որոշումներ.
ժգ) բնապահպանության ոլորտում ստուգվող սուբյեկտներին տրված լիցենզիաների,

պայմանագրերի, թույլտվությունների, արտոնագրերի ուժը կորցրած ճանաչելու կամ դրանց գործողությունը կասեցնելու վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով լիազորված մարմիններին ներկայացնելու միջնորդագրեր.

ժգ.1) սույն օրենքի 29.1-ին հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերում բնապահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի տարածքային ստորաբաժանման ղեկավարի որոշման հիման վրա անհապաղ կասեցնելու ստուգվող սուբյեկտի գործունեությունը.

ժդ) օրենքով սահմանված կարգով իրականացված ստուգումների արդյունքներով բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնին վերապահված իրավասությունների շրջանակներում բնապահպանական հարկով հարկման բազայի և բնօգտագործման վճարի բազայի փաստացի ծավալների չափագրման, հարկման բազայի և վճարի բազայի փաստացի ծավալների ու դրանց համար սահմանված չափաքանակների գերազանցման վերաբերյալ կազմելու ակտեր.

ժե) օրենքով սահմանված դեպքերում և կարգով հայց ներկայացնելու դատարան.

ժզ) բնապահպանական օրենսդրության խախտման համար քրեական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով հաղորդում ներկայացնելու իրավապահ մարմիններին:

2. Պետական մարմինների և այլ պաշտոնատար անձանց կողմից բնապահպանական պետական տեսուչի լիազորությունների իրականացումն արգելվում է, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

3. Բնապահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը կարող է ունենալ Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված այլ իրավասություններ:

**(12-րդ հոդվածը փոփ. 21.12.17 ՀՕ-270-Ն, 21.03.18 ՀՕ-183-Ն, լրաց. 06.10.20 ՀՕ-452-Ն, խմբ. 05.10.22 ՀՕ-375-Ն)**

**Հոդված 17. Բնապահպանական պետական տեսուչի զենքը**

Օրենքով սահմանված կարգով բնապահպանական պետական տեսուչին հատկացվող ~~ծառայողական~~ քաղաքացիական զենքի ու ռազմամթերքի տեսակը, ձևը, մոդելը և քանակը, ինչպես նաև զենք կրելու իրավունք ունեցող պաշտոնների անվանացանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

***(17-րդ հոդվածը փոփ. 05.10.22 ՀՕ-375-Ն)***

**ՏԵՂԵԿԱՆՔ**
**ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»**

**Հոդված 50. Քրեակատարողական հիմնարկներում ~~մարտական կամ ծառայողական~~ զենք գործադրելը**

1. Քրեակատարողական հիմնարկներում ~~մարտական կամ ծառայողական~~ զենք գործադրվում է հետևյալ դեպքերում.

1) քրեակատարողական ծառայողների, քրեակատարողական հիմնարկում գտնվող անձանց կյանքին կամ առողջությանը սպառնացող հարձակումները հետ մղելիս, ինչպես նաև զենքին տիրելու փորձերը խափանելիս.

2) քրեակատարողական հիմնարկների շենքերի, շինությունների, տրանսպորտային միջոցների վրա խմբակային կամ զինված հարձակումը խափանելիս.

3) զինված դիմադրություն ցույց տվող, ինչպես նաև քրեակատարողական ծառայողի կամ քրեակատարողական հիմնարկում գտնվող այլ անձի կյանքի և առողջության դեմ ուղղված ծանր հանցանք կատարող անձանց դեպքի վայրում ձերբակալելիս.

4) պատանդներին, զավթված շենքերը, շինությունները, կառույցները և տրանսպորտային միջոցներն ազատելիս.

5) քրեակատարողական ծառայողի՝ զենքը հանձնելու պահանջը կատարելուց հրաժարվող անձին ձերբակալելիս.

6) քրեակատարողական հիմնարկում պահվող անձին բռնի ուժով ազատելու փորձը կանխելիս.

7) զինված կամ տրանսպորտային միջոցի գործադրմամբ հարձակումը հետ մղելիս.

8) քրեակատարողական հիմնարկում պահվող անձանց կողմից քրեակատարողական ծառայողին զենքով կամ այնպիսի առարկաներով մոտենալիս, որոնցով հնարավոր է մարդու առողջությանը վնաս հասցնել՝ տվյալ ծառայողի նշած տարածության սահմանը խախտելու դեպքում.

9) քրեակատարողական հիմնարկներից կամ փոխադրման ընթացքում քրեակատարողական հիմնարկում պահվող անձանց փախուստի փորձը կանխելիս.

10) հրազեն գործադրելու մտադրության մասին նախազգուշացնելիս, տագնապի ազդանշան տալիս և օգնություն կանչելիս:

2. Արգելվում է զենք գործադրել հղիության ակնհայտ նշաններ ունեցող կանանց, ակնհայտ հաշմանդամների կամ անչափահասների նկատմամբ, բացառությամբ նրանց կողմից զինված դիմադրություն ցույց տալու և քրեակատարողական ծառայողի կյանքին կամ առողջությանը սպառնացող գործողություններ կատարելու դեպքերի:

3. Զենք գործադրելիս քրեակատարողական ծառայողները պարտավոր են ձեռնարկել բոլոր միջոցները՝ այլ անձանց անվտանգությունն ապահովելու և տուժածներին բուժօգնություն ցուցաբերելու ուղղությամբ:

4. Քրեակատարողական ծառայողներն իրավունք ունեն բացելու և մարտական վիճակի բերելու զենքը, եթե գտնում են, որ ստեղծված իրավիճակում կարող են ծագել զենք գործադրելու՝ սույն հոդվածով նախատեսված հիմքեր:

# ՏԵՂԵԿԱՆՔ
# ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ»

**Հոդված 8. Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասությունները**

Հայաստանի Հանրապետությունում բնության հատուկ պահպանվող տարածքների ստեղծման, առանձնացման, կառավարման, պահպանության և օգտագործման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասություններն են՝

ա) բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման պետական քաղաքականության ձևավորումը, ռազմավարության հաստատումը.

բ) բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագրերի հաստատումը.

գ) միջազգային ու հանրապետական նշանակության բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման պլանների հաստատումը և վերանայումը.

դ) բնության հատուկ պահպանվող տարածքների ստեղծման կարգի սահմանումը.

ե) բնության հատուկ պահպանվող տարածքների ստեղծման, կատեգորիաների և գոտիավորման սահմանման ու դրանց փոփոխության, ինչպես նաև չափերի և սահմանների վերաբերյալ որոշումների ընդունումը.

զ) բնության հատուկ պահպանվող տարածքների կանոնադրությունների հաստատումը.

է) բնության հուշարձանների ցանկի հաստատումը.

ը) բնության հատուկ պահպանվող տարածքների պետական կադաստրի վարման կարգի սահմանումը.

թ) բնության հատուկ պահպանվող տարածքների մոնիթորինգի կազմակերպման և իրականացման կարգի սահմանումը.

ժ) բնության հատուկ պահպանվող տարածքների օգտագործման կարգի սահմանումը.

ժա) բնության հատուկ պահպանվող տարածքների համապատասխան գոտիների հավատարմագրային կառավարման համար մրցույթ անցկացնելու կարգի հաստատումը.

ժբ) բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության, դրանցում գիտահետազոտական ուսումնասիրությունների և այլ աշխատանքների կատարման համար պետական բյուջեի միջոցների հաշվին կատարվող ծախսերի հաստատումը.

ժգ) բնության հատուկ պահպանվող տարածքների հավատարմագրային կառավարման պայմանագրի օրինակելի ձևի հաստատումը.

ժդ) բնության հատուկ պահպանվող տարածքի պահպանությունն իրականացնող կազմակերպության պահպանության ծառայության աշխատողներին հատկացվող ~~ծառայողական զենքի ու զինամթերքի~~ քաղաքացիական զենքի ու ռազմամթերքի

տեսակի, ձևի, մոդելի և քանակի, ինչպես նաև զենք կրելու իրավունք ունեցող պաշտոնների անվանացանկի սահմանումը.

ժե) Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և սույն օրենքով սահմանված այլ լիազորություններ:

**Հոդված 23. Բնության հատուկ պահպանվող տարածքի պահպանությունն իրականացնող իրավաբանական անձի պահպանության ծառայության աշխատողների իրավունքները և պարտականությունները**

1. Բնության հատուկ պահպանվող տարածքի պահպանությունն իրականացնող իրավաբանական անձի պահպանության ծառայության աշխատողների իրավունքներն ու պարտականություններն են՝

ա) ապահովել բնության հատուկ պահպանվող տարածքի կանոնադրությամբ սահմանված բնապահպանական նորմերի և կանոնների պահանջների կատարումը.

բ) կանխել բնության հատուկ պահպանվող տարածքի սահմանված ռեժիմը խախտող ցանկացած գործողություն.

գ) ծառայողական պարտականությունները կատարելիս ունենալ անձը հաստատող համապատասխան փաստաթուղթ.

դ) Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պահել, կրել, օգտագործել ~~ծառայողական զենք, զինամթերք~~, քաղաքացիական զենք, ռազմամթերք ռետինե ճողեր, ինքնապաշտպանության միջոցներ (արցունքաբեր գազ, ջրահաթիկնոց) և կրել համազգեստ.

ե) ստուգել իրավախախտողի անձը հաստատող փաստաթուղթը.

զ) օրենքներով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով և դեպքերում իրականացնել բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության հետ կապված այլ գործողություններ:

2. Սույն հոդվածով սահմանված իրավունքներն ու պարտականությունները տարածվում են նաև համայնքային սեփականության տարածքներում բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանությունն իրականացնող անձանց վրա:

## ՏԵՂԵԿԱՆՔ
## ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ԱՎԻԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ»

**Հոդված 52. *Քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգությունը***

1. Քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգությունը համալիր միջոցառումների, մարդկային և նյութական ռեսուրսների համակարգ է, որը նախատեսված է ապահովելու քաղաքացիական ավիացիայի պաշտպանությունն անօրինական միջամտության ակտերից:

2. Քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգությունն ապահովվում է՝

1) օդանավով զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ, ռադիոակտիվ, թունավոր, դյուրավառ և այլ վտանգավոր նյութերի ու առարկաների ապօրինի փոխադրումը բացառելու, իսկ դրանց օրինական փոխադրման ընթացքում՝ նախազգուշական և կանխարգելիչ միջոցառումների կիրառման,

2) ուղևորների, նրանց ձեռքի իրերի, ուղեբեռի, բեռների, փոստի, օդանավի անձնակազմի անդամների, նրանց ձեռքի իրերի, օդանավերի, օդանավ տարվող սննդի, օդանավային պիտույքների և պարագաների նախաթռիչքային զննման,

3) օդանավակայանների հատուկ վերահսկելի գոտիներ մուտքի իրավունք ունեցող անձանց և այցելուների, ինչպես նաև հատուկ վերահսկելի գոտիներ մուտք գործող տրանսպորտային միջոցների զննման,

4) անհրաժեշտության դեպքում, ուղևորների անձնական զննման, ինչպես նաև օդանավում՝ օդանավի հրամանատարի պահանջով ուղևորների զննման,

5) օդանավակայանի վերահսկելի և հատուկ վերահսկելի գոտիներում անցագրային և ներօբյեկտային վերահսկողության սահմանման, օդանավակայանների, օդանավերի և կարևոր օբյեկտների պահպանության կազմակերպման ու իրականացման,

6) ավիացիոն անվտանգության մասով տեղեկատվության պաշտպանության,

7) ուղևորների, ուղեբեռների, բեռների հաշվառման և ձևակերպման համար կիրառվող ծրագրերի, օդանավակայանում օդանավերի շարժի, օդանավերի թռիչքների սպասարկման և օդային երթևեկության կառավարման համար օգտագործվող առանձնացված ծրագրային և կապի համակարգերի, աերոնավիգացիոն տեղեկատվական ցանցերի, աերոնավիգացիոն տեղեկատվական համակարգերով մշակվող ու փոխանցվող տեղեկատվությունների, կարգավարական կապերի ձայնային տեղեկատվության գրանցումներ իրականացնող ծրագրային համակարգերի, ինչպես նաև համակարգչային տեղային ցանցերը կողմնակի անօրինական մուտքերից ու կիբեռվտանգներից պաշտպանվածության,

8) քաղաքացիական ավիացիայի գործունեության դեմ ուղղված անօրինական միջամտության ակտերին հակազդելու, այդ թվում՝ իրավապահ մարմինների մասնակցությամբ իրականացվող հակազդման միջոցառումների իրականացման միջոցով:

3. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի պահանջներից բխող՝ քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգությունն ապահովող համապատասխան իրավական ակտերն ընդունում է Կառավարությունը:

4. Միջազգային և ներքին քաղաքացիական ավիացիայի անխափան, արդյունավետ և անվտանգ գործունեության ապահովման նպատակով Կառավարությունը հաստատում է քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության ազգային ծրագիրը, քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության որակի հսկողության ազգային ծրագիրը, քաղաքացիական ավիացիայի համակարգում առաջացած ճգնաժամային իրավիճակների կառավարման ազգային պլանը, ստեղծում է ավիացիոն անվտանգության միջգերատեսչական հանձնաժողով, որը քննարկում է ավիացիոն անվտանգության բնագավառում իրականացվող պետական քաղաքականության հիմնախնդիրները և իրականացնում ավիացիոն անվտանգության մասով քաղաքացիական ավիացիայի գործունեության ուսումնասիրություններ ու վերլուծություններ:

5. Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության ապահովման համար պատասխանատու մարմին է հանդիսանում կոմիտեն, որը՝

1) պատասխանատու է քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության ազգային ծրագրի, քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության որակի հսկողության ազգային ծրագրի, քաղաքացիական ավիացիայի համակարգում առաջացած ճգնաժամային իրավիճակների կառավարման ազգային պլանի, քաղաքացիական ավիացիայի համակարգի ավիացիոն անվտանգության ոլորտի աշխատողների ուսուցման ազգային ծրագրի, ինչպես նաև սույն կետում նշված ծրագրերից բխող կարգերի, կանոնակարգերի, հրահանգների, ուղեցույցների և պլանների մշակման, համապատասխան նախարարի և Կառավարության քննարկմանը և հաստատմանը ներկայացման, դրանց ներդրման, կիրառման և պահպանման համար.

2) ապահովում է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, օդանավակայանների, օդանավ շահագործողների և այլ անձանց հետ քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգությունը կանոնակարգող իրավական ակտերով նախատեսված խնդիրների համատեղ իրականացումը.

3) ապահովում է քաղաքացիական ավիացիայի բնագավառում անօրինական միջամտության ակտերով պայմանավորված արտակարգ իրավիճակների կառավարման օպերատիվ շտաբի գործունեությունը և մասնակցում օպերատիվ շտաբի աշխատանքներին.

4) քաղաքացիական ավիացիայի համակարգում ներդրված և կիրառվող ավիացիոն անվտանգության միջոցառումների արդյունավետության և քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության ազգային ծրագրի պահանջներին դրանց համապատասխանության ստուգման նպատակով քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության որակի հսկողության ազգային ծրագրով սահմանված կարգով իրականացնում է ավիացիոն անվտանգության աշխատանքների աուդիտ, տեսչական ստուգումներ, թեստավորումներ և դիտարկումներ.

5) իրականացնում է ավիացիոն անվտանգության որակի հսկողության միջոցառումներ՝ ավիացիոն անվտանգության աշխատանքների որակի հսկողության տեսուչների միջոցով, որոնք իրավասու են քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության որակի հսկողության ազգային ծրագրով սահմանված կարգով՝

ա. ստուգելու պետության ցանկացած օդանավակայանի ցանկացած մաս,

բ. ստուգելու օդանավակայանից դուրս գտնվող ցանկացած հողակտոր կամ ցանկացած տարածք, որն օգտագործում են օդանավակայանում կամ օդանավակայանի վերահսկելի և հատուկ վերահսկելի գոտիներում գործող կազմակերպությունները,

գ. ստուգելու Հայաստանի Հանրապետությունում գրանցված կամ շահագործվող ցանկացած օդանավ ավիացիոն անվտանգության որակի հսկողության միջոցառումների գնահատման նպատակով,

դ. ավիացիոն անվտանգության ապահովման մակարդակի գնահատման և ավիացիոն անվտանգության ընթացակարգերի պահպանման նպատակով հարցազրույց անցկացնելու յուրաքանչյուր անձի հետ,

ե. պահանջելու անհապաղ շտկել ցանկացած թերություն և (կամ) ձեռնարկել իրավակիրառ բնույթի գործողություններ,

զ. ստանալու ավիացիոն անվտանգության վերաբերյալ համապատասխան փաստաթղթերի և հաշվարկված տվյալների թույլտվություն.

6) քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության ազգային ծրագրի արդյունավետությունն ապահովելու նպատակով սահմանում է ավիացիոն անվտանգության դասընթացներ իրականացնող ուսումնական հաստատությունների և ավիացիոն անվտանգության ծառայությունների անձնակազմերի ուսումնական, վերապատրաստման ծրագրերին և այդ ծրագրերով դասավանդող մասնագետներին ներկայացվող պահանջներն ու չափանիշները.

7) համագործակցում է օտարերկրյա պետությունների համապատասխան իրավասու մարմինների հետ, ըստ անհրաժեշտության՝ քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության ազգային ծրագրերի, ավիացիոն անվտանգության ծառայությունների անձնակազմերի ուսումնական և վերապատրաստման ծրագրերի մշակման, օտարերկրյա պետությունների օդանավակայաններում կիրառվող ավիացիոն անվտանգության միջոցառումների փոխադարձ ճանաչման և ավիացիոն անվտանգության վերաբերյալ տեղեկատվության փոխանակման նպատակով.

8) քննարկում և հաստատում է Հայաստանի Հանրապետության օդանավակայանների, Հայաստանի Հանրապետությունում գրանցված օդանավ շահագործողների և ավիացիոն գործունեություն իրականացնող՝ Հայաստանի Հանրապետության այն կազմակերպությունների ավիացիոն անվտանգության ծրագրերը, որոնք, համաձայն Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի, պետք է մշակեն և ներդնեն այդ ծրագրերը: Օդանավակայանների ավիացիոն անվտանգության ծրագրերը հանդիսանում են օդանավակայանի աերոդրոմի և (կամ) ուղղաթիռադաշտի սերտիֆիկատի կամ թռիչք-վայրէջքի հարթակի շահագործման թույլտվության տրամադրման նախապայման.

9) քննարկում և համապատասխանության եզրակացություն է տալիս դեպի Հայաստանի Հանրապետության օդանավակայաններ և Հայաստանի Հանրապետության օդանավակայաններից թռիչքներ իրականացնող օտարերկրյա օդանավ շահագործողների ավիացիոն անվտանգության ծրագրերի վերաբերյալ.

10) ավիացիոն անվտանգության չափանիշների ապահովման նպատակով պետական կառավարման այլ լիազորված մարմինների հետ քննարկում ու հաստատում է Հայաստանի Հանրապետության օդանավակայանների և ավիացիոն գործունեություն իրականացնող կազմակերպությունների տարածքներում նոր շենքերի ու շինությունների կառուցման, հին շենքերի ու շինությունների վերանորոգման նախագծերը.

11) սահմանում է ավիացիոն անվտանգության ծառայությունների անձնակազմերի անդամների ատեստավորման կարգը.

12) սահմանում է ավիացիոն անվտանգության ծառայությունների զննման օպերատորների, ավիացիոն անվտանգության հրահանգիչների և որակի հսկողության տեսուչների սերտիֆիկացման կարգերը.

13) օդանավի անձնակազմի անդամի վկայական է հատկացնում կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումներում աշխատող օդաչուներին, ինժեներներին, շտուրմաններին և Հայաստանի Հանրապետությունում գրանցված օդանավ շահագործողների օդանավերի անձնակազմերի անդամներին, իսկ քաղաքացիական ավիացիայի թռիչքային անվտանգության տեսուչներին՝ քաղաքացիական ավիացիայի թռիչքային անվտանգության տեսուչի վկայական:

6. Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում ազգային անվտանգության, ոստիկանության, մաքսային, արտակարգ իրավիճակների, արտաքին գործերի և պաշտպանության բնագավառներում պետական լիազորված մարմինները գործում են Հայաստանի Հանրապետության օրենքներով իրենց վերապահված լիազորությունների շրջանակում, իսկ մաքսային մարմինները՝ նաև մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերով իրենց վերապահված լիազորությունների շրջանակում:

7. Օդանավակայաններ շահագործող կազմակերպությունները՝

1) պատասխանատու են միջազգային և ներքին օդային փոխադրումներն սպասարկող յուրաքանչյուր օդանավակայանի ավիացիոն անվտանգության ծրագրերի մշակման, կոմիտեի հաստատմանը ներկայացման և դրանց ներդրման համար.

2) պատասխանատու են օդանավակայաններում կիրառվող ավիացիոն անվտանգության միջոցառումների որակի հսկողության, օդանավակայանների ավիացիոն անվտանգության ծառայությունների անձնակազմերի անդամների ուսուցման և վերապատրաստման ծրագրերի մշակման, կոմիտեի հաստատմանը ներկայացման և դրանց ներդրման համար.

3) պատասխանատու են օդանավակայանների բնականոն գործունեության դեմ ուղղված անօրինական միջամտության գործողությունների կանխմանն ու հակազդմանն ուղղված ճգնաժամային իրավիճակների կառավարման պլանների մշակման, դրանք կոմիտեի և սույն հոդվածի 6-րդ մասում նշված պետական լիազորված մարմինների հետ համաձայնեցման, կոմիտեի հաստատմանը ներկայացման և դրանց ներդրման համար.

4) համաձայնեցնելով լիազորված մարմնի հետ՝ սահմանում են օդանավակայանների վերահսկելի գոտիները, հատուկ վերահսկելի գոտիները և ընդհանուր օգտագործման տարածքները, դրանց տեղադրությունը, սահմանները և այդ գոտիներում ու տարածքներում իրականացվող ավիացիոն անվտանգության

միջոցառումները, որոնք ներառվում են օդանավակայանների ավիացիոն անվտանգության ծրագրերում.

5) ստեղծում են ավիացիոն անվտանգության ծառայություններ, որոնք հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող ծառայություններ են և ապահովում են ավիացիոն անվտանգությունն օդանավակայաններում:

8. Օդանավակայանների ավիացիոն անվտանգության ծառայություններն իրականացնում են՝

1) օդանավակայանների տարածքի, տարածքում գտնվող օբյեկտների, շենքերի, շինությունների և օդանավերի պահպանություն պահակակետային ծառայության և տեսահսկման աշխատանքների միջոցով.

2) օդանավակայանների վերահսկելի և հատուկ վերահսկելի գոտիների անցագրերի տրամադրում և այդ գոտիներում անցագրային ու ներօբյեկտային վերահսկողություն.

3) ուղևորների, նրանց ձեռքի իրերի, ուղեբեռի, բեռների, փոստի, օդանավի անձնակազմի անդամների, նրանց ձեռքի իրերի, օդանավերի, օդանավ տարվող սննդի, օդանավային պիտույքների և պարագաների, օդանավակայանների հատուկ վերահսկելի գոտիներ մուտքի իրավունք ունեցող անձանց և այցելուների, հատուկ վերահսկելի գոտիներ մուտք գործող տրանսպորտային միջոցների զննում.

4) օդանավակայաններում առաջացած ճգնաժամային իրավիճակների դեպքում մասնակցում են դրանց կանխման ու հակազդման միջոցառումներին:

9. Օդանավակայանների ավիացիոն անվտանգության ծառայությունների անձնակազմի անդամները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունեն՝

1) կրելու և կիրառելու ~~ծառայողական~~ քաղաքացիական զենք և հատուկ միջոցներ՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով.

2) կրելու սահմանված ձևի համազգեստ, որի նկարագիրը և կրելու կարգը սահմանում է Կառավարությունը.

3) օդանավակայաններում սահմանված ավիացիոն անվտանգության կանոնների խախտման դեպքում խախտում կատարած անձանց հանձնելու իրավապահ մարմիններին.

4) արգելելու օդանավով փոխադրման համար արգելված առարկաների և նյութերի փոխադրումը ուղեբեռներում և բեռում.

5) արգելելու ուղևորների ձեռքի իրերում օդանավի ուղևորասրահում փոխադրման համար արգելված առարկաների և նյութերի փոխադրումը.

6) ուղևորների, օդանավի անձնակազմի և վերգետնյա ծառայությունների աշխատողների կյանքին վտանգ սպառնալու դեպքում կիրառելու կանխարգելիչ միջոցառումներ:

10. Հայաստանի Հանրապետությունում գրանցված օդանավ շահագործողները՝

1) մշակում են իրենց ավիացիոն անվտանգության ծրագրերը և ներկայացնում կոմիտեի հաստատմանը.

2) մշակում են օդանավ շահագործողի ավիացիոն անվտանգության որակի հսկողության և ավիացիոն անվտանգության մասով օդանավ շահագործողի աշխատողների ուսուցման և վերապատրաստման ծրագրերը և ներկայացնում կոմիտեի հաստատմանը.

3) մշակում են գետնի վրա կամ թռիչքի ընթացքում գտնվող օդանավի դեմ ուղղված անօրինական միջամտության գործողությունների կանխմանն ու հակազդմանն ուղղված պլանները, դրանք կոմիտեի միջոցով համաձայնեցնում են սույն հոդվածի 6-րդ մասում նշված պետական լիազորված մարմինների հետ և ներկայացնում կոմիտեի հաստատմանը.

4) ստեղծում են ավիացիոն անվտանգության ստորաբաժանումներ, որոնք իրականացնում են օդանավ շահագործողի ավիացիոն անվտանգության ծրագրով սահմանված ավիացիոն անվտանգության ապահովման աշխատանքները և դրանց որակի հսկողության միջոցառումները:

11. Հայաստանի Հանրապետության տարածքում աերոնավիգացիոն սպասարկում իրականացնող կազմակերպությունները՝

1) մշակում են իրենց ավիացիոն անվտանգության ծրագրերը և ներկայացնում կոմիտեի հաստատմանը.

2) մշակում են իրենց ավիացիոն անվտանգության որակի հսկողության և ավիացիոն անվտանգության մասով աշխատողների ուսուցման և վերապատրաստման ծրագրերը և ներկայացնում կոմիտեի հաստատմանը.

3) մշակում են օդային երթևեկության սպասարկման ընթացքում քաղաքացիական ավիացիայի բնականոն գործունեության դեմ ուղղված անօրինական միջամտության գործողությունների կանխմանն ու հակազդմանն ուղղված ճգնաժամային իրավիճակների կառավարման պլանները և ներկայացնում կոմիտեի հաստատմանը.

4) ստեղծում են ավիացիոն անվտանգության ստորաբաժանումներ, որոնք իրականացնում են օդային երթևեկության սպասարկում իրականացնող կազմակերպության ավիացիոն անվտանգության ծրագրով սահմանված ավիացիոն անվտանգության ապահովման աշխատանքները.

5) Հայաստանի Հանրապետության տարածքում աերոնավիգացիոն սպասարկում իրականացնող կազմակերպությունների ավիացիոն անվտանգության ծառայությունների աշխատողներին իրենց ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում թույլատրվում է՝

ա. կրել սահմանված ձևի համազգեստ,

բ. իրականացնել օդային երթևեկության կառավարման կենտրոն մուտք գործող անձանց զննում,

գ. ապահովել օդանավակայանների տարածքում կամ օդանավակայանների տարածքից դուրս գտնվող և քաղաքացիական ավիացիայի անխափան գործունեության ապահովման համար կարևոր նշանակություն ունեցող աերոնավիգացիոն օբյեկտների, շենքերի, շինությունների և սարքավորումների պահպանությունը,

դ. օդային երթևեկության սպասարկման համար շահագործվող շենքերի, շինությունների, տարածքների և սարքավորումների նկատմամբ սահմանված ավիացիոն անվտանգության կանոնների խախտման դեպքում խախտում կատարած անձանց հանձնել իրավապահ մարմիններին:

12. Ավիացիոն անվտանգության ապահովման նպատակով օդանավ շահագործողներն ուղևորների վերաբերյալ նախնական տեղեկատվության տրամադրման համակարգի բազա մուտքագրման համար, Հայաստանի Հանրապետության օրենսդրության և միջազգային պայմանագրերով սահմանված չափորոշիչներին համապատասխան, ապահովում են ուղևորների վերաբերյալ

նախնական տվյալների փոխանցումը լիազորված պետական կառավարման մարմին: Ուղևորների վերաբերյալ նախնական տեղեկատվության տրամադրման կարգը սահմանում է Կառավարությունը:

13. Սույն օրենքով սահմանված կարգով իրականացվող ավիացիոն անվտանգության նախաթռիչքային հսկողությունից՝ զննումից ուղևորի հրաժարվելու դեպքում ուղևորը չի թույլատրվում թռիչքի:

14. Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում ավիացիոն անվտանգության ապահովման նպատակով ներդրվում են ավիացիոն անվտանգության ապահովման համար նախատեսված զննման տեխնիկական սարքավորումներ, մուտքերի հսկողության ծրագրային համակարգեր, տեսահսկման և պահպանության ազդանշանային համակարգեր, որոնց տեխնիկական բնութագրերը և չափանիշները պետք է համապատասխանեն ԻԿԱՕ-ի սահմանած չափանիշներին և սերտիֆիկացվեն կոմիտեի կողմից: Օդանավակայաններում ավիացիոն անվտանգության ապահովման նպատակով ներդրվող սարքավորումների ընտրությունը կատարում են օդանավակայաններ շահագործող կազմակերպությունները՝ համաձայնեցնելով կոմիտեի հետ:

15. Օդանավակայանների ուղևորային համալիրի մուտքերում կարող են տեղադրվել անձանց զննման համար նախատեսված տեխնիկական սարքավորումներ, և կարող է իրականացվել օդանավակայանի ուղևորային համալիրների հասարակական գոտիներ մուտք գործող անձանց զննում՝ ելնելով ազգային անվտանգության բնագավառում պետական լիազորված մարմնի իրականացրած՝ քաղաքացիական ավիացիայի դեմ ուղղված ռիսկերի գնահատման արդյունքներից: Տեխնիկական սարքավորումների տեղադրման և զննման գործընթացը սահմանվում է քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության ազգային ծրագրով:

16. Ավիացիոն անվտանգության ապահովման համար նախատեսված սարքավորման տեխնիկական սպասարկումն իրականացնում է արտադրողի կողմից սերտիֆիկացված և կոմիտեի կողմից ճանաչված կազմակերպությունը՝ արտադրողի սահմանած տեխնիկական սպասարկման և վերանորոգման չափանիշների համաձայն:

17. Հայաստանի Հանրապետության օդանավակայանների, օդանավ շահագործողների և օդային երթևեկության սպասարկում իրականացնող կազմակերպությունների ավիացիոն անվտանգության ծառայությունների աշխատակիցների ընտրության նպատակով կոմիտեն սահմանում է մասնագիտական, աշխատանքային փորձի և առողջական վիճակի վերաբերյալ պահանջներ:

18. Ավիացիոն անվտանգության ծառայությունների անձնակազմերի անդամների մասնագիտական պատրաստվածությունը հավաստվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզիա ունեցող մասնագիտացված ավիացիոն ուսումնական հաստատության, ԻԿԱՕ և ԵԿԱԿ ուսումնական կենտրոնների կամ օտարերկրյա պետությունների մասնագիտացված ավիացիոն ուսումնական հաստատության տված և կոմիտեի կողմից ճանաչված վկայականներով, որոնց ճանաչման կարգը սահմանում է կոմիտեն:

19. Հայաստանի Հանրապետության օդանավակայաններ շահագործող կազմակերպությունների ավիացիոն անվտանգության ծառայությունների զննման

գործառույթներ իրականացնող աշխատակիցները, ավիացիոն անվտանգության մասով հրահանգիչները և որակի հսկողության տեսուչներն իրենց ծառայողական պարտականությունները կարող են իրականացնել միայն կոմիտեի տված սերտիֆիկատների հիման վրա, որոնց տրամադրման կարգը սահմանում է կոմիտեն:

Կոմիտեն սահմանում է մասնագիտական պատրաստվածություն անցած և դրա հիման վրա գործող վկայականներ կրող ավիացիոն անվտանգության ծառայությունների անձնակազմերի անդամների մասնագիտական պատրաստվածության, դրա շարունակականության ապահովման, ատեստավորման, ինչպես նաև վերապատրաստման ծրագրեր և կանոնակարգեր:

20. Սույն հոդվածով նախատեսված գործառույթների իրականացման ապահովման նպատակով կոմիտեն կարող է սահմանել նաև այլ կանոնակարգեր:

***(52-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-294-Ն, խմբ. 09.06.22 ՀՕ-272-Ն)***

## ՏԵՂԵԿԱՆՔ
## ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ»

**Հոդված 25.** **Երկաթուղային տրանսպորտի շահագործման և երթևեկության անվտանգության ոլորտի հիմնական դրույթները**

1. Ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերը և ոչ ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերը, երկաթուղային կայարանները, ուղևորների համար նախատեսված կառամատույցները, ինչպես նաև գնացքների երթևեկության և մանևրային աշխատանքների հետ կապված երկաթուղային տրանսպորտի այլ օբյեկտները հանդիսանում են առավել վտանգավոր գոտիներ և անհրաժեշտության դեպքում պետք է պարսպապատվեն ենթակառուցվածքի կառավարչի (ոչ ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերի սեփականատերերի) միջոցների հաշվին:

2. Առավել վտանգավոր գոտիներում օբյեկտների տեղակայման և քաղաքացիների գտնվելու կանոնները, այդ գոտիներում աշխատանքների իրականացումը, երկաթուղային գծերով երթևեկության և երկաթուղային գծերի անցման կանոնները հաստատում է կառավարությունը:

3. Օբյեկտները, որոնց տարածքներում իրականացվում են վտանգավոր բեռների արտադրությունը, բեռնումը, փոխադրումը և բեռնաթափումը, պետք է տեղադրվեն ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերից և նրանց վրա տեղակայված շենքերից, շինություններից և կառույցներից այնպիսի հեռավորության վրա, որը կապահովի երկաթուղային տրանսպորտի անվտանգ գործունեությունը: Ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերից նշված օբյեկտների և նրանց վրա տեղակայված շենքերի, շինությունների, կառույցների, ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերին կապի գծերի, էլեկտրահաղորդումների, նավթամուղների, գազամուղների և այլ վերգետնյա և ստորգետնյա կառույցների հատման վայրերից նվազագույն հեռավորությունը սահմանում է կառավարությունը:

4. Կապի գծերի, էլեկտրահաղորդիչների, նավթամուղների, գազամուղների և ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերը հատող կամ այդ գծերի անմիջական հարևանությամբ գտնվող կառույցների սեփականատերերը պատասխանատվություն են կրում նշված կառույցների շինարարության և շահագործման սահմանված նորմերի պահպանման և նշված օբյեկտների գործունեության անվտանգության ապահովման համար: Նշված կառույցների սեփականատերերը պարտավոր են ժամանակին տեղեկացնել ենթակառուցվածքի կառավարչին վթարավտանգ իրավիճակների առաջացման մասին, որոնք կարող են ազդել երկաթուղային տրանսպորտի աշխատանքների կազմակերպման վրա, ինչպես նաև տեղեկացնել վթարների կանխման ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումների մասին:

5. Հատուկ և վտանգավոր բեռների փոխադրման, բեռնման ու բեռնաթափման ժամանակ բեռնառաքողները և բեռ ստացողները պետք է ապահովեն այդ փոխադրումների, բեռնման ու բեռնաթափման անվտանգությունը, ինչպես նաև ունենան վթարային իրավիճակների և դրանց հետևանքների վերացման համար

նախատեսված համապատասխան միջոցներ: Ենթակառուցվածքի կառավարիչը և փոխադրողներն իրենց տեխնիկական և տեխնոլոգիական հնարավորությունների սահմաններում ունեցած վերականգնողական և հակահրդեհային միջոցների օգտագործմամբ պարտավոր են մասնակցել տրանսպորտային պատահարների հետևանքների վերացմանը:

6. Երկաթուղային տրանսպորտում անվտանգության ապահովման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է լիազոր մարմինը: Լիազոր մարմինը վերահսկողություն է իրականացնում երկաթուղային տրանսպորտում անվտանգության ապահովման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ:

7. Երկաթուղային տրանսպորտում երթևեկության անվտանգության, տրանսպորտային միջոցների տեխնիկական շահագործման և փոխադրման գործընթացի հետ կապված այլ կանոնների խախտման համար մեղավոր անձինք պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

8. Երկաթուղային գծերի ավտոմոբիլային ճանապարհների հետ հատման կարգը և երկաթուղային գծերի հատման կանոնները, երկաթուղային գծանցների շահագործման պայմանները, դրանց գործարկման և փակման կարգը սահմանում է կառավարությունը:

9. Երկաթուղային տրանսպորտում անվտանգությունն ապահովում է ենթակառուցվածքի կառավարչի անվտանգության ծառայությունը, որը հանդիսանում է հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող ծառայություն: Ենթակառուցվածքի կառավարչի անվտանգության ծառայության աշխատակիցներին իրենց գործունեությունն իրականացնելու նպատակով տրվում է վկայական, որի ձևը սահմանում է լիազոր մարմինը: Ենթակառուցվածքի կառավարչի անվտանգության ծառայության աշխատակիցներին ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում թույլատրվում է ~~կրել և կիրառել ծառայողական~~ պահել և կրել քաղաքացիական զենք՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

10. Երկաթուղային տրանսպորտում տրանսպորտային պատահարների և երկաթուղային տրանսպորտի շահագործման և երթևեկության անվտանգության կանոնների խախտման հետ կապված միջադեպերի ծառայողական քննության և հաշվառման կարգերը սահմանում է լիազոր մարմինը:

***(25-րդ հոդվածը փոփ., լրաց. 05.02.13 ՀՕ-7-Ն)***

**ՏԵՂԵԿԱՆՔ**
**ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»**

**Հոդված 70. Դատախազի անվտանգությունը և անձնական պաշտպանության միջոցները**

1. Դատախազն ունի ~~ծառայողական հաշվեցուցակային~~ զենք և անձնական պաշտպանության հատուկ միջոցներ պահելու և կրելու իրավունք: Դատախազներին ~~ծառայողական հաշվեցուցակային~~ զենք և անձնական պաշտպանության հատուկ միջոցներ տրամադրում է կառավարության լիազորած մարմինը:

2. ~~Ծառայողական հաշվեցուցակային~~ զենքը և անձնական պաշտպանության հատուկ միջոցները պահելու և կրելու կարգը սահմանվում է գլխավոր դատախազի հրամանով:

3. Դատախազը և նրա ընտանիքի անդամները գտնվում են պետության հատուկ պաշտպանության ներքո: Դատախազի, նրա ընտանիքի անդամների կամ նրա զբաղեցրած բնակելի և ծառայողական տարածքների անձեռնմխելիության նկատմամբ ոչ իրավաչափ ներգործության սպառնալիքի դեպքում դատախազի պահանջով իրավասու պետական մարմինները պարտավոր են անհապաղ ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները դատախազի, նրա ընտանիքի անդամների և նրա զբաղեցրած բնակելի և ծառայողական շինությունների անվտանգությունն ապահովելու ուղղությամբ:

## ՏԵՂԵԿԱՆՔ
## ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ»

**Հոդված 45. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի անվտանգությունը և անձնական պաշտպանության միջոցները**

1. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողն ունի ~~ծառայողական հաշվեցուցակային~~ զենք և անձնական պաշտպանության հատուկ միջոցներ պահելու և կրելու իրավունք: Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողին ~~ծառայողական հաշվեցուցակային~~ զենք և անձնական պաշտպանության հատուկ միջոցներ տրամադրում է Կառավարության լիազոր մարմինը:

2. ~~Ծառայողական հաշվեցուցակային~~ զենքը և անձնական պաշտպանության հատուկ միջոցները պահելու և կրելու կարգը սահմանվում է հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի հրամանով:

3. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի, նրա ընտանիքի անդամների կամ նրա զբաղեցրած բնակելի և ծառայողական տարածքների անձեռնմխելիության նկատմամբ ոչ իրավաչափ ներգործության սպառնալիքի դեպքում հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի պահանջով իրավասու պետական մարմինները պարտավոր են անհապաղ ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի, նրա ընտանիքի անդամների և նրա զբաղեցրած բնակելի և ծառայողական շինությունների անվտանգությունն ապահովելու ուղղությամբ:

## ՏԵՂԵԿԱՆՔ
## ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՈՐՍԻ ԵՎ ՈՐՍՈՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ»

**Հոդված 21.1. Որսի արգելված ձևերը, միջոցները, գործիքները և սահմանափակումները**

Հայաստանի Հանրապետության տարածքում արգելվում է որս իրականացնել՝

1) առանց սույն օրենքով սահմանված փաստաթղթերի առկայության.

2) որսահանդակների տարածքներից դուրս.

3) բնության հատուկ պահպանվող տարածքներում, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի.

4) որսի կանոններով չնախատեսված որսագործիքներ օգտագործելով.

5) բնակավայրերին, հանգստի գոտիներին և ավտոմայրուղիներին մոտ տարածքներում՝ որսորդական ակոսավոր հրազենով, ոչ պակաս, քան 5000 մետր, իսկ ողորկափող հրազենով՝ 500 մետր հեռավորությունից.

6) գյուղատնտեսական նշանակության հողերում՝ մինչև բերքահավաքի ավարտը.

7) որսի թույլտվության մեջ նշված չափաքանակներից ավել վայրի կենդանիների, թույլտվությունում չնշված վայրի կենդանիների տեսակների, թույլտվությունում նշված որսի ժամկետներից դուրս.

8) Բնության պահպանության միջազգային միության ցանկում գրանցված վտանգված վայրի կենդանիների վրա, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի.

9) աղետալի վիճակում գտնվող կամ բնական աղետներից փրկվող վայրի կենդանիների վրա.

10) վայրի կենդանիների ձվերի և ձագերի հավաքմամբ, դրանց բների ու որջերի քանդմամբ և հավաքատեղերի վնասմամբ և ոչնչացմամբ.

11) վերգետնյա, օդային (ուղղաթիռ, ինքնաթիռ, պարաշյուտ և այլն) և ջրային մեխանիկական (մոտորացված) տրանսպորտային միջոցներից վայրի կենդանիներին հետապնդելով.

12) որսի համար օրենքով չնախատեսված, օրենքով սահմանված կարգով չհաշվառված կամ ապօրինի պատրաստված զենքի, օբյեկտների պահպանության համար հատկացված հրազենի կիրառմամբ.

13) մարտական զենքի և մարտական փամփուշտների, ինքնաձեռների, ինքնաձիգ հրացանների, ~~օդամղիչ զենքի~~, ~~ռազմական ակոսավոր~~ մարտական զենքի և ազդանշանային հրթիռների գործադրմամբ.

14) աղեղների, կեռչանների, ցանցերի, օղակների, ծուղակների, որսափոսերի և թիվ 5-ից խոշոր թակարդների օգտագործմամբ.

15) պայթուցիկ և քիմիական նյութերի (բացառությամբ հոտավետ խայծերի), գազերի և էլեկտրական հոսանքի գործադրմամբ.

16) գիշերային ժամերին լուսարձակների կամ լուսային այլ հզոր սարքավորումների (աղբյուրների) կիրառմամբ.

17) բուսական ծածկի այրմամբ կամ ծխի օգտագործման միջոցով.

18) ձայնարձակիչների կամ ձայն վերարտադրող էլեկտրոնային (ոչ մեխանիկական) սարքերի գործադրմամբ.

19) վայրի կենդանիների զանգվածային վնասման այլ եղանակներով:

***(21.1-ին հոդվածը լրաց. 04.02.10 ՀՕ-18-Ն)***

***(հոդվածը 05.10.22 ՀՕ-370-Ն օրենքի փոփոխությամբ ուժի մեջ կմտնի «Ջենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից)***

# ՏԵՂԵԿԱՆՔ
# ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 19.1 «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքով նախատեսված լիցենզիաներ և թույլտվություններ տալու և դրանց գործողության ժամկետները երկարաձգելու համար պետական տուրքի դրույքաչափերը**
***(վերնագիրը խմբ. 05.10.22 ՀՕ-379-Ն)***

**Իրավաբանական անձանց տրվող լիցենզիաներ**

1. ~~Քաղաքացիական և ծառայողական~~ զենքի արտադրություն կազմակերպելու համար՝

| | |
|---|---|
| ա) անժամկետ գործողության ժամկետով | բազային տուրքի 1000-ապատիկի չափով |
| բ) անժամկետ երկարաձգելու համար | բազային տուրքի 500-ապատիկի չափով |

2. ~~Քաղաքացիական և ծառայողական~~ զենքի հարդարում կազմակերպելու համար՝

| | |
|---|---|
| ա) անժամկետ գործողության ժամկետով | բազային տուրքի 300-ապատիկի չափով |
| բ) անժամկետ երկարաձգելու համար | բազային տուրքի 200-ապատիկի չափով |

3. Քաղաքացիական ~~և ծառայողական~~ զենքի առևտուր իրականացնելու համար՝

| | |
|---|---|
| ա) անժամկետ գործողության ժամկետով | բազային տուրքի 1000-ապատիկի չափով |
| բ) անժամկետ երկարաձգելու համար | բազային տուրքի 500-ապատիկի չափով |

4. Հրաձգարան գործարկելու համար՝

| | |
|---|---|
| ա) բաց հրաձգարանի անժամկետ գործողության ժամկետով | բազային տուրքի 500-ապատիկի չափով |

| | |
|---|---|
| բ) կիսափակ հրաձգարանի անժամկետ գործողության ժամկետով | բազային տուրքի 500-ապատիկի չափով |
| գ) փակ հրաձգարանի անժամկետ գործողության ժամկետով | բազային տուրքի 200-ապատիկի չափով |

**Իրավաբանական անձանց տրվող թույլտվություններ**

| | |
|---|---|
| 5. Յուրաքանչյուր միավոր զենք ձեռք բերելու համար (6 ամիս գործողության ժամկետով)՝ | բազային տուրքի հնգապատիկի չափով |
| ~~6. Զենքի 100-ական փամփուշտից բաղկացած խմբաքանակ ձեռք բերելու համար (6 ամիս գործողության ժամկետով)՝~~ | ~~բազային տուրքի 50 տոկոսի չափով~~ |
| 7. հրազենի հիմնական բաղկացուցիչ մասեր ձեռք բերելու համար (6 ամիս գործողության ժամկետով)՝ | բազային տուրքի չափով |
| 7.1. զենք, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասեր, փամփուշտներ ներկրելու, արտահանելու, տարանցիկ փոխադրելու համար (6 ամիս գործողության ժամկետով) | բազային տուրքի հնգապատիկի չափով |

8. Զենքի հավաքածու կազմելու թույլտվության համար՝

| | |
|---|---|
| ա) ~~անժամկետ~~ 10 տարի գործողության ժամկետով | բազային տուրքի 80-ապատիկի չափով |
| բ) ~~անժամկետ~~ 10 տարով երկարաձգելու համար | բազային տուրքի 60-ապատիկի չափով |

9. Զենքի հավաքածու ցուցադրելու համար՝

| | |
|---|---|
| ա) 6 ամիս գործողության ժամկետով | բազային տուրքի 10-ապատիկի չափով |
| բ) 6 ամսով երկարաձգելու համար | բազային տուրքի 10-ապատիկի չափով |

10. Քաղաքացիական և ծառայողական, առանձին դեպքերում՝ մարտական զենք պահելու և օգտագործելու թույլտվության համար՝

| | |
|---|---|
| ա) 10 տարի գործողության ժամկետով | բազային տուրքի ~~60~~ 20-ապատիկի չափով |

| | |
|---|---|
| բ) 10 տարի երկարաձգելու համար | բազային տուրքի ~~40~~ 10-ապատիկի չափով |

11. Ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ ~~ծառայողական, այդ թվում՝ մարտական զենքի առանձին տեսակներ կրելու,~~ զենք պահելու և կրելու համար (5 տարի գործողության ժամկետով կամ 5 տարով երկարաձգելու համար)՝

բազային տուրքի
վեցապատիկի չափով

**Ֆիզիկական անձանց տրվող թույլտվություններ**

12. Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին՝ յուրաքանչյուր միավոր քաղաքացիական և ծառայողական զենք ձեռք բերելու համար (6 ամիս գործողության ժամկետով)՝

| | |
|---|---|
| ա) գազային, ազդանշանային, նետողական զենքի համար | բազային տուրքի կրկնապատիկի չափով |
| բ) ողորկ-երկարափող հրազենի կամ 7.5 ջոուլից ավելի փողային էներգիայով օդաճնշիչ զենքի համար | բազային տուրքի քառապատիկի չափով |
| գ) ակոսափող կամ համակցված հրազենի համար | բազային տուրքի վեցապատիկի չափով |
| ~~դ) ծառայողական զենք ձեռք բերելու համար~~ | ~~բազային տուրքի վեցապատիկի չափով~~ |

12.1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին՝ հրազենի հիմնական բաղկացուցիչ մասեր ձեռք բերելու համար (6 ամիս գործողության ժամկետով)՝

բազային տուրքի չափով

13. Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին՝ զենքի հավաքածու կազմելու համար՝

| | |
|---|---|
| ա) 10 տարի գործողության ժամկետով | բազային տուրքի 80-ապատիկի չափով |
| բ) 10 տարով երկարաձգելու համար | բազային տուրքի 40-ապատիկի չափով |

14. Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին՝ զենքի հավաքածու ցուցադրելու համար՝

ա) 6 ամիս գործողության ժամկետով — բազային տուրքի 10-ապատիկի չափով

բ) 6 ամսով երկարաձգելու համար — բազային տուրքի 10-ապատիկի չափով

15. Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին՝ գազային, ազդանշանային, նետողական զենք պահելու և կրելու համար (անժամկետ)՝

բազային տուրքի ութապատիկի չափով

16. Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին՝ ողորկ-երկարափող հրազեն պահելու և կրելու համար (10 տարի գործողության ժամկետով կամ 10 տարով երկարաձգելու համար)՝

բազային տուրքի 10-ապատիկի չափով

17. Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին՝ համակցված կամ ակոսափող հրազեն պահելու և կրելու համար (10 տարի գործողության ժամկետով կամ 10 տարով երկարաձգելու համար)՝

բազային տուրքի 20-ապատիկի չափով

18. Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին՝ օդաճնշիչ զենք պահելու և կրելու համար (10 տարի գործողության ժամկետով կամ 10 տարով երկարաձգելու համար)՝

բազային տուրքի 10-ապատիկի չափով

~~19. Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին՝ ծառայողական զենք պահելու և կրելու համար (10 տարի գործողության ժամկետով կամ 10 տարով երկարաձգելու համար)՝~~

~~բազային տուրքի 20-ապատիկի չափով~~

20. ~~Քաղաքացիական, ծառայողական և պարգևատրական~~ զենք, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասեր, փամփուշտներ ներկրելու և արտահանելու համար (6 ամիս գործողության ժամկետով կամ 6 ամսով երկարաձգելու համար)՝

բազային տուրքի
հնգապատիկի չափով

21. Որպես պարգև ստացած և կրակոց արձակելու համար ոչ պիտանի դարձրած (մալած) ~~մարտական կամ ծառայողական~~ զենքը ժառանգելու դեպքում անժամկետ պահելու թույլտվություն՝

բազային տուրքի
հնգապատիկի չափով

22. Օտարերկրյա քաղաքացիներին՝ Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական զենք, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասեր և փամփուշտներ ձեռք բերելու համար (5 օր գործողության ժամկետով)՝

| | |
|---|---|
| ա) յուրաքանչյուր միավոր նետողական կամ սառը զենքի համար | բազային տուրքի ~~10-ապատիկի~~ չափով |
| բ) յուրաքանչյուր միավոր գազային զենքի համար | բազային տուրքի 10-ապատիկի չափով |
| գ) յուրաքանչյուր միավոր ողորկ-երկարափող հրազենի կամ 7.5 ջոուլից ավելի փողային էներգիայով օդաճնշիչ զենքի համար | բազային տուրքի 20-ապատիկի չափով |
| դ) յուրաքանչյուր միավոր երկար-ակոսափող կամ համակցված հրազենի համար | բազային տուրքի 25-ապատիկի չափով |
| ե) զենքի 100-ական փամփուշտից բաղկացած խմբաքանակ ձեռք բերելու համար | բազային տուրքի ~~հնգապատիկի~~ չափով |
| զ) հրազենի հիմնական բաղկացուցիչ մասեր ձեռք բերելու համար | բազային տուրքի ~~հնգապատիկի~~ չափով |

23. Օտարերկրյա քաղաքացիներին՝ Հայաստանի Հանրապետությունից որպես պարգև տրված զենք արտահանելու թույլտվություն՝ 2 ամիս գործողության ժամկետով՝

բազային տուրքի
10-ապատիկի չափով

24. Սույն հոդվածում նշված լիցենզիաներն ու թույլտվությունները վերաձևակերպելու կամ կրկնօրինակը տալու համար՝

լիցենզիայի կամ թույլտվության տվյալ տեսակը տալու համար սահմանված դրույքաչափի 50 տոկոսի չափով, բայց ոչ ավելի բազային տուրքի 12-ապատիկից

25. Զենքի հետ կապված և անվտանգության կանոնների իմացության տեսական և գործնական քննությունների համար՝

բազային տուրքի եռապատիկի չափով

26. Զենքի տիրապետումը խոչընդոտող հիվանդությունների և վիճակների մասին բժշկական հետազոտություններ և դրանց բացակայության մասին տրվող եզրակացություն:

բազային տուրքի 20-ապատիկի չափով

*(19.1-ին հոդվածը լրաց. 02.05.01 ՀՕ-181, խմբ. 22.02.07 ՀՕ-117-Ն, խմբ. 05.10.22 ՀՕ-379-Ն, լրաց., խմբ. 13.07.23 ՀՕ-269-Ն)*
*(05.10.22 ՀՕ-379-Ն օրենքն ունի անցումային դրույթ)*

ՏԵՂԵԿԱՆՔ
ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ»

**Հոդված 43. Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների ցանկը**

1. Գործունեությունը համարվում է լիցենզավորման ենթակա, եթե այն ընդգրկված է սույն հոդվածի աղյուսակում:

2. Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների աղյուսակ

| Հ/հ | Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը | Լիցեն-զավորող մարմինը | *(սյունակը հանվել է 13.11.15 ՀՕ-121-Ն)* | Ոլորտ | Փորձա-քննու-թյան պահանջ | Մրցու-թային կար-գով | Որակա-վորման պահանջ | Հաշվե-տվու-թյան պահանջ | Վայրի պա-հանջ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| | 1. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ | | | | | | | | |
| 4. | ~~Քաղաքացիական և ծառայողական~~ զենքի արտադրություն | ԿՄ | | - | Փ | - | Ո | Հ | Վ |
| 5. | ~~Քաղաքացիական և ծառայողական~~ զենքի առևտուր | ԿՄ | | - | Փ | - | - | Հ | Վ |

ՏԵՂԵԿԱՆՔ
ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»

~~«Հոդված 14. Ոստիկանության պարտականությունները զենքի պահպանման և օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս~~

~~1. Ոստիկանությունը պարտավոր է օրենքով սահմանված կարգով տրամադրել՝~~

~~1) քաղաքացիական և ծառայողական զենքի առևտրի, հարդարման և հրաձգարանի գործարկման լիցենզիաները.~~

~~2) զենք ձեռք բերելու, պահելու, կրելու, պահելու և կրելու, պահելու և օգտագործելու, զենքի հավաքածու կազմելու և դրանք ցուցադրելու թույլտվությունները.~~

~~3) ոստիկանությունից ժամանակավոր օգտագործման համար ստացված՝ մարտական հրաձգային զենքերի առանձին տեսակներն ու մոդելներն օգտագործելու թույլտվությունները:~~

~~2. Ոստիկանությունը պարտավոր է վերահսկել քաղաքացիական և ծառայողական զենքի, դրանց փամփուշտների, ինչպես նաև արդյունաբերական կիրառման պայթուցիկ նյութերի շրջանառության՝ օրենսդրությամբ սահմանված կարգի պահպանումը:~~

~~3. Ոստիկանությունը պարտավոր է կատարել «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքով նախատեսված այլ պարտականություններ:»:~~

«Հոդված 14. Ոստիկանության պարտականությունները զենքի պահպանման և օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս

Ոստիկանությունը պարտավոր է պատշաճ իրականացնել «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքով նախատեսված լիազորությունները և պարտականությունները:»:

ՏԵՂԵԿԱՆՔ
ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԱՍԻՆ»

**Հոդված 7. Փոստային առաքանու և դրամական միջոցների փոստային փոխադրությունների պահպանությունը**

Փոստային կապի և (կամ) սուրհանդակային կապի օպերատորների միջև փոստային առաքանիների և դրամական միջոցների ընդունումը և հանձնումն իրականացվում են պայմանագրային հիմունքներով՝ ապահովելով հանձնվող և ընդունվող փոստային առաքանիների և դրամական միջոցների ճշգրիտ հաշիվը:

Թերություններով (ուղեկից փաստաթղթերում նշված քաշից տարբերություն, փաթեթավորման, կնիքների, կապերի և այլ թերություններ) փոստային առաքանու հայտնաբերման դեպքում փոստային կապի և (կամ) սուրհանդակային կապի օպերատորը պարտավոր է ձևակերպել և այդպիսի փոստային առաքանին հանձնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Փոստային կապի ազգային օպերատորն օրենքով սահմանված կարգով իրավասու է ունենալու քաղաքացիական ~~և ծառայողական~~ զենք, որն անհրաժեշտ է պահպանելու համար փոստային առաքանին և դրամական միջոցները, ինչպես նաև փոստային կապի օբյեկտները:

Շինությունները, որտեղ իրականացվում են փոստային առաքանու մշակումը և դրամական միջոցների պահպանումը, պետք է կահավորված լինեն պաշտպանական և հակահրդեհային միջոցներով:

Ինքնաթիռները, փոստային վագոնները, ավտոմեքենաները և տրանսպորտային այլ միջոցներ, որոնք փոխադրում են փոստային առաքանի ու դրամական միջոցներ, պետք է սարքավորված լինեն այնպես, որ բացառվի համապատասխան տարածքներ կողմնակի անձանց մուտքի հնարավորությունը:

Փոստային կապի օպերատորն իրավասու է ունենալու փոստային անվտանգության ստորաբաժանումներ և պաշտպանության միջոցներ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

***(7-րդ հոդվածը խմբ. 11.05.11 ՀՕ-157-Ն)***

***(11.05.11 <u>ՀՕ-157-Ն</u> օրենքի 8-րդ հոդվածի փոփոխությունը սույն օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասում հնարավոր չէ կատարել, քանի որ «Փոստային կապի» բառերը բացակայում են)***

ՏԵՂԵԿԱՆՔ
ՕՐԵՆՍԳՐՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՎԱՐՉԱԿԱՆ
ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ»

Հոդված 27. **Վարչական իրավախախտում կատարելու գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկան հատուցմամբ վերցնելը**

Վարչական իրավախախտում կատարելու գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկան հատուցմամբ վերցնելն այն է, որ առարկան հարկադիր կարգով վերցվում է և այնուհետև իրացվում, ստացված գումարը հանձնելով նախկին սեփականատիրոջը՝ վերցված առարկայի իրացման ծախսերի պահումով:

~~Հրազենը~~ <u>զենքը</u> և ռազմամթերքը հատուցմամբ վերցնել չի կարող կիրառվել այն անձանց նկատմամբ, որոնց համար որսորդությունը գոյության հիմնական աղբյուրն է:

Հատուցմամբ վերցնում կիրառելու կարգը և վերցնելու ենթակա առարկաների տեսակները սահմանվում են ԽՍՀ Միության օրենսդրությամբ, սույն օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության այլ օրենսդրությամբ:

***(27-րդ հոդվածը փոփ. 09.06.22 ՀՕ-155-Ն)***

Հոդված 28. **Վարչական իրավախախտում կատարելու գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի բռնագրավումը**

Վարչական իրավախախտում կատարելու գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի բռնագրավումն այն է, որ այդ առարկան, հարկադիր կարգով անհատույց դարձվում է պետական կամ համայնքային սեփականություն:

~~Հրազենի~~ <u>զենքը</u>, որսի այլ գործիքների և ռազմամթերքի բռնագրավում չի կարող կիրառվել այն անձանց նկատմամբ, որոնց համար որսորդությունը գոյության հիմնական աղբյուրն է:

Բռնագրավում կիրառելու կարգը, բռնագրավման ոչ ենթակա առարկաների ցանկը սահմանվում է ԽՍՀ Միության օրենսդրությամբ, սույն օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության այլ օրենսդրությամբ:

Բռնագրավման ենթակա չէ բարեխիղճ երրորդ անձին պատկանող գույքը: Սույն հոդվածի իմաստով՝ անձը բարեխիղճ է, եթե չգիտեր և չէր կարող իմանալ, որ իր կողմից այլ անձի հանձնված գույքն օգտագործվելու է կամ նախատեսվում է օգտագործել որպես վարչական իրավախախտում կատարելու գործիք կամ անմիջական օբյեկտ:

***(28-րդ հոդվածը խմբ. 11.05.92, 23.06.97 ՀՕ-133, փոփ. 09.06.22 ՀՕ-155-Ն, լրաց., փոփ. 22.03.23 ՀՕ-116-Ն)***

**«Հոդված 160. Զենքի, դրա հիմնական բաղկացուցիչ մասերի և փամփուշտների վաճառքի կարգը խախտելը**

~~1. Քաղաքացիական և ծառայողական զենքի առևտրի լիցենզիա ունեցող իրավաբանական անձանց կողմից զենք ձեռք բերելու թույլտվություն չունեցող ֆիզիկական և իրավաբանական անձանց զենք վաճառելը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:~~

1. Քաղաքացիական զենքի առևտրի լիցենզիա ունեցող իրավաբանական անձանց կողմից քաղաքացիական զենք վաճառելը տվյալ տեսակի զենք ձեռք բերելու թույլտվություն չներկայացրած, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասեր վաճառելը՝ հրազենի հիմնական բաղկացուցիչ մասեր ձեռք բերելու թույլտվություն չներկայացրած, փամփուշտներ վաճառելը՝ տվյալ տեսակի զենք պահելու և կրելու կամ պահելու և օգտագործելու թույլտվություն չներկայացրած իրավաբանական կամ ֆիզիկական անձանց՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի վեցհարյուրապատիկի չափով:

3. Վաճառակետերում զենքի պահպանման անվտանգության կանոնների պահպանումը խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:

5. Զենքի վաճառքի գործունեության կազմակերպման լիցենզիայի պարտադիր պահանջները կամ պայմանները խախտելը, եթե դա չի առաջացրել «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պատասխանատվություն՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսնապատիկի չափով:»:

**Հոդված 173. ~~Հրազենից~~ Զենքից կրակելը բնակավայրերում և դրա համար չհատկացված տեղերում կամ սահմանված կարգի խախտումով**

~~Հրազենից~~ Զենքից կրակելը բնակավայրերում և դրա համար չհատկացված տեղերում, ինչպես նաև դրա համար հատկացված տեղերում սահմանված կարգի խախտումով՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ~~երեսնապատիկի~~ հարյուրապատիկի չափով՝ ~~հրազենի~~ զենքի և ռազմամթերքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

*(173-րդ հոդվածը խմբ. 02.09.93 ՀՕ-79, 07.02.12 ՀՕ-2-Ն)*

**Հոդված 192. ~~Հրազենի~~ Զենքի գրանցման (վերագրանցման) ժամկետները կամ հաշվառման վերցնելու կանոնները խախտելը**

1. Ֆիզիկական անձանց կողմից բնակության վայրը փոխելիս, իսկ իրավաբանական անձանց կողմից հաշվառման վայրը փոխելիս ~~հրազենի~~ զենքի գրանցման (վերագրանցման) սահմանված ժամկետները խախտելը կամ ոստիկանությունում այն հաշվառման վերցնելու կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ յուրաքանչյուր միավոր ~~հրազենի~~ զենքի համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:

*(192-րդ հոդվածը խմբ. 02.09.93 ՀՕ-79, փոփ. 07.02.12 ՀՕ-2-Ն, խմբ. 05.10.22 ՀՕ-378-Ն)*

**Հոդված 193.3. ~~Քաղաքացիական և ծառայողական~~ զենքի արտադրության վերաբերյալ սահմանված նորմերը խախտելը**

1. ~~Քաղաքացիական և ծառայողական~~ զենքի արտադրության գործունեության կազմակերպման լիցենզիայի պարտադիր պահանջները կամ պայմանները խախտելը, եթե դա չի առաջացրել «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պատասխանատվություն՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:»:

**Հոդված 264. Իրեր և փաստաթղթեր վերցնելը**

Ձերբակալման, անձնական զննության կամ իրերի զննության ժամանակ հայտնաբերված իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող իրերը և փաստաթղթերը վերցվում են սույն օրենսգրքի 261 և 263 հոդվածներում նախատեսված մարմինների պաշտոնատար անձանց կողմից: Վերցված իրերն ու փաստաթղթերը ընդհուպ մինչև վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը պահվում են այն մարմինների (պաշտոնատար անձանց) կողմից որոշվող տեղերում, որոնց իրավունք է վերապահված վերցնելու իրերը և փաստաթղթերը, իսկ գործը քննելուց հետո, նայած գործի քննության արդյունքներին, դրանք սահմանված կարգով բռնագրավվում կամ վերադարձվում են տիրոջը կամ ոչնչացվում, իսկ իրերը հատուցմամբ վերցնելու դեպքում իրացվում են: Ինքնաթոր օղին և տնային եղանակով պատրաստված այլ թունդ ոգելից խմիչքները, դրանց արտադրության համար ապարատները ոչնչացվում են գործը քննելուց հետո:

Իրեր և փաստաթղթեր վերցնելու դեպքում այդ մասին կազմվում է արձանագրություն կամ համապատասխան նշում է արվում վարչական իրավախախտման վերաբերյալ, իրերի զննության կամ վարչական ձերբակալման վերաբերյալ արձանագրության մեջ:

***(1-ին և 2-րդ նախադասությունները գործել են մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը՝ 20.01.21 ՀՕ-27-Ն օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն)*** Սույն օրենսգրքի 123-րդ, 123.1-ին, 123.3-րդ հոդվածներով, 123.4-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 123.5-րդ, 123.6-րդ, 123.7-րդ, 124-րդ, 124.1-ին, 124.2-րդ, 124.3-րդ, 124.4-րդ, 124.5-րդ,

124.6-րդ, 125-րդ, 126-րդ և 129.2-րդ հոդվածներով նախատեսված իրավախախտում կատարած՝ Հայաստանի Հանրապետությունում մշտապես չբնակվող անձանց վարորդական վկայականները վերցվում են մինչև գործով կայացված որոշման կատարումը՝ տալով տրանսպորտային միջոց վարելու իրավունքի ժամանակավոր թույլտվություն, որի մասին նշում է կատարվում իրավախախտումների վերաբերյալ արձանագրության մեջ: Ժամանակավոր թույլտվության գործողության ժամկետը երկարաձգվում է մինչև գանգատարկման համար սահմանված ժամկետը լրանալը կամ գանգատի առթիվ որոշումն ընդունելը:

Սույն օրենսգրքի 173, 190 հոդվածներով, 191, 192 և 193 հոդվածներով նախատեսված խախտումներ կատարելու դեպքում ոստիկանության աշխատողները իրավունք ունեն մինչև գործի քննությունը վերցնել ~~հրազենը~~ զենքը, ինչպես նաև ռազմամթերքը, որի մասին գրանցվում է արձանագրության մեջ՝ նշելով վերցվող զենքի մակնիշը կամ մոդելը, տրամաչափը, սերիան և համարը, ռազմամթերքի քանակն ու տեսակը: Պաշտոնեական պարտականությունների իրականացման ընթացքում իրավախախտում կատարած անձի իրերի վերցնում, անձնական զննություն և իրերի զննություն կիրառվում է միայն հետաձգում չհանդուրժող դեպքերում:

Սույն օրենսգրքի 184 հոդվածով նախատեսված խախտումներ կատարվելու դեպքում ոստիկանության աշխատողները իրավունք ունեն վերցնելու ԽՍՀՄ շքանշան, մեդալ, պատվավոր կոչման կրծքանշան, շքանշանների ժապավեններ և մեդալների շերտաձողիկներ կամ Հայաստանի Հանրապետության, մյուս միութենական կամ ինքնավար հանրապետության պետական պարգև և դրանց կրծքանշաններ: Գործը քննելուց հետո իրավախախտողից վերցված ԽՍՀՄ շքանշանը, մեդալը, պատվավոր կոչման կրծքանշանը, Հայաստանի Հանրապետության, մյուս միութենական կամ ինքնավար հանրապետության պետական պարգևը, ինչպես նաև դրանց կրծքանշանները ենթակա են վերադարձման դրանց օրինական տիրոջը, իսկ եթե նա հայտնի չէ, ուղարկվում են համապատասխանաբար ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահություն, Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահություն, միութենական կամ ինքնավար հանրապետության Գերագույն խորհրդի նախագահություն:

***(264-րդ հոդվածը խմբ. 30.09.87, 10.03.90, լրաց., փոփ. 21.02.07 ՀՕ-73-Ն, 07.02.12 ՀՕ-2-Ն, փոփ. 21.12.15 ՀՕ-178-Ն, 16.05.16 ՀՕ-82-Ն, 09.12.19 ՀՕ-300-Ն, խմբ. 20.01.21 ՀՕ-27-Ն, փոփ. 09.06.22 ՀՕ-155-Ն, 05.10.22 ՀՕ-378-Ն)***

***(20.01.21 ՀՕ-27-Ն օրենքն ունի անցումային դրույթ)***

**Հոդված 283. Գործի վերաբերյալ որոշման հայտարարումը և որոշման պատճենի հանձնումը**

Որոշումը հայտարարվում է անհապաղ՝ գործի քննությունն ավարտելուն պես:

Որոշման պատճենը երեք աշխատանքային օրվա ընթացքում անձամբ հանձնվում է այն անձին, որի վերաբերյալ այն ընդունվել է, ինչպես նաև տուժողին՝ նրա խնդրանքով: Որոշումը համարվում է անձամբ հանձնված, եթե՝

1) այն ստորագրությամբ առձեռն հանձնվել է հասցեատիրոջը, կամ հասցեատերը հրաժարվել է որոշումն ստանալուց, և առկա է որոշումը հանձնողի նշումն այդ մասին.

2) այն ուղարկվել է հասցեատիրոջ պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով՝ «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով, և այդ օրենքով համարվում է պատշաճ ծանուցված.

3) պաշտոնական էլեկտրոնային փոստ չունեցող հասցեատիրոջ գրավոր դիմումի հիման վրա այն ուղարկվել է էլեկտրոնային փոստով կամ հեռահաղորդակցության այլ (այդ թվում՝ բջջային հեռախոսահամարին կարճ հաղորդագրություն ուղարկելու) միջոցով, և դրանք հավաստում են պարտավոր անձի կողմից վարչական ակտի մասին ծանուցումն ստացած լինելու փաստը.

4) հասցեատերը դիմել է տուգանքի վճարումը տարաժամկետելու խնդրանքով կամ բողոքարկել է վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշումը, որոնց դեպքում որոշումը հանձնելու օր է համարվում տարաժամկետելու խնդրանքով դիմելու կամ բողոքարկելու օրը:

Եթե հնարավոր չէ որոշումը հանձնել առձեռն, կամ հասցեատերը չունի պաշտոնական էլեկտրոնային փոստ (բնակչության պետական ռեգիստրի տվյալների համաձայն՝ անձը չունի նույնականացման քարտ, կամ պետական ռեգիստրի գրանցամատյանում չկա տեղեկատվություն իրավաբանական անձի էլեկտրոնային փոստի վերաբերյալ) և գրավոր չի դիմել որոշման մասին իր հայտնած հեռահաղորդակցության միջոցով ծանուցելու խնդրանքով, կամ սույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով սահմանված կարգով որոշումը հանձնելուց հետո՝ հնգօրյա ժամկետում, չի ստացվել հավաստում պարտավոր անձի կողմից վարչական ակտի մասին ծանուցումն ստացած լինելու փաստի մասին, ապա որոշումն ուղարկվում է պատվիրված նամակով՝ հետադարձ ծանուցմամբ տվյալ վարչական վարույթի ընթացքում անձի հայտնած հասցեով, իսկ դրա բացակայության դեպքում՝ անձի հաշվառման հասցեով: Եթե փոստով ուղարկված որոշումը վերադարձվել է, կամ ծանուցման փաստը չի հաստատվել, կամ հասցեատերը հրաժարվել է ստանալ պատշաճ կարգով ուղարկված (հանձնվող) որոշումը, և առկա է որոշումը հանձնողի նշումն այդ մասին, ապա որոշումը տեղադրվում է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում: Այն դեպքերում, երբ որոշումը տեղադրվում է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում, ապա որոշումը համարվում է հանձնված (պատշաճ ծանուցված) որոշման մասին ծանուցումն ինտերնետային կայքում տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը: Սույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված դիմումի առկայության դեպքում Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրվելու հետ մեկտեղ որոշումը ևս մեկ անգամ ուղարկվում է դիմումում մատնանշված հեռահաղորդակցության միջոցով:

Որոշումը հասցեատիրոջ էլեկտրոնային, այդ թվում՝ պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով ուղարկվելու դեպքում անձն ստանում է ծանուցում որոշման առկայության մասին, ինչպես նաև համապատասխան էլեկտրոնային հղումը, որի միջոցով կայացված որոշումը հնարավոր կլինի ներբեռնել կամ տեսանելի լինել ինտերնետային կայքի միջոցով, իսկ դրա անհնարինության դեպքում առնվազն ծանուցման մեջ արտացոլվում է որոշման եզրափակիչ մասը: Բջջային

հեռախոսահամարին հաղորդագրությամբ ծանուցման դեպքում անձը ստանում է կարճ հաղորդագրություն որոշման առկայության մասին՝ որոշման համարի կամ այլ տվյալի նշումով, որի օգտագործմամբ անձը ինտերնետային կայքի միջոցով հնարավորություն կունենա դիտելու կամ ներբեռնելու որոշումը:

Մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործերի որոշման պատճենը հանձնվում է այն անձին, որի վերաբերյալ որոշումը կայացվել է «Մաքսային կարգավորման մասին» օրենքով սահմանված կարգով:

Սույն օրենսգրքի 173 հոդվածով և 191 հոդվածի առաջին և երկրորդ մասերով նախատեսված վարչական իրավախախտումների գործերով, այն անձի նկատմամբ որոշման պատճենը, որին ձեռնարկության, հիմնարկի, կազմակերպության կողմից ~~հրազենը~~ զենքը, ինչպես նաև ռազմամթերքը վստահվել է պաշտոնեական պարտականությունները կատարելու կապակցությամբ, կամ այդպիսիք տրվել են ժամանակավոր օգտագործման նպատակով, ուղարկվում է համապատասխան ձեռնարկությանը, հիմնարկին կամ կազմակերպությանը՝ ի գիտություն, և ոստիկանությանը՝ այդ անձին ~~հրազենից~~ զենքից օգտվելն արգելելու մասին հարցը քննելու համար:

***(283-րդ հոդվածը խմբ. 18.08.93 ՀՕ-73, լրաց., փոփ. 07.02.12 ՀՕ-2-Ն, խմբ. 29.09.14 ՀՕ-146-Ն, փոփ., լրաց. 21.12.15 ՀՕ-178-Ն, փոփ. 16.05.16 ՀՕ-82-Ն, խմբ. 25.10.17 ՀՕ-177-Ն, փոփ. 09.12.19 ՀՕ-300-Ն, 09.06.22 ՀՕ-155-Ն, 14.09.22 ՀՕ-354-Ն)***

**Հոդված 309. Առարկան հատուցմամբ վերցնելու մասին որոշման կատարումը**

Հատուցմամբ վերցնելու մասին որոշման հիման վրա վերցված առարկաները որոշում կայացրած մարմնի (պաշտոնատար անձի) կողմից հանձնվում են վերցնելու ենթակա գույքի գտնվելու վայրի կոմիսիոն խանութ կամ պետական կամ կոոպերատիվ առևտրի՝ այդ նպատակի համար հատկացված հատուկ խանութներ՝ իրացման համար:

~~Հրազենի~~ Զենքի և ռազմամթերքի հատուցմամբ վերցնելու մասին որոշումը կատարում են ոստիկանությունը:

Հատուցմամբ վերցված առարկայի իրացումից ստացված գումարները, սույն օրենսգրքի 27 հոդվածին համապատասխան, հանձնվում են նախկին սեփականատիրոջը, պահելով վերցված առարկայի իրացման հետ կապված ծախսերը:

ԽՍՀ Միության և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կարող է սահմանվել առարկան հատուցմամբ վերցնելու մասին որոշումների կատարման այլ կարգ:

***(309-րդ հոդվածը փոփ. 07.02.12 ՀՕ-2-Ն, 09.06.22 ՀՕ-155-Ն)***

**ՏԵՂԵԿԱՆՔ**
**ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ԵՎ ԼՐԱՑՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»**

~~Հոդված 334. Ապօրինի կերպով քաղաքացիական ողորկափող հրազեն, գազային, օդաճնշիչ, սառը կամ նետողական զենք կրելը~~

**Հոդված 334. Գազային, ազդանշանային, սառը կամ նետողական զենքի ապօրինի շրջանառությունը**

~~1. Ապօրինի կերպով քաղաքացիական ողորկափող հրազեն, գազային, օդաճնշիչ, սառը կամ նետողական զենք կրելը՝~~
~~պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:~~

1. Ապօրինի կերպով գազային, ազդանշանային, սառը կամ նետողական զենք ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը, առաքելը կամ կրելը՝
պատժվում է տուգանքով՝ առավելագույնը հարյուրհիսունապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուր հիսունից երկու հարյուր ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ՝
պատժվում է տուգանքով՝ ~~տասնապատիկից երեսնապատիկի~~ հարյուրհիսունապատից երեքհարյուրապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ~~հարյուրից երկու հարյուր~~ երկու հարյուր յոթանասուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից՝
պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ՝

պատժվում է տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուրից երկու հարյուր ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

**Հոդված 335. Հրազենի, դրա հիմնական բաղկացուցիչ մասերի, օդաճնշիչ զենքի, սահմանափակ խոցելիությամբ (վնասվածքային) հրազենի ռազմամթերքի և այլ նյութերի, սարքերի, առարկաների ապօրինի շրջանառությունը**

1. Ապօրինի կերպով հրազեն (~~բացառությամբ քաղաքացիական ողորկափող հրազենի, դրա փամփուշտների կամ դրա բաղկացուցիչ մասերի~~), դրա հիմնական բաղկացուցիչ մաս, օդաճնշիչ զենք, **սահմանափակ խոցելիությամբ (վնասվածքային) հրազեն և դրա փամփուշտներ,** ռազմամթերք, ակոսափող հրազենի փամփուշտ, պայթուցիկ նյութ կամ պայթեցման սարք ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը, առաքելը կամ կրելը՝

պատժվում է ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:

4. Սույն հոդվածում կամ սույն օրենսգրքի 334-րդ հոդվածում նշված առարկաները մինչև իրավասու մարմինների կողմից դրանց գտնվելու վայրի մասին իմանալը հանձնած անձն ազատվում է սույն հոդվածով կամ սույն օրենսգրքի 334-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվությունից: Եթե անձի փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ է պարունակում, ապա նա ենթակա է քրեական պատասխանատվության այդ հանցագործության համար:

**Հոդված 336. Ապօրինի կերպով ~~հրազեն, դրա~~ զենք, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասեր, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթեցման սարքեր պատրաստելը, ձևափոխելը կամ նորոգելը**

1. Ապօրինի կերպով ~~հրազեն, դրա~~ զենք, հրազենի հիմնական բաղկացուցիչ մաս, ռազմամթերք, պայթուցիկ նյութ կամ պայթեցման սարք պատրաստելը, դրանք ձևափոխելը կամ նորոգելը՝
պատժվում է ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:
2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ՝
պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:
3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից՝
պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:
4. Սույն հոդվածում նշված առարկաները կամովին հանձնած անձն ազատվում է սույն հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվությունից: Եթե անձի փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ է պարունակում, ապա նա ենթակա է քրեական պատասխանատվության այդ հանցագործության համար:

**Հոդված 337. ~~Հրազենի,~~ զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի կամ պայթեցման սարքերի պահպանության պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը**

1. ~~Հրազենի~~, զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութի կամ պայթեցման սարքի պահպանության պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, եթե հանցավորի դրսևորած անզգուշության հետևանքով տեղի է ունեցել այդ առարկայի հափշտակում, ոչնչացում, վնասում կամ առաջացել է մարդու մահ կամ առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնասի պատճառում կամ այլ ծանր հետևանք՝
պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:
2. Միջուկային, քիմիական, կենսաբանական կամ զանգվածային ոչնչացման այլ տեսակի զենք կամ զանգվածային ոչնչացման զենք ստեղծելիս օգտագործվող կամ դրան օժանդակ որևէ նյութի կամ սարքի պահպանության պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, եթե հանցավորի դրսևորած անզգուշության հետևանքով տեղի է ունեցել այդ առարկայի հափշտակում, ոչնչացում, վնասում կամ առաջացել է մարդու մահ կամ առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնասի պատճառում կամ այլ ծանր հետևանք՝
պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:

**Հոդված 338. ~~Հրազեն, դրա~~ Զենք, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասեր, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթեցման սարքեր հափշտակելը**

1. ~~Հրազեն, դրա~~ Զենք, հրազենի հիմնական բաղկացուցիչ մաս, ռազմամթերք, պայթուցիկ նյութ կամ պայթեցման սարք հափշտակելը՝
պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝
1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,
2) բռնություն գործադրելով կամ բռնություն գործադրելու սպառնալիքով,
3) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ
4) տեխնիկական միջոցի, հատուկ հարմարեցված սարքավորման կամ այլ առարկայի կամ միջոցի գործադրմամբ կամ այլ եղանակով գույքի պաշտպանության կամ պահպանման համար նախատեսված սարքավորումը, համակարգը, կառույցը կամ այլ միջոցը ոչնչացնելով, վնասելով կամ շրջանցելով՝
պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:
3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից՝
պատժվում է ազատազրկմամբ՝ վեցից տասներկու տարի ժամկետով:

**Հոդված 339. ~~Հրազեն, դրա~~ Զենք, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասեր, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթեցման սարքեր շորթելը**

1. ~~Հրազեն, դրա~~ Զենք, հրազենի հիմնական բաղկացուցիչ մաս, ռազմամթերք, պայթուցիկ նյութ կամ պայթեցման սարք շորթելը՝
պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:
2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝
1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ
2) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով՝
պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:
3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից՝
պատժվում է ազատազրկմամբ՝ վեցից տասներկու տարի ժամկետով:

**Հոդված 340. Ռազմական նշանակության արտադրանքի, տեխնիկայի, ~~հրազենի~~ զենքի կամ այլ նյութերի, սարքերի, առարկաների, ապրանքների մաքսանենգությունը**

1. Ռազմական նշանակության արտադրանքի, տեխնիկայի, պայթուցիկ նյութի կամ պայթեցման սարքի, ~~հրազենի կամ դրա բաղկացուցիչ մասի~~ զենքի, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերի, ռազմամթերքի, ռադիոակտիվ նյութի կամ ռադիոակտիվ աղբյուրի, միջուկային նյութի, խիստ ներգործող, թունավոր նյութի, զանգվածային ոչնչացման զենքի կամ դրա փոխադրման հրթիռային համակարգեր ստեղծելու համար օգտագործվող նյութի կամ սարքի, միջուկային, քիմիական, կենսաբանական կամ զանգվածային ոչնչացման այլ զենքի կամ երկակի նշանակության ապրանքի մաքսանենգությունը՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով կամ Հայաստանի Հանրապետության պետական

սահմանով դրանք ապօրինի տեղափոխելը, որը կատարվել է առանց մաքսային հսկողության կամ դրանից թաքցնելով կամ դրանց մասին հավաստի տեղեկությունը սահմանված կարգով չհայտարարագրելու կամ ոչ իր անվամբ հայտարարագրելու կամ դրանց տեղափոխման համար սահմանված կանոնը, այդ թվում՝ արգելքը կամ սահմանափակումը խախտելու կամ մաքսային կամ այլ փաստաթղթերը խաբեությամբ օգտագործելու միջոցով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

2) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ

3) շանտաժով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից՝

պատժվում է ազատազրկմամբ՝ վեցից տասներկու տարի ժամկետով: